ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՄՀԵՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔ

9(56)
Ռ-53
h2

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՄՀԵՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔ

5205

ԵՐԵՎԱՆ ՎՄՎ-Պրինտ
2015

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 537

Գիրքը հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ
Մ537 Օսմանյան Կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք/Ռ. Մելքոնյան, Մ. Աբրահամյան.- Եր.: ՎՄՎ- Պրինտ, 2015.- 240 էջ:

Գրքում ներկայացվում է թուրքական պետական քաղաքականության կարևոր բաղադրիչներից մեկը՝ ոչ մուսուլման ազգերի բռնի կրոնափոխությունը (իսլամացումը), որը տարբեր դարերում կիրառվել է նաև հայության նկատմամբ: Այս շարունակական քաղաքականությունը հատկապես ակտիվ է դրսևորվել Հայոց ցեղասպանության տարիներին, ինչի հետևանքով հազարավոր հայեր բռնի իսլամացման են ենթարկվել: Գրքում ի ցույց են հանվում բռնի կրոնափոխության մեթոդները, թիրախային խմբերը: Հայերի բռնի իսլամացման խնդիրը դիտարկվում է ցեղասպանություն հանցագործության միջազգայնորեն ընդունված սահմանման համատեքստում, համաձայն որի նաև կրոնափոխության միջոցով որևէ ազգի բռնի ուծացումը ցեղասպանական արարք է:

Գիրքը նախատեսված է արևելագետ-թուրքագետների, պատմաբանների, ցեղասպանագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-60-326-1

© **Մելքոնյան Ռ., Աբրահամյան. Մ.**, 2015

«Հրատարակութիւն Հայաստանեայց
Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի
Արեւելեան Թեմի
«Զգօն Եպս. Տէր Յակոբեան» Հիմնադրամի»

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայոց ցեղասպանության 100-ամյակը մի յուրահատուկ հանգրվան է, երբ մենք՝ հայերս, պետք է ի մի բերենք ցեղասպանություն հանցագործության տարատեսակ կողմերը բացահայտող հետազոտությունները, մատնանշենք այդ խնդրի քիչ ուսումնասիրված ուղղությունները, էլ ավելի հստակ ուրվագծենք արդար պահանջատիրության և փոխհատուցման ճանապարհները: Այդ առումով կարևոր է հստակ ցեղասպանական մի արարքի՝ հայերի բռնի կրոնափոխության խնդրի ուսումնասիրությունը: Մեր սույն աշխատությունը մի համեստ փորձ է հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն աղբյուրների, արխիվային փաստաթղթերի, ուսումնասիրությունների, ինչպես նաև պատմական Հայաստանի տարբեր վայրերում իրականացված գիտահետազոտական աշխատանքների հիման վրա ներկայացնել Օսմանյան կայսրությունում դարերով կիրառված և 1894-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին մեծ ծավալներ ընդգրկած այդ ցեղասպանական արարքի տարբեր կողմերը:

Այդ կարևոր աշխատանքը հնարավոր դարձավ իրականացնել «Զգոն եպիսկոպոս Տեր Հակոբյան հիմնադրամի» գործուն և սիրահոժար աջակցությամբ, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը: Միևնույն ժամանակ մեր որդիա-

կան սերն ու երախտագիտությունն ենք հայտնում Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին, ով մեծապես օգնեց սույն ձեռնարկի ի կատար ածելու գործին: Հատուկ երախտագիտություն ենք հայտնում նաև Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանին, ում շնորհակալ ձեռնարկները և աջակցությունը հայաստանյան գիտակրթական համակարգին մեծապես արժևորվում և երախտագիտությամբ են ընդունվում հայ գիտնականների ու հատկապես թուրքագետների տարբեր սերունդների կողմից:

Ռուբեն Մելքոնյան

բ.գ.թ., դոցենտ

ԱՌԱՋԱԲԱՆ

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը բազմիցս բախվել է նվաճողների կրոնական կամ դավանանքային պարտադրանքին դիմակայելու խնդրին: Եթե հայերի նկատմամբ դավանանքային հալածանքները հիմնականում կիրառվում էին հավատակից քրիստոնյա պետությունների կամ տիրակալների կողմից, ապա արդեն իսլամադավան նվաճողների՝ դեպի Հայկական լեռնաշխարհ արշավանքների ժամանակ առաջ եկավ նաև կրոնական հալածանքի (բռնի իսլամացման) խնդիրը: Աղբյուրները փաստում են, որ մինչև 11-րդ դարը հայերի նկատմամբ բռնի իսլամացման լայնածավալ քաղաքականություն չի կիրառվել, սակայն արձանագրվել են առանձին դեպքեր: 11-րդ դարում Հայկական լեռնաշխարհ և Փոքր Ասիա թյուրքական ցեղերի ներխուժումից հետո իսլամի հարկադրման երևույթն ավելի լայն տարածում է գտնում: Սելջուկյան, այնուհետև նաև օսմանյան պետություններում դարեր շարունակ թուրքերը թվաքանակով զգալիորեն զիջում էին տեղի քրիստոնյա բնակչությանը, ինչը դիտվում էր որպես սպառնալիք: Այդ պատճառով արդեն սելջուկյանների տիրապետության ժամանակ դրվեցին այն հիմքերը, որոնք հետագայում բռնի իսլամացումը դարձնելու էին թյուրքական տիրակալների էթնոքաղաքականության կարևորագույն բաղադրիչ: Փաստերը ցույց են տալիս, որ ի սկզբանե իսլամա-

ցումը տեղի է ունեցել երկու մեթոդով՝ բռնի և «կամովին»: Հարկ է դիտարկել, որ եթե բռնիի դեպքում քրիստոնյան ընտրություն էր կատարում կյանքի և մահվան միջև, ապա «կամովինի» դեպքում արդեն պայմաններն էին նրան ստիպում գնալ կրոնափոխության, այսինքն՝ ըստ էության, «կամովին»-ը ևս բռնի իսլամացման տարբերակներից մեկն էր: Նկատենք նաև, որ բռնի կրոնափոխությունն ընդհանրապես ուծացման քաղաքականության, թերևս, առաջին բաղադրիչն է: Անշուշտ, լեզվի կամ մշակույթի կորուստը դեպի ուծացում տանող կարևոր հանգամանքներից է, սակայն կրոնն ուներ և այժմ էլ ունի անհամեմատ ավելի մեծ նշանակություն: Այս մասին արևելագետ Ա. Խաչատրյանն արել է հետևյալ դիտարկումը. *«Քրիստոնեությունը հայերի համար ոչ միայն դավանանք էր, այլև աշխարհայացք, ազգային գոյության հիմք: Այդ պատճառով էլ հավատափոխությունը միջնադարյան Հայաստանում գրեթե համազոր էր ազգային դիմախեղման: Այլ կրոնին հարել նշանակել է ազգությունը փոխել: Քրիստոնյա, ընդ որում՝ լուսավորչական լինելը դիտվել է որպես հայության չափանիշ: Դավանափոխությունը, հետևաբար, որակվել է որպես ազգուրացություն և դավաճանություն»*[1]:

[1] Խաչատրյան Ա., Հայերի մահմեդականացումը միջնադարյան Հայաստանում (8-15-րդ դդ.), Իրան-նամէ, Երևան, 1993, թիվ 1, էջ 26:

Ոչ մուսուլման ժողովուրդների բռնի իսլամացման քաղաքականությունն էլ ավելի կարևորվեց և սկսեց պետականորեն կիրառվել հատկապես Օսմանյան կայսրությունում: Շարժառիթը սկզբնական շրջանում նույնն էր՝ նվաճված տարածքներում փոքրամասնությունից մեծամասնության վերածվելը: Բռնի իսլամացման քաղաքականության որդեգրումը, մշակումը, զարգացումը, ըստ էության, օսմանյան պետության կայացման և անվտանգության կարևոր գրավականներից էին: Պատմաբան Ա. Թոյնբին, խոսելով օսմանյան պետության կայացման ժամանակաշրջանի մասին, դիպուկ նկատել է. *«Էրթողրուլի որդի Օսմանի մի խումբ քոչվորները չէին կարող կառուցել կայսրություն առանց մշտապես իրենց թիվն ավելացնելու»*[2]: Հայ ուսումնասիրող Գ. Ամատունին, իր ուշագրավ հոդվածաշարում անդրադառնալով թուրքերի կողմից կիրառված բռնի իսլամացման քաղաքականության պատճառներին և նպատակներին, իրավացիորեն նկատում է. *«Օսմանցիք ԺԵ. դարու սկզբին, երբ իրենց իշխանութիւնը ամրապնդեցին, մտահոգուեցան իրենց թիւի սակաւութիւնից: Ուստի միջոցներ ձեռք առին քրիստոնեաների թիւը պակասեցնելու: Նրանք ընդգրկեցին մի քաղաքականութիւն, որի նպատակն էր այլակրօն ժողովուրդները կամ բնաջնջել եւ կամ էլ բռնի իսլամացնել: Եւ յետագա-*

[2] Toynbee A., The Ottoman Empire's Place in World History; The Ottoman State and Its Place in World History, Leiden, E.J. Brill, 1974, p. 23.

յում թուրքերի համար Օսմանեան պետութեան թրքացումը իրենց ներքին քաղաքականութեան հիմնաքարը արին, նշանաբանը դարձրին»[3]: Գ. Ամատունին, նաև համեմատելով սելջուկյան և օսմանյան շրջաններում տեղի ունեցած բռնի իսլամացումները, արդարացիորեն նշում է դրանց ծավալների լուրջ տարբերությունը. *«Իրանցից առաջ (*օսմանյան թուրքերից- Ռ.Մ., Մ.Ա.), *սելճուքեան թուրքերն էլ քաջալերել էին քրիստոնեայ ժողովուրդների բռնի իսլամացումը, բայց այդ միջոցը կազմակերպուած եւ մասսայական չէր եղել»*[4]:

Հետզհետե բռնի իսլամացման քաղաքականությունն Օսմանյան կայսրությունում է՛լ ավելի էր ամրապնդվում և դառնում պարբերական: Վաստակաշատ թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանն այս մասին նշում է. *«Քրիստոնյաների բռնի մահմեդականացումը կազմում էր հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մասը, որն իր վերջնական տեսքով հանդես եկավ ավելի ուշ»*[5]: Օսմանյան պետական մեքենան շարունակ կատարելագործում և ավելի մշակված տեսք էր տալիս կրոնափոխության քաղաքականությանը: Բռնությամբ իսլամ տարածելու մոլուցքն Օսմանյան կայսրությունում էլ ավելի սրվեց 16-րդ դարում, երբ 1516 թ. սուլթան Սելիմ I-ը յուրացրեց խալիֆի՝ համայն մուսուլմանների առաջնորդի տիտղոսը: Այդ ժամանակներից սկսած՝ թուրքերը փորձեցին ստանձնել նաև քրիստոնեության և քրիստոնյաների դեմ պայքարի առաջամարտիկի դերը: Այդ պայքարի առաջին բաղկացուցիչն Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների բնաջնջումը կամ էլ բռնի իսլամացումն էր, և պատմաբան Ս. Պողոսյանի հետևյալ հետաքրքիր դիտարկումը լավագույնս բնորոշում է պետական ձևավորված մտածելակերպը. *«Օսմանյան պատմությունը նաև հպատակ քրիստոնյա ժողովուրդների բռնի կրոնափոխության ու թուրքացման պատմություն է»*[6]: Սակայն դիպուկ է նաև Պողոսյանի մեկ այլ գնահատականը, որը կրկին խոսում է օսմանյան պետական մեքենայի ցեղասպան բնույթի մասին. *«Հպատակ ժողովուրդների թուրքացումը ոչ թե օսմանցի այս կամ այն միապետի «ճաշակի» դրսևորումն էր, այլ թուրքական պետական քաղաքականություն»*[7]:

Օսմանյան կայսրությունում ոչ մուսուլման ժողովուրդները մուսուլմանների համեմատ գտնվում էին անհավասար դիրքերում: Դա արտահայտվում էր ինչպես հարկային, այնպես

[3] Ամատունի Գ., Դարերու ընթացքին թրքացած հայեր, քրտացած հայեր, Նայիրի, Բեյրութ, 15, 05, 1980, թիվ 1-2, էջ 13:

[4] Նույն տեղում:

[5] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009, էջ 111:

[6] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, 2008, հ. 1, էջ 287:

[7] Նույն տեղում, էջ 294:

էլ իրավական դաշտում: Թուրքագետ, պատմաբան Հովհաննես Ինճիկյանը նկատում է, որ Օսմանյան կայսրության քաղաքացիների միջև պետության կողմից հստակ դրված խտրականության հիմքը կրոնն էր, այսինքն՝ կրոնական պատկանելությամբ էին որոշվում քաղաքացու իրավունքները[8]: Ըստ Ինճիկյանի, գերնպատակ համարելով մուսուլման մեծամասնության ձևավորումը՝ *«թուրք վերնախավն անում էր ամեն ինչ, որպեսզի ձուլի, թուրք և մահմեդական դարձնի իր հպատակ այլադավան ժողովուրդներին»*[9]: Այս անհավասար վիճակն էլ հենց այն դրդիչ ուժն էր, որ ստիպում էր քրիստոնյաներին դիմել «կամովին» կրոնափոխության: Սակայն այստեղ հարկ է կատարել մի կարևոր դիտարկում. Օսմանյան կայսրությունում քրիստոնյաները մուսուլմանների համեմատ վճարում էին բազմապատիկ ավելի շատ և բարձր հարկեր: Փոխելով կրոնը և իսլամ ընդունելով՝ նրանք դառնում էին օսմանյան հասարակության ավելի արտոնյալ խավի ներկայացուցիչ և զերծ մնում տարատեսակ հարկեր վճարելուց: Եթե հարցը դիտարկում ենք տնտեսական տեսանկյունից, ապա կայսրության մուսուլման ղեկավարությանը ձեռնտու չէր քրիստոնյաների իսլամացումը, որը հանգեցնելու էր հարկային եկամուտների նվազելուն: Ինչպես նկատում

[8] Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 51:
[9] Նույն տեղում, էջ 71:

է պատմաբան, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը. *«Մուսուլմանները, ելնելով հատկապես տնտեսական արտոնություններից, շահագրգռված չէին կրոնադարձության միջոցով իրենց շարքերը համալրելու քրիստոնյաներով»*[10]: Անդրադառնալով այս խնդրին՝ ռուս հայտնի արևելագետ Վլադիմիր Գորդլևսկին նշում է. *«Այդ քաղաքականությունը նյութական վնաս էր հասցնում պետական գանձարանին. կրոնափոխներն ազատվում էին քրիստոնյաներից գանձվող խարաջից և ջիզիեից»*[11]: Մեր կարծիքով՝ և՛ Սելջուկյան սուլթանությունում, և՛ Օսմանյան կայսրությունում իշխանությունները կանգնած են եղել տնտեսական ու քաղաքական շահերի միջև երկընտրանքի առջև. մի կողմից քրիստոնյաներից գանձվող մեծ հարկերն էին, մյուս կողմից՝ մուսուլման մեծամասնություն ձևավորելու ձգտումը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, թուրքական տարբեր իշխանություններ մեծ մասամբ նախապատվությունը տվել են քաղաքական և ժողովրդագրական գերակայություններին՝ որդեգրելով բռնի իսլամացման քաղաքականությունը, որի արդյունքում իրենց նվաճած տարածքներում ավելացավ իսլամադավան բնակչությունը:

[10] Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 95:
[11] Гордлевский В., Избранные сочинения, Москва, 1962, том III, стр. 41.

Հայերի կրոնափոխության խնդրի մասին խոսելիս ավելորդ չէ նաև անդրադառնալ Օսմանյան կայսրությունում 15-րդ դարից գործած «միլլեթների» համակարգին, համաձայն որի՝ պետությունն իրավական տեսանկյունից ճանաչում էր հայ առաքելական համայնքը (հետագայում՝ 19-րդ դարի առաջին կեսին, նաև հայ կաթոլիկ և հայ ավետարանական համայնքները)՝ նրան շնորհելով միլլեթի[12] (ազգի) կարգավիճակ, որը ենթադրում էր որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Միլլեթների համակարգը ձուլումից զերծ մնալու որոշակի հնարավորություն էր ստեղծում հայերի համար՝ խոչընդոտելով 19-րդ դարի օսմանյան «բարեփոխիչների» կողմից լայնորեն քարոզվող օսմանիզմի՝ օսմանյան պետության տարածքում ապրող բոլոր ժողովուրդներին իշխող՝ թուրք ազգի մեջ տարրալուծելու քաղաքականությանը: Արդեն 19-րդ դարի կեսերին թուրք քաղաքական գործիչների կողմից կարծիքներ էին հնչում միլլեթների կարգավիճակի փոփոխության և արտոնությունների վերացման վերաբերյալ[13]: Օսմանյան իշխանությունները, որպես կանոն, չէին խրախուսում կայսրության հպատակների անցումը մեկ միլլեթից այլ միլլեթ, բայց նույնիսկ թուրք պատմաբանների վկայությամբ՝ «խրախուսում» էին նրանց կողմից իսլամի ընդունումը[14]: Փաստորեն, փոխելով կրոնը՝ հայերը հայտնվում էին հայկական միլլեթից դուրս և ինքնաբերաբար համարվում մուսուլմանական ումմայի՝ իշխող կրոնական համայնքի անդամ:

Խոսելով Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներին բռնի իսլամացնելու դարավոր քաղաքականության մասին՝ պետք է ընդգծել, որ կրոնի այդօրինակ հարկադրանքը չի խրախուսվում նաև շարիաթի սկզբունքներով: Կրոնական օրենքների և օսմանյան պետական քաղաքականության հակասության մասին արևելագետ, պատմաբան Վահան Բայբուրդյանը հետևյալ կարծիքն է հայտնում. *«Աբդուլ Համիդը այն աստիճանի աղճատեց մահմեդական սկզբունքները, որ հայերին ստիպում էր զենքի սպառնալիքի ներքո ընտրություն կատարել մահվան և իսլամն ընդունելու մեջ»*[15]:

---

[12] Միլլեթ եզրը օգտագործվել է թե՛ ազգ, ազգություն, ժողովուրդ, և թե՛ «կրոնական համայնք» իմաստներով՝ օսմանյան ժամանակաշրջանում արտահայտելով նաև դավանանքային պատկանելություն: Ժամանակակից թուրք պատմագրության մեջ միլլեթների համակարգի լուսաբանումը մասնավորապես տե՛ս Ортайлы И., Система миллетов в Османской империи: Особенности формирования и устройства.- Вестник Московского Университета, серия 13, Востоковедение, 3/1995, стр. 66-68, Sonyel S., Minorities and the Destruction of The Ottoman Empire, Ankara, 1993.

[13] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 58:

[14] Ортайлы И., Система миллетов в Османской империи: Особенности формирования и устройства.- Вестник Московского Университета, серия 13, Востоковедение, 3/1995, стр. 66-68.

[15] Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 578:

Բռնի իսլամացման քաղաքականությունն ավելի սրվեց Օսմանյան կայսրության անկմանը զուգահեռ[16] և ոչ մուսուլման ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ծավալման ժամանակ: Բռնի կրոնափոխության քաղաքականությունը հայերի նկատմամբ սուր կերպով դրսևորվեց հատկապես 19-րդ դարի վերջից սկսած և մինչև 1920-ական թվականները տևած Հայոց ցեղասպանության տարիներին: Այդ քաղաքականության սրացման վրա ազդեց նաև սուլթան Աբդուլ Համիդ II-ի որդեգրած պանիսլամիզմի գաղափարախոսությունը: Միևնույն ժամանակ, մենք հակված ենք կարծել, որ կրոնափոխության հարցում օսմանյան սուլթանների և բարձրագույն պաշտոնյաների անձնական դերակատարումը հասել էր նվազագույնի, քանզի իսլամացումն արդեն ձեռք էր բերել դարերով փորձարկված ու մշակված քաղաքականության տեսք, որի հիմնական իրականացնողը ամբողջ պետական մեքենան էր:

Կարող ենք փաստել, որ Օսմանյան կայսրությունում հայերի բռնի կրոնափոխությունն անընդհատ գործընթաց է եղել և կիրառվել է տարբեր փուլերով: Թուրքագետ Լուսինե Սահակյանը, ուսումնասիրելով Օսմանյան կայսրությունում հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը, այն բաժանում է երեք փուլի. *«Առաջին՝ 15-17-րդ դարեր, երկրորդ շրջան՝ 18-րդ դար-19-րդ դարի կեսեր, երրորդ շրջան՝ 19-րդ դարի վերջ և մինչև 20-րդ դարի կեսեր»*[17]: Եթե առաջին փուլում բռնի կրոնափոխությունն արվում էր հիմնականում ժողովրդագրական նպատակներով, ապա երկրորդ փուլում դրա պատճառներն առավելապես աշխարհաքաղաքական վիճակի փոփոխությունից էին բխում, իսկ երրորդ փուլը հիմնված էր թուրքիզմի գաղափարախոսության վրա[18]:

Կարևոր է նկատել նաև, որ 1923 թ. հիմնադրված Թուրքիայի Հանրապետությունում գոյատևած հայության բեկորների նկատմամբ երկար տասնամյակներ շարունակվեցին հալածանքի նույն մեթոդները, այդ թվում և բռնի կրոնափոխությունը: Մահվան սպառնալիքի կամ տարատեսակ ճնշումների հետևանքով 1930-ականներին, 1950-ականներին և ավելի ուշ արձանագրվել են հայության որոշակի խմբերի բռնի իսլամացման դեպքեր: Դրանք հստակ եղել են թուրքական պաշտոնական քաղաքականության դրսևորումներ, իրականացվել են պետական տարբեր կառույցների լծակների կիրառմամբ:

---

[16] Кондакчян Р., Турция: внутреняя политика и ислам, Ереван, 1983, стр. 22.

[17] Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, հ. 4, էջ 217-218:

[18] Նույն տեղում:

Հայերի բռնի իսլամացման խնդրի կարևորագույն կողմերից ենք համարում այն հանգամանքը, որ դա ***հստակ ցեղասպանական արարք*** է, որը տեսական ցեղասպանագիտության կողմից վաղուց արդեն ստացել է համապատասխան սահմանում: Այսպես, ՄԱԿ-ի կողմից ցեղասպանության կոնվենցիայի առաջին նախագիծը պատրաստվել է 1947 թ., որին գործուն մասնակցություն է ունեցել Ռաֆայել Լեմկինը, և այդ ժամանակ նախագծի մեջ տեղ է գտել «մշակութային ցեղասպանություն» եզրույթը, որը սահմանել է մի քանի հանցանքներ: Մասնավորապես՝

1. Էթնիկ խմբի մայրենի լեզվի արգելումը կամ խոչընդոտումը,
2. Երեխաներին այլ էթնիկ խումբ տեղափոխելը,
3. Խմբի մշակույթը ներկայացնող մարդկանց աքսորը,
4. Խմբի մայրենի լեզվով գրքերի կամ կրոնական երկերի համակարգված ոչնչացումը,
5. Խմբի կրոնական և պատմական կոթողների քանդումը կամ էլ այլ նպատակների համար ծառայեցնելը և այլն[19]:

Այս սահմանումները առաջ են բերել տարատեսակ բանավեճեր և ի վերջո «մշակութային ցեղասպանություն» տերմինը այդ բովանդակությամբ չի ընդունվել: Սակայն երեխաներին այլ խումբ տեղափոխելու դրույթը հետագայում տեղ է

[19] Akçam T., Ermenilerin Zorla Müslümanlaştırılması: Sessizlik, İnkâr ve Asimilasyon, İstanbul, 2014, s. 82-83.

գտել ցեղասպանության կանխարգելման կոնվենցիայում: Ուշագրավ է նաև, որ կոնկրետ այս դրույթը, ըստ էության, գործածվել է Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, որտեղ նացիստների կողմից սլավոն երեխաների բռնի գերմանացումը որակվել է որպես ցեղասպանական արարք[20]: Լեմկինը փաստորեն ձուլելը և կոնկրետ մեկ էթնիկ խմբին այլ էթնիկ խումբ տեղափոխելը համարել է ցեղասպանություն: Ըստ թուրք պատմաբան և ցեղասպանագետ Թաներ Աքչամի՝ Լեմկինի տեսության մեջ կիրառվող ազգազրկում (denationalization) տերմինը Հայոց ցեղասպանության պարագայում կարող է ընկալվել և տարածվել հենց բռնի թուրքացման երևույթի վրա[21]: Թաներ Աքչամն իրավացիորեն նկատում է, որ Լեմկինը ցեղասպանությունը հասկանում էր ոչ թե որպես մեկ գործողություն, այլ իբրև շաղկապված գործողությունների շարք[22]: Այդ նույն համատեքստում կրկին Լեմկինը սահմանում է ցեղասպանության փուլերը. «*Ցեղասպանությունը երկու փուլ ունի. մեկը ճնշվող խմբի ազգային պատկերի ոչնչացումն է, մյուսը՝ ճնշողի ազգային պատկերի պարտադրումը*»[23]: Ճնշողի ազգային պատկերի բաղադրիչ տարրերից են կրոնը, լեզուն, կենսակերպը և դրանց պարտադրումն էլ, ըստ էության, հենց ձուլումն է իր տարբեր տե-

[20] Նույն տեղում, էջ 86:
[21] Նույն տեղում, էջ 88:
[22] Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ, Երևան, 2014, էջ xxxiii.
[23] Նույն տեղում, էջ xxxiii-xxxiv.

սակներով: Ինչպես նկատում է թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը, ցեղասպանություն պետք է բնորոշել ոչ միայն ազգին ֆիզիկապես բնաջնջելը, այլև նրա բռնի ուծացման համար պայմանների ստեղծելը[24]: Բացի այդ, կրոնափոխությունը հստակ ենթադրում էր ազգային նկարագրի ոչնչացում, այսինքն՝ լիակատար ուծացում և հայերի որոշ խմբերի պարտադրվում էր ոչ միայն ընդունել իսլամ, այլև ջնջել հայկական ինքնության հետ կապող ամեն ինչ՝ ներառյալ և անձնանունը, այդ «փրկվածները» շարունակում էին ապրել միայն որպես մուսուլմաններ, այլ ոչ թե որպես մուսուլման հայեր:

Աներկբա է, որ և՛ ցեղասպանության տերմինի կնքահայրն ու տեսաբանը, և՛ օբյեկտիվ պատմագրությունը բռնի կրոնափոխությունը համարում են ցեղասպանության մեթոդներից ու ձևերից մեկը: Նույն Թաներ Աքչամի իրավացի գնահատմամբ. «*Բռնի ձուլումը Հայոց ցեղասպանության անբաժանելի մի մասն է և կառուցվածքային տարրը*»[25]: Սակայն ընդհանրապես ձուլման և բռնի կրոնափոխության խնդիրը շատ հաճախ դուրս է մնացել և անտեսվել Հայոց ցեղասպանության հարցի ուսումնասիրությունների ժամանակ[26]:

[24] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 25:
[25] Akçam T., նշված աշխ., էջ 12:
[26] Աքչամ Թ., նշված աշխ., էջ xxxiv.

Վստահորեն կարող ենք ասել, որ Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում հայերի բռնի կրոնափոխության խնդրի ուսումնասիրությունն արդիական է ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական առումներով: Բազմաթիվ հայ գիտնականներ տարբեր տարիներին հանդես են եկել սույն թեմայի առավել համակողմանի ուսումնասիրության կոչերով: Թեման արդիական է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և փոխհատուցման խնդրի համատեքստում:

Մեր ուսումնասիրության հիմնական նպատակն է ցույց տալ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ բռնի իսլամացման քաղաքականության ձևավորումը, զարգացումը, ինչպես նաև դրա կոնկրետ կիրառումը: Աշխարհաքաղաքական, պատմական իրադարձությունների ներկայացման համատեքստում վերլուծվում է օսմանյան պետությունում ոչ մուսուլման ժողովուրդների հանդեպ կիրառված բռնի կրոնափոխության քաղաքականության աստիճանական զարգացման նախադրյալները, պատճառներն ու նպատակները:

Փաստենք, որ բռնի կրոնափոխ հայերի խնդիրը տարբեր ժամանակներում իր վրա է բևեռել մասնագետների ուշադրությունը և իսլամի պարտադրանքի հետևանքով իրենց արմատներից հեռացած հայերի առանձին խմբերի մասին ար-

ժեքավոր աշխատություններ, վկայություններ, ճամփորդական նոթեր, լրագրողական հոդվածներ հանդիպում ենք սկսած 18-րդ դարից: Հիշատակման արժանի են Հակոբոս Տաշյանի[27], Մինաս Բժշկյանի[28], Ատրպետի[29], Հովակիմ Հովակիմյանի[30], Սարգիս Հայկունու[31], Գրիգոր Արծրունու[32], Վլադիմիր Գորդլևսկու[33] աշխատանքները: Մեր սույն ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել օսմանյան արխիվային փաստաթղթեր ներառող թուրքերեն աշխատությունները[34], օսմանյան շրջանի մուսուլման պաշտոնյաների անձնական հուշերը[35], հայկական արխիվային փաստաթղթերը, Հայաստանին և հայությանը վերաբերող

[27] Տաշեան Հ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921:

[28] Բժշկեան Մ., Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819:

[29] Ատրպետ, Ճորոխի աւազանը, Վիեննա, 1929:

[30] Յովակիմեան Յ., Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պեյրութ, 1967:

[31] Հայկունի Ս., Կորած ու մոռացուած հայեր, Սեւ գետացիք, Արարատ, 1895, թիվ է (7), էջ 239-243:

[32] Արծրունի Գ., Մահմետական հայեր, Մշակ, 05,02, 1887:

[33] Гордлевский В., Избранные сочинения, т. III (История и культура), Москва, 1962.

[34] Akçam T., Ermenilerin Zorla Müslümanlaştırılması: Sessizlik, İnkâr ve Asimilasyon, İstanbul, 2014; Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005; Dündar F., Modern Türkiye'nin Şifresi: İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918), İstanbul, 2008; Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, İstanbul, 2009.

[35] Ամջա Հ., Տեղահանություն և ոչնչացում (օսմաներենից թարգմանությունը՝ Ա. Ավագյանի), Երևան, 2007, El-Chusein F., Bir Müslümanın gözüyle Ermenilerin şahadeti, Potsdam, 1922, Atay F., Zeytindağı, İstanbul, 1989, Adıvar H., Mor Salkımlı Ev, İstanbul, 2008.

միջազգային փաստաթղթերը[36], ժամանակի արևմտյան դիվանագիտական ներկայացուցիչների, միսիոներների հուշերը[37], երիտթուրքերի դատավարության փաստաթղթերը[38], ինչպես նաև ցեղասպանությունը վերապրածների անձնական հուշերը[39]:

[36] Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի (թարգմանությունը՝ Վ.Մինալյանի), Երևան, 2006, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ.Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:

[37] Դևիս Լ., Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ. (թարգմանությունը՝ Գ. Ջանիկյանի), Երևան, 2001, Մկրտիչեան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիւրտերու գազանութիւնները, Գահիրե, 1919, Մորգենթաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները (թարգմ.՝ Ենովք Արմեն), Երևան, 1990, Յոհաննսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, 2008, Duckett F., The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909, Yerevan, 2009, Holmes M., Urfa'da Ermeni Yetimhanesi (1919-1921), İstanbul, 2005:

[38] Հայոց ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի), Երևան, 1989, Գրիկէր, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011:

[39] Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալեաթ փաշա, Երևան, 1990, Զավէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, Մինախորեան Վ., 1915 թւականը. արհաւիրքի օրեր, Թեհրան, 2006, Պալաքյան Գ., Հայ գողգոթան: Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն..., Երևան, 1991, Ավագյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000, Օտեան Ե., Անիծեալ տարիներ (1914-1919). անձնական յիշատակներ, Երևան, 2004, Растерзанная Армения,

Օսմանյան կայսրության՝ ազգային ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վարած բռնաճնշումների, ուծացման և ցեղասպանական քաղաքականությունը համակողմանիորեն լուսաբանվել է Ջոն Կիրակոսյանի[40], Մանվել Զուլալյանի[41], Հրաչիկ Սիմոնյանի[42], Ռուբեն Սաֆրաստյանի[43] հիմնարար աշխատություններում: Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության վերաբերյալ արժեքավոր վերլուծություններով հանդես է եկել ճանաչված հայ ցեղասպանագետ Վահագն Դադրյանը[44]: Համշենահայերի բռնի կրոնափոխության հարցին են

Ереван, 2005, Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Գահիրէ, 1909, Եսայան Զ., Ավերակներուն մեջ, Երևան, 2006:

[40] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, հ. 1: Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, հ. 2: Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967: Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980:

[41] Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIIIդդ., Երևան, 1980: Զուլալյան Մ., «Դեշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1959, թիվ 2-3, էջ 247-256:

[42] Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009:

[43] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009:

[44] Dadrian V., Soykırımın kurbanları çocuklar; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 311-332. Dadrian V., Genç Türk ittihadcıları gizli konferansı ve I. Dünya savaşı Ermeni soykırımı kararı;

նվիրված համշենահայոց խնդիրների բազմամյա ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանի մենագրությունն[45] ու հոդվածները[46]: Իրենց արժեքավոր հոդվածներով համշենահայերի պատմության տարբեր կողմերն են լուսաբանում թուրքագետ Լուսինե Սահակյանն[47] ու ամերիկահայ ուսումնասիրող Հովհան Սիմոնյանը[48]: Թուրքիայում բնակվող բռնի իսլամացված ու ծպտյալ հայերի խնդիրներն է ուսումնասիրում և արժեքավոր մենագրությամբ է հանդես եկել Կարեն Խանլարյանը[49]: Միջնադարում հայերի էթնո-կրոնական վերակերպումներին նվիրված արժեքավոր հոդվածների և անդրադարձների հեղինակ է Աշոտ Մելքոնյանը[50]:

Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 333-359.

[45] Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009:

[46] Վարդանյան Ս., Նախկին Խորհրդային Միությունում բնակուող մահմեդական հայերը, Բազմավեպ, Վենետիկ, 1996, թիվ 1-4, էջ 189-200, Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, Իրան-նամէ, Երևան, 1993, թիվ 4, էջ 12-13, Վարդանյան Ս., Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, Իրան-նամէ, Երևան, 1998, թիվ 1-2-3, էջ 2-11:

[47] Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և ասիանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, հ. 4, էջ 207-228:

[48] Simonian H., Hemshin from Islamicization to the end of the nineteenth century, The Hemshin: history, society and identity in the Highlands of Norteast Turkey, London-New York, 2007, p. 52-99.

[49] Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:

[50] Մելքոնեան Ա., Համշէն. պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր), Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան - Պեյրութ, 2007, էջ 25-37:

Հարկ է հատուկ շեշտել, որ բռնի կրոնափոխ հայերի խնդիրներով ինչպես գիտական, այնպես էլ գործնական ասպարեզներում լրջորեն զբաղվել են Հայ Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան հոգևոր սպասավորները ևս. օրինակ՝ երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Առաջինը, Պոլսո Հայոց պատրիարքներ Զավեն Տեր-Եղիայանը, Գարեգին Խաչատուրյանը, Շնորհք Գալուստյանը:

Վերջին շրջանում Թուրքիայում ևս կրոնափոխ հայերի թեմայի նկատմամբ ակտիվացել է հետաքրքրությունը, ինչն էլ մի շարք թուրք հեղինակների ուսումնասիրությունների հրատարակման պատճառ է դարձել: Հարկ է նկատել, սակայն, որ այդ աշխատանքներից քչերում է պահպանվում գիտական օբյեկտիվությունը: Այնուամենայնիվ, թուրք գիտնականների մեջ ևս կան այնպիսի հեղինակներ, որոնց աշխատություններում և ուսումնասիրություններում կարելի է հանդիպել փաստերի անկողմնակալ ներկայացման, իսկ երբեմն նաև՝ համարձակ գնահատականների: Այս առումով հետաքրքիր և արժեքավոր է թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլի հոդվածը[51]՝ նվիրված 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ հայերի բռնի իսլամացումներին: Փաստենք նաև, որ Թուրքիայում սկզբնական շրջանում բռնի իսլամացված հա-

[51] Deringil S., "The Armenian Question Is Finally Closed": Mass Conversion of Armenians in Anatolia during Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies of Society and History, Cambidge, 2009, 51 (2), p. 344-370.

յերի խնդրի քննարկումներն անցնում էին բավական բարդ և առիթ էին դառնում տարատեսակ հալածանքների: 2007 թ. սպանված Հրանտ Դինքը՝ Ստամբուլի «Ակօս» թերթի խմբագիրը, այս առիթով ժամանակին նկատել է. *«Տեսնում ենք, որ ողջ մնացածների մասին խոսելն ավելի վտանգավոր է, ավելի բարդ: Թուրքիայում 1915-ին մահացածների մասին միգուցե հնարավոր լինի խոսել, սակայն ողջ մնացածների վերաբերյալ՝ երբեք»*[52]: Այսօր էլ Թուրքիայում ընթացող տարատեսակ զարգացումները ցույց են տալիս, որ բռնի կրոնափոխված հայերի հարցն օրակարգային է այդ երկրի թե՛ քաղաքական, և թե՛ գիտական շրջանակների համար: Թուրքիայի հասարակական-քաղաքական դաշտում խնդրի առնչությամբ ստեղծված վիճակի մասին թերևս դիպուկ են Թաներ Աքչամի փոքր-ինչ հեգնանքով ասված խոսքերը. *«Օր չկա, որ որոշ մուսուլմաններ չհայտարարեն, որ ունեն հայկական ծագում»*[53]:

[52] Dink H., İki yakın halk, iki uzak komşu, İstanbul, 2008, s. 61-62.
[53] Akçam T., նշված աշխ., էջ 11:

ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ ԵՎ ԲՌՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության ձևավորումը և զարգացման հիմնական միտումները 11-17-րդ դարերում

Հայ ժողովուրդն իր պատմության տարբեր շրջաններում բախվել է բռնի ուծացման քաղաքականությանը, որը իսլամադավան ցեղերի ու ժողովուրդների նվաճումներից հետո ստացել է առավելապես կրոնական երանգ: Հայաստանում հայերի բռնի իսլամացման դեպքեր արձանագրվել են արդեն իսլամադավան արաբների իշխանության շրջանում, սակայն արևելագետ Ա. Խաչատրյանը կարծում է, որ. *«Արաբական տիրապետության ժամանակ (8-9-րդ դդ.) Հայաստանում հայերի մահմեդականացման դեպքերը այնքան քիչ են, որ կարելի է ասել, թե մահմեդականացման պրոցեսը նոր էր սկիզբ առնում»*[1]: Բայց, այնուամենայնիվ, արդեն այդ ժամանակաշրջանում եղել են իսլամ ընդունած հայեր, որոնք տարբեր պաշտոններ են վարել արաբ տիրակալների մոտ[2]: Ղևոնդ պատմիչը տեղեկություններ է փոխանցում 8-րդ դարի սկզբին արաբների կողմից 35 հազար հայերի տեղահանության և բռնի իսլամացման մասին՝ առանձնացնելով նաև նրանցից մեկի՝ Վահան Գողթացու հետագայում քրիստոնեության վերադառնալու փաստը[3]:

Բռնի իսլամացման քաղաքականությունն անկյունաքարային է դառնում հատկապես թյուրքական ցեղերի՝ Հայկական լեռնաշխարհ ներխուժելուց հետո (11-րդ դար): Ավելի վաղ (Կենտրոնական Ասիայում) իսլամ ընդունած եկվոր օղուզական և թուրքմենական ցեղերը փոքրասիական տարածաշրջանում կազմում էին փոքրամասնություն, և արդեն սելջուկյան պետության ստեղծվելուն զուգընթաց առաջնային կարևորություն էր ստանում տեղական քրիստոնյա մեծամասնությանը իշխողների դավանած կրոնի՝ իսլամի պարտադրումը: Արևելագետ Վ. Բայբուրդյանի կարծիքով. *«Ռումի սելջուկյան պետության գոյության ողջ ժամանակաշրջանում Փոքր Ասիայի տեղական ոչ թյուրք բնակչությունը աստիճանաբար իսլամականացվում ու թյուրքականացվում էր»*[4]:

---

[1] Խաչատրյան Ա., նշված հոդ., էջ 26:

[2] Նույն տեղում:

[3] Առաքելեան Ս., Իսլամացած հայերու հարցը, Ազդակ (բացառիկ), Բեյրութ, 01, 01, 2008, էջ 187-188:

[4] Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 29:

Փոքր Ասիայի բնիկ ժողովուրդների կրոնափոխության հարցում որոշակի դեր էր խաղում նաև Բյուզանդիայի վարած դավանանքային, հարկային քաղաքականությունը, և այդ պատճառով երբեմն հպատակ ազգերը սելջուկներին ընդունում էին որպես որոշակի այլընտրանք[5]: Ականավոր ռուս արևելագետ Վ. Գորդլևսկին, անդրադառնալով այս խնդրին, նշում է, որ հայերը ևս *«ուրախությամբ էին ընդունում թյուրքերին»*[6]: Հայերի այս տրամադրվածության հարցում, անշուշտ, մեծ դեր էր խաղում բյուզանդական դարավոր նենգ և երկդիմի քաղաքականությունը, որը կիրառվում էր հայոց պետականության և Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: Բյուզանդիայի վարած դավանանքի հարկադրման քաղաքականությունը հայերին ստիպում էր այլընտրանք փնտրել: Տարբեր աղբյուրներում առկա տվյալները սելջուկների նկատմամբ սկզբնական շրջանում հայերի մի զանգվածի՝ առնվազն չեզոք վերաբերմունքի մասին առավելապես պետք է տեղավորել հարկադրված երկընտրանքի տրամաբանության շրջանակներում: Դ. Երեմեևը, անդրադառնալով այս խնդրին, նույնպես ընդգծում է բյուզանդացիների նկատմամբ հայերի ունեցած բացասական վերաբերմունքի իրողությունը[7]: Սակայն, այնուամենայնիվ, կարծում

[5] Երեմեև Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 100:
[6] Гордлевский В., Избранные сочинения, Москва, 1960, том I, стр. 199.
[7] Երեմեև Դ., նշված աշխ., էջ 140:

ենք, որ հայերի կողմից եկվոր նվաճող թյուրքերին «ուրախությամբ» ընդունելու ձևակերպումը սխալ է և գիտականորեն հիմնազուրկ:

Փոքր Ասիայի բնիկների իսլամացման մեջ, անշուշտ, կարևոր դեր էր խաղում նաև սելջուկների հարկային քաղաքականությունը: Այսպես, մուսուլմանները քրիստոնյաների համեմատ վճարում էին զգալի ցածր հարկեր, ունեին տարատեսակ արտոնություններ, ինչը շատերին դրդում էր փոխել կրոնը և ընդունել իսլամ[8]: Բայց ակնհայտ է, որ սա ոչ թե կամովին կրոնափոխություն պետք է համարել, այլ հարկային քաղաքականության միջոցով իսլամի պարտադրում: Վ. Բայբուրդյանի կարծիքով՝ այսպես կոչված «կամովին» կրոնափոխության մեջ իր դերն ունի նաև կարգավիճակի փոփոխության կամ բարելավման խնդիրը. *«իսլամն ընդունած նորաթուխ մահմեդականները ոչ միայն դավանափոխության ճանապարհով ձգտում էին ազատվել բյուզանդական տիրապետությամբ հաստատված իրենց ճորտական վիճակից, այլև դառնալով իսլամական համայնքի (ումմայի) լիարժեք անդամ՝ ձեռք էին բերում մահմեդականների հետ հավասար իրավունքներ»*[9]:

[8] Նույն տեղում, էջ 139-140:
[9] Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 29:

Սակայն վերոբերյալ օրինակները չեն կարող նշանակել, թե իսլամացման գործընթացն ունեցել է խաղաղ կամ միայն «կամովին» բնույթ, այլ ճիշտ հակառակը՝ հայկական միջավայրում իսլամը գերազանցապես պարտադրվել է բռնության և զենքի միջոցով: Հ. Ինճիկյանն այս առիթով գրում է. *«Բազմաթիվ են փաստերը, որոնք ցույց են տալիս, որ մահմեդականություն ընդունելու խնդրում, ֆինանսական ու նյութական գործոնին զուգընթաց, իրենց վճռական ազդեցությունն են ունեցել քաղաքական ու վարչական ճնշման ձևերը, որոնք գործադրվում էին Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրջանում»*[10]: Բռնի իսլամացման համար կիրառվել են մի քանի մեթոդներ, որոնցից տարածված են եղել մահվան սպառնալիքը, բնակչության կեսի կոտորումն ու այդպիսով մյուս կեսին իսլամ պարտադրելը և այլն: Օրինակ, Հակոբոս Տաշյանն իր գրքում բավական դիպուկ է գնահատում հայերի շրջանում իսլամի տարածման գործընթացը՝ ասելով. *«Ժողովրդեան մեծագոյն մասին դարձին (ի մահմեդականութիւն) սկզբնաւորութիւնն եղած էր կոտորածով մը, ինչպէս ամէն տեղ, ուր Մահմեդի վարդապետութիւնը պիտի մուծուէր»*[11]:

[10] Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 51:

[11] Տաշեան Հ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 57:

Հարկ է նշել, որ բռնի կրոնափոխության վերոնշյալ և հետագայում ավելի մշակված մեթոդները լայն կիրառում գտան նաև տարածաշրջանում ստեղծված թյուրքական մյուս պետությունում՝ Օսմանյան կայսրությունում, որտեղ ձուլման ենթարկվեցին միլիոնավոր քրիստոնյաներ: Թուրքագետ Ռ. Սաֆրաստյանի դիտարկմամբ՝ օսմանյան իշխանություններն արդեն 14-րդ դարից սկսեցին իրականացնել քրիստոնյա ժողովուրդների իսլամացման քաղաքականություն. *«Այս ոլորտում օսմանյանների վաչկատուն տոհմը իր գոյության հենց սկզբից հանդես բերեց բացառիկ մոլեռանդություն ու հետևողականություն»*[12]: Նորաստեղծ օսմանյան պետության արդեն առաջին սուլթանի՝ Օսմանի օրոք նկատվում էր, որ նա սկսում է օգտագործել իսլամն իր ազդեցության ոլորտներն ընդլայնելու համար. *«Օսմանի տիրույթների հարևանության մեջ գտնվող գյուղերի և ամրոցների տերերը որպես կանոն հույներ էին: Օսմանն աշխատում էր նրանց իսլամը պարտադրելու գնով հակել իր կողմը: Իսկապես, նրանցից շատերը ընդունեցին մահմեդականությունը և դարձան Օսմանին նվիրված կողմնակիցներ (օրինակ, Միխալօղլի, Մարկոզօղլի և այլ հայտնի ընտանիքները)»*[13]:

[12] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 109-110:

[13] Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 49:

Ինչպես նախորդ՝ սելջուկյան շրջանում, այնպես էլ օսմանյան տիրապետության սկզբնական տարիներին «կամովին» իսլամ ընդունելու առաջին ու, թերևս, միակ դրդիչ ուժը տարատեսակ շահախնդրություններն էին և այն արտոնությունները, որոնց արժանանում էին կրոնափոխները: Իսկ նրանց նկատմամբ, ովքեր «կամովին» չէին ընդունում իսլամ, վարում էին այնպիսի հարկային քաղաքականություն, որն ուղղակի պարտադրում էր փոխել կրոնը: Օրինակ, Հակոբ Կարնեցու մոտ տվյալներ են պահպանվել Թորթումի նահանգի հայերի բռնի իսլամացման մասին, համաձայն որի՝ կրոնափոխությունն այդ նահանգում տեղի է ունեցել 1643 թ. մոլլա Զաֆարի գլխավորությամբ. *«արար դաւտար եւ կապեաց ծանր խարաճ»: Հայոց այն մասն, որ թէեւ ազգաւ եւ լեզուաւ հայ էր, բայց վրական եկեղեցւոյ կը վերաբերէր, «ի յահէ խարաճին դարձան յօրէնս Մահմէտի»*[14]:

Ոչ մուսուլման ժողովուրդների բռնի իսլամացման օսմանյան քաղաքականության մեջ դաժանությամբ առանձնանում է մանկահավաքը (դևշիրմեն), որն, ըստ տարբեր աղբյուրների, սկսել է կիրառվել արդեն 14-րդ դարի կեսերին[15]: Ակադեմիկոս Մանվել Զուլալյանն իր բարձրարժեք հոդվածում լավագույնս ներկայացնում է այդ հարկատեսակի բնույթը. Օսմանյան կայսրության ոչ մուսուլման բնակչությունից հավաքում էին 8-20 տարեկան ամրակազմ, բարետես տղաներին, իսլամացնում, տալիս զինվորական կրթություն, և նրանցից առավել ամրակազմերից էլ ստեղծվում էր ենիչերիական հայտնի զորամիավորումը, որը կարևոր դեր է խաղացել կայսրության ներքին և արտաքին կյանքում ընդհուպ մինչև 19-րդ դարի սկիզբը[16]: Փաստորեն, կրոնափոխության առավել հարմար թիրախներից են եղել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում՝ կարելի էր ավելի հեշտ ջնջել ազգային և կրոնական դեռևս ձևավորվող ինքնագիտակցությունը: Հենց այս տրամաբանությամբ է գործել Օսմանյան կայսրությունում մեծ տարածում գտած և երկար դարեր կիրառված մանկահավաքի ինստիտուտը: Կարևոր է նկատել նաև, որ դևշիրմեն քրիստոնյա ժողովուրդների համար վտանգ էր պարունակում ոչ միայն տղա երեխաների հավաքման և թուրքացման առումով, այլև ուղղակիորեն նպաստում էր ոչ մուսուլմանների «կամովին» իսլամացմանը: Ինչպես նկատում է Վ. Բայբուրդյանը. *«Քանի որ իսլամն ընդունածների զավակները ազատվում էին մանկահավաքի ենթարկվելու վտանգից, ուստի մեծ թվով քրիստոնյա գյուղա-*

[14] Տաշեան Հ., նշված աշխ., էջ 68:

[15] Սելջուկյանների կողմից Անտիոքի գրավման ժամանակ (1085 թ.)՝ տղա երեխաներին հավաքելու փաստի մասին տե՛ս Շաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. դևշիրմե, Երևան, 2006, էջ 19:

[16] Զուլալյան Մ., «Դևշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1959, թիվ 2-3, էջ 247:

ցիներ գերադասում էին կամովին ընդունել իսլամը, քան թե կորցնել իրենց զավակներին»[17]: Այսինքն՝ սա ևս կրոնը փոխելու հարկադրանքի ձև էր, սակայն ոչ թե մահվան սպառնալիքի ներքո, այլ իրենց զավակներին ամեն պահի կորցնելու հեռանկարից խուսափելու համար: Վաստակաշատ հայ աղբյուրագետ Հակոբ Անասյանը մեջբերում է ֆրանսիացի պատմաբան Թ. Լավալեին, համաձայն որի հաշվարկների՝ Օսմանյան կայսրությունում ընդհանուր առմամբ դևշիրմեի է ենթարկվել առնվազն հինգ միլիոն քրիստոնյա երեխա[18]: Դաժան այս հարկատեսակը, որը դարձել է Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հազարավոր ընտանիքների ողբերգության պատճառ, արդարացվում և գովերգվում է թուրքական պատմագրության կողմից: Օրինակ, թուրք պատմաբան Զևադ բեյը դա համարել է լավագույն միջոց քրիստոնյաների երեխաների՝ բարձր պաշտոնների հասնելու համար[19]: Սակայն իրականությունն այն է, որ մանկահավաքն Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից քրիստոնյաների նկատմամբ կիրառված բռնի իսլամացման քաղաքականության կարևոր բաղադրիչներից էր[20]:

[17] Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 82:

[18] Անասյան Յ., Թուրքական ֆութուվվաթը և հայերը, (Օսմանեան կայսրութեան ձուլողական քաղաքականութեան պատմութիւնից), Վիեննա, 1985, էջ 6:

[19] Զուլալյան Մ., նշված հոդ., էջ 253-254:

[20] Շաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. դևշիրմե, Երևան, 2006, էջ 137:

Օսմանյան կայսրությունում ոչ մուսուլման ժողովուրդների իսլամացման ձևերից են համարվում նաև արհեստավորական համքարությունները (ֆութուվվաթ), որոնք ունեին կրոնական՝ իսլամական բնույթ: Այդ կառույցին անդամակցում էին նաև հայ վարպետներ, որոնք կարգավիճակի կամ տնտեսական շահախնդրության համար ստիպված էին լինում ընդունել իսլամ՝ անցնելով որոշակի արարողակարգ[21]: Սակայն այս թվացյալ «կամովին» իսլամացումը ևս խորքային առումով պարտադրված էր: Արևելագետ Ա. Խաչատրյանի դիպուկ գնահատմամբ. *«Քրիստոնյա իրավազուրկ արհեստավորները (այդ թվում և հայ) տնտեսական ճնշման հետևանքով և սոցիալական շահերից ելնելով, խմբերով կամ անհատապես նպատակահարմար էին գտնում ընդունել մահմեդական հավատը»*[22]:

* * *

Կրոնափոխության երևույթը չէր շրջանցում նաև բարձր խավին՝ ազնվականությանը, ինչի մասին բազմաթիվ վկայություններ կան: Օրինակ, թյուրքական «Ասք Մելիք Դանըշմեդի մասին» էպիկական պատումում տեղ են գտել մի շարք օրինակներ, որոնք ապացուցում են, որ փոքրասիական որոշ

[21] Անասյան Յ., նշված աշխ., էջ 14:

[22] Խաչատրյան Ա., նշված հոդ., էջ 26:

ֆեոդալներ, հաճախ ելնելով իրենց շահերից, փոխել են կրոնը և անցել իսլամի տարածման գործի ջատագով զորավար Դանիշմենդի կողմը[23]: Պատումում նշվում է, որ Դանիշմենդի մերձավոր զինակիցներն էին Արտուխինը, Էֆրումիյեն, Սարգիսը: Այս անուններն արդեն ցույց են տալիս դրանց տերերի քրիստոնեական և ոչ թյուրքական ծագման մասին:

Տարբեր աղբյուրներում առկա փաստերը ցույց են տալիս, որ հայ ազնվական ընտանիքների նկատմամբ կիրառվել են ինչպես մահվան սպառնալիքի ներքո բռնի իսլամացման, այնպես էլ այլ ճանապարհներով կրոնափոխության դրդող մեթոդներ: Հայտնի արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանը, անդրադառնալով այս խնդրին, նշում է. *«Հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ 15-րդ դարի ծանր պայմաններում հարկադրանքի տակ հավատափոխ էին եղել՝ իրենց ճորտագիրական իրավունքները պահպանելու նպատակով»*[24]: Օրինակ, 15-րդ դարի սկզբին Լենկ-Թեմուրի արշավանքներից հետո բազմաթիվ հայ ազնվական ընտանիքներ կանգնում են բարդ երկընտրանքի առջև. կամ պահպանել կալվածքները կրոնափոխության գնով, կամ կորցնել ամեն

[23] Гарбузова В., Сказание о Мелике Данышменде. Историко-филологическое исследование, Москва, 1959, стр. 157.

[24] Տեր-Ղևոնդյան Ա., Մահմեդական ամիրությունների բացասական դերը միջնադարյան Հայաստանի ճակատագրում, Արևելագիտության հարցեր, Երևան, 1987, պրակ 3-4, էջ 146:

ինչ: Հենց այդ շրջանում մոնղոլների պարտադրանքով կրոնափոխ են լինում Օրբելյանների իշխանական տոհմից Սմբատը, Բուրթելը և Տարսայիճը, որոնք *«հավատափոխ արված ուրիշ հայ իշխանների հետ միասին իրենց ընտանիքներով աքսորվեցին Սամարղանդ»*[25]: Հարկ է նշել նաև, որ շատ չանցած վերոհիշյալ հայ իշխանները կարողանում են ոչ միայն վերադառնալ և տեր կանգնել իրենց կալվածքներին, այլև վերընդունել քրիստոնեություն:

Իսլամացված հայ ազնվականների նոր, մուսուլմանական անուններն անգամ հաճախ հուշում են դրանց տերերի ծագման և նախկին կրոնի մասին, օրինակ՝ Սոհրաբ իբն Սմբատ[26]: Գ. Ամատունին, անդրադառնալով այս խնդրին, նշում է. *«Միջին եւ վերին Հայաստանի շատ գաւառներում (Վասպուրական, Տարօն, Բաղէշ եւ այլն) 15-րդ դարում հայ իշխանական տները քիչ բացառութեամբ մահմեդականութիւն էին ընդունել եւ մեծ մասամբ քրդացել են»*[27]: Հայազգի դիվանագետ Թ. Մկրտիչյանը նույնպես անդրադառնում է հայ ազնվականների կրոնափոխության խնդրին և նշում մի քանի օրինակ: Ըստ նրա, քրդական Ռեշքոթա աշիրեթը նախկին Ռշտունիներն են, Մամըկա աշիրեթը՝ Մամիկոն-

[25] Խաչատրյան Ա., նշված հոդ., էջ 27:

[26] Նույն տեղում:

[27] Ամատունի Գ., նշված հոդ., 15, 05, 1980, թիվ 1-2, էջ 14:

յանները և այլն[28]: Պատմաբան Ս. Պողոսյանն այս ցանկին հավելում է նաև Բագրանցի կոչված քրդական ցեղախումբը՝ փոխանցելով, որ ըստ պատմագիր Օհան արքեպիսկոպոսի, նրանք սերում են Բագրատունիների տոհմից, և մինչև 19-րդ դարի վերջերն այլ քրդական ցեղեր նրանց անվանել են միր, այսինքն՝ իշխան[29]: Իսկ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը փոխանցում է տվյալներ, համաձայն որոնց՝ Կիլիկիայի շրջանում ապրող մի քանի քրդական ցեղախմբեր ունեն հայկական ծագում, ավելին՝ «*Ավանդության համաձայն, դրանք սերված են հայ Արշակունիներից*»[30]: Հայ ազնվական ընտանիքների բռնի կրոնափոխության մասին «ժողովրդից քաղած» տվյալների ենք հանդիպում ազգագրագետ Սեյլանի դեռևս 19-րդ դարի վերջին գրած հոդվածում. «*Կարնոյ վիլայէթի, Համշէնի-Նարմանի իշխան, մի ոմն Քեշիշեանց, 17-րդ դարի վերջերին, 8-10,000 մարդով, բռնութեամբ Ղարարզիու (Կարնոյ) Տրապիզոնի կուսակալ արիւնածարաւ Լալէ-փաշային ուրանում է: Արդահանի մէջ իշխան Դէմիրճիօղլի, եօթ հարիւր ընտանիքով և մի քանի գիւղերով, Լալէից ահա-*

[28] Մկրտիչեան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիւրտերու գազանութիւնները, Գահիրէ, 1919, էջ 112-113:

[29] Պողոսյան Ս., Սև ծովից Վանա ծով. հինգ ամիս հինգ օր, Երևան, 1992, էջ 50:

[30] Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, 2009, էջ19:

բեկ՝ ընդունում է իսլամութիւն, լինում իւր երկրին փաշա. նորա ցեղի մի հատուածը գաղթած է այժմ Կարին, որի ներկայացուցիչն է Կարնոյ նախկին ոստիկան-քոմիսար Դէւրիշ-պէյ և ինձ ծանօթ փաշաների, պէյերի մի շարք»[31]:

Դ. Երեմեևը կարծում է նաև, որ քրիստոնյաների և մուսուլմանների, այսպես կոչված, մերձեցումը տեղի էր ունենում հատկապես իշխող դասակարգերի ներկայացուցիչների միջև կնքվող ամուսնությունների միջոցով, և դրա ապացույցներից է նաև այն, որ թուրք շատ սուլթանների մայրերը և կանայք եղել են քրիստոնյաներ[32]:

Սակայն հարկ է նկատել նաև, որ իշխանական տների բռնի իսլամացումը տարածված է եղել ոչ միայն հայերի շրջանում: Աղբյուրները վկայում են, որ 17-րդ դարի վերջին արդեն վրացական արքայական տոհմի՝ Բագրատիոնների մի շարք ներկայացուցիչներ, այդ թվում և Քարթլիի արքաներ Վախթանգ 5-րդը (վերանվանյալ Շահնավազ 1-ին), նրա որդի Գեորգի 11-րդը (վերանվանյալ Գորգին-խան) ստիպված ընդունել էին իսլամ[33]:

[31] Սեյլան, Տաճկա-Հայաստանի ազգաբնակութիւնները, Մուրճ, Թիֆլիս, 1895, թիվ 7, էջ 952-953:

[32] Երեմեև Դ., նշված աշխ., էջ 146:

[33] Այս մասին տե՛ս Маркарян С., Георгий XI и кандагарское восстание 1709 г., Восток, Москва, 2009, # 5, стр. 41-45.

* * *

Բռնի կրոնափոխությանը զուգահեռ՝ միշտ տեղի է ունեցել նաև մեկ այլ գործընթաց. քրիստոնեությունից բռնությամբ հեռացված մարդիկ հարմար առիթի դեպքում վերադառնում էին իրենց նախկին հավատքին[34]: Բացի այդ, կրոնափոխները երկար ժամանակ գտնվում էին կես-կես վիճակում, այսինքն՝ փորձում էին պահպանել հայկական-քրիստոնեական կենսակերպ, սովորույթներ, սակայն արտաքուստ պարտավոր էին հանդես գալ որպես թուրք-մուսուլման: Այս ամենն առաջ էր բերում մի վիճակ, երբ մարդիկ արտաքուստ մուսուլման էին, իսկ ներքուստ՝ քրիստոնյա, ընդ որում՝ դա տարածված էր ոչ միայն հայերի, այլև այլ քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես՝ հույների[35] շրջանում: Հայտնի արևելագետ Վ. Գորդլևսկին ծպտյալ քրիստոնյաների մասին իր ուշագրավ հոդվածում գրում է. *«Ծպտյալ քրիստոնյաների աղանդները ի հայտ են գալիս կայսրության* (Օսմանյան կայսրության- Ռ.Մ., Մ.Ա.) *մեկ այս ծայրագավառում, մեկ մյուս: Այդպես է եղել, օրինակ, Ալբանիայում. 18-րդ դարում այնտեղ ապրում էին մարդիկ, որոնք կատարում են իսլամական և քրիստոնեական կրոնների ծեսեր»*[36]: Ի դեպ, Գորդլևսկին նույնպես փաստում է, որ առաջին իսկ հնարավորության դեպքում բռնի կրոնափոխները խոստովանում են իրենց իրական կրոնական պատկանելության մասին[37]: Ծպտյալ հույն քրիստոնյաների ուշագրավ կենսակերպի մասին է պատմում ռուս մեկ այլ հայտնի գիտնական Պյոտր Չիխաչևը, որը 19-րդ դարի կեսին ճանապարհորդել է Օսմանյան կայսրությունում: Խոսելով մերձսևծովյան մի շարք վայրերի բնակչության մասին՝ նա նշում է. *«Նրանք բացահայտ դավանում են իսլամ և հասարակական վայրերում խոսում են միայն թուրքերեն, բայց գաղտնի կատարում են արևելյան հունական եկեղեցու ծեսեր, դանը խոսում են հունարեն, և յուրաքանչյուրը կրում է երկու անձնանուն»*[38]:

Բազմաթիվ փաստեր ապացուցում են, որ պարտադրված կրոնը՝ իսլամը, երկար ժամանակ չի կարողացել լիովին ուծացնել և թուրքացնել նախկին քրիստոնյաների մեծ մասին:

---

[34] Гарбузова В., նշված աշխ., էջ 160-161:

[35] Հույների շրջանում հատկապես հայտնի են Սև ծովի հարավարևելյան ափերին բնակվող ծպտյալ քրիստոնյաները, որոնք մասնագիտական գրականության մեջ անվանվում են ստավրիոտներ:

[36] Гордлевский В., К истории тайных христиан в Малой Азии (Из поездки в Трапезунд), Избранные сочинения, Москва, 1962, том III, стр. 327.

[37] Նույն տեղում: Բռնի իսլամացումների և ծպտյալ քրիստոնյաների վերաբերյալ Գորդլևսկու ուսումնասիրությունների մասին տե՛ս Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացումների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2009, թիվ 6, էջ 298-304: Մերձսևծովյան շրջանների ծպտյալ քրիստոնյաների մասին տե՛ս նաև, Hasluck F.W., The Crypto-Christians of Trebizond, The Journal of Hellenic Studies, New-York, 2010, vol. 41, part 2, p. 199-202.

[38] Чихачев П., Письма о Турции, Москва, 1960, стр. 23.

Սրան նպաստել են նաև ներէթնիկ ինքնագիտակցության մի շարք տարրեր, որոնք պահպանվել են բռնի կրոնափոխված-ների շրջանում: Օրինակ, Ատրպետը, խոսելով Օլթիի շրջանի բռնի իսլամացված հայերի մասին, նշում է. *«Պէտք է ասել, որ մինչեւ 1878 թ. պատերազմը եւ այդ գաւառի գրաւումը, իսլամացած ժողովուրդը երեք դարի ընթացքում ո՛չ միայն չէր կարողացել մարսել իսլամը, այլ ատում էր այդ կրօնը: Ո՛չ միայն չէր լուացւում, չէր աղօթում, ծոմ չէր պահում, փօներ կատարում, այլ մինչեւ անգամ հայհոյում էր»*[39]:

Համշենահայերի բռնի իսլամացումը

Բազմաթիվ են փաստերը, որոնք ապացուցում են Սև ծովի հարավարևելյան ափերին հնուց ի վեր հայկական ներկայության մասին: Ինչպես նկատում է Հ. Տաշյանը. *«Հայ ցեղն հնուց իսկ անհրաժեշտաբար աղերս ունենալու էր Հայաստանի սահմաններէն քիչ մը հեռու Սեւ ծովու ափանց հետ: Արդ, ճշդիվ այն ծովափը, ուր կը գտնուի հայ Համշէն, կը վերաբերէր Հայաստանի նոյն իսկ ասի պատմութեան մեջ կերեւայ առաջին անգամ Armenia ձեւով»*[40]: Մերձսևծովյան տարածքներում հայերի թիվը զգալիորեն ավելացավ

[39] Ատրպետ, Ճորոխի աւազանը, Վիեննա, 1929, էջ 196:
[40] Տաշեան Հ., նշված աշխ., էջ 9:

8-րդ դարի վերջին, երբ արաբական հարկային կեղեքումներից ազատվելու համար հայոց Շապուհ և Համամ Ամատունի իշխանները 12000 բնակչությամբ Արագածոտն և Կոտայք գավառներից արտագաղթեցին Բյուզանդիա և հաստատվեցին Սև ծովի հարավարևելյան ափամերձ Խաղտիք ծայրագավառում[41], Պարխարյան լեռների լանջերին: Ամատունի իշխաններին և նրանց առաջնորդած ժողովրդին բյուզանդական իշխանությունները ջերմ են ընդունում և, ինչպես գրում է Ղևոնդ պատմիչը. *«Եվ երբ անցան գետը, հունաց կայսր Կոստանդինը, շտապ լուր ստանալով, կանչեց նրանց, պատիվներ տվեց նախարարներին և նրանց հեծյալներին, իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց գեղեցիկ ու արգավանդ մի երկրում»*[42]: Բյուզանդական կողմի այս վերաբերմունքը, անշուշտ, ունեցել է առավել խորքային դրդապատճառներ, և այս առումով շատ համոզիչ է թվում ամերիկյան հետազոտող Ռ. Էդվարդսի հետևյալ դիտարկումը. *«Հույները կարծում էին, որ հայկական քաղաքակրթության ներթափանցումը այս շրջաններ կկասեցնի լազ ավազակների պարբերաբար տեղի ունեցող հարձակումները Խալդեայի վրա»*[43]: Ինչ-

[41] Խաչիկյան Լ., Էջեր համշինահայ պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1969, թիվ 2, էջ 115-116:
[42] Նույն տեղում, էջ 116:
[43] Edwards R., Hamšen: an Armenian enclave in the Byzanto-Georgian Pontos. A survey of literary and nonliterary sources, Le Museon: Revue D'etudes Orientales, Louvain-La-Neuve, 1988, tome 101-fasc. 3-4, p. 406.

և՛, Ամատունիները, գաղթելով այդ տարածաշրջան, հիմնում են կիսանկախ իշխանապետություն, որն իր գոյությունը պահպանել է ընդհուպ մինչև 15-րդ դարի վերջերը: Համամ Ամատունի իշխանն այնտեղ կառուցում է նաև մի քաղաք, որն իր անունով կոչում է Համամաշեն, որը հետագայում վերածվում է Համշենի: Հենց այդ անվամբ էլ շրջանի հայ բնակչությանը սկսում են անվանել համշենահայեր: Տերմինը հետագայում աշխարհագրական ավելի լայն տարածում է ստանում:

Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ պարբերաբար կիրառված տարատեսակ հալածանքներից, այդ թվում և բռնի կրոնափոխությունից, անմասն չեն մնացել նաև Համշենի հայերը: 1453 թ. թուրքերը, գրավելով Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, նոր թափով շարունակեցին իրենց առաջխաղացումը: Որոշ ժամանակ անց՝ 1461 թ., գրավեցին նաև Տրապիզոնի կայսրությունը: Կարելի է ասել, որ Սև ծովի հարավարևելյան ափերի ոչ մուսուլման բնակչության ուծացման քաղաքականության որոշակի տարրեր արդեն նկատելի էին այդ ժամանակ: Կարծիքներ կան նաև, որ բռնի իսլամացման փորձերը Համշենում սկսվել են 16-րդ դարի վերջերից[44]: Կիրառված սիստեմատիկ քաղաքականության հետևանքով թուրքերին հաջողվեց բռնի իսլամացման ենթարկել տարածաշրջանի ոչ մուսուլման մի շարք ժողովուրդների՝ հույներին, լազերին, վրացիներին և համշենահայերի մի մասին: Ինչպես իրավացիորեն նկատում է արևելագետ Ռաֆֆի Կոնդաքչյանը, թուրքերը ձգտում էին իսլամացնել հատկապես քրիստոնյա Ռուսաստանին սահմանակից ազգերին՝ ստեղծելով յուրահատուկ կրոնական պատնեշ քրիստոնեության և Ռուսաստանի դեմ[45]: Սակայն հարկ է հատուկ շեշտել, որ մերձսևծովյան ոչ մուսուլման ժողովուրդներից բռնի իսլամացման քաղաքականությանն ամենաերկարը դիմադրեցին համշենահայերը, և ավելի ուշ միայն նրանց մի հատված ստիպված կրոնափոխ եղավ:

Համշենի և մերձակա հայաբնակ շրջանների բռնի իսլամացման մասին արժեքավոր տվյալներ է փոխանցում ազգագրագետ-բանահավաք Սարգիս Հայկունին, համաձայն որի՝ Սև գետի կամ Քարա-դերեի հայության իսլամացումը տեղի է ունեցել 1708-1710 թթ. *«Սեւ գետացիք կասուին, որ Համշենցոց պես հայերէն կը խոսին եւ 1708-1710 թուականներուն թուրքացած են կրօնամոլ մօլլաներու եւ ենիչերիներու ճնշման ներքեւ»*[46]: Տարբեր աղբյուրների համաձայն, բուն

[44] Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, հ. 4, էջ 216:

[45] Кондакчян Р., Турция: внутреняя политика и ислам, Ереван, 1983, стр. 22.

[46] Հայկունի Ս., Կորած ու մոռացված հայեր, Սև գետացիք, Արարատ, Վաղարշապատ, 1895, թիվ Է /7/, էջ 239:

Համշենի կրոնափոխությունը տեղի է ունեցել Սև գետացիներից առաջ, ուստի վերաբերելու է 17-րդ դարին[47], իսկ ըստ որոշ հետազոտողների՝ ավելի կոնկրետ 17-րդ դարի սկզբին[48]: 1872 թ. պոնտահայերի մասին ուշագրավ մի տեղագրություն պատրաստած Պողոս քահանա Թումայանցը, անդրադառնալով Քարա-դերեի կրոնափոխությանը, ասում է, որ այնտեղի հայերը գաղթել են Սպերից, Բաբերդից և Համշենից. *«Համշէն մեծ գաւառէն փախչելով յատուկ կրօնափոխութենէ ազատելու նպատակով ասկէ գրեթէ 170-180 տարի առաջ»*[49]: Եթե հաշվի առնենք, որ այս տեղագիրը պատրաստվել է 1870-ականների սկզբին, ապա պարզ է դառնում, որ կրոնական հալածանքների պատճառով համշենահայերի գաղթը բուն Համշենից տեղի է ունեցել 1690-1700 թթ.: Թումայանցը նաև նշում է. *«Երբ Համշեն գաւառը մնացող ժողովուրդը ամբողջ տաճկացուցին եւ հալածանքը Գարա-տէրէի վրա դարձաւ՝ հազարաւոր ընտանիք ամէն բանէ զրկուած փախան Տրապիզոնի, Օրտուի, Ունիայի, Չարշամպայի, Պաֆուայի, Սինոպի եւ մինչեւ Ատապազարի գիւղերն ու քաղաքներ...»*: Հակոբոս Տաշյանը կարծում է, որ Համշենի բռնի իսլամացումը սկսվել է 17-րդ դարի վերջերին և շարունակվել ամբողջ 18-րդ դարի ընթացքում[50]: Համադրելով այս բոլոր տեսակետները՝ կարծում ենք, որ առավել հավանական է այն, որ Համշենի, ինչպես նաև այդ շրջանի այլ քրիստոնեաբնակ վայրերի բռնի իսլամացումն ընթացել է տարբեր ինտենսիվությամբ և ունեցել է գագաթնակետեր. Համշենի պարագայում դա կարելի է համարել 18-րդ դարի սկիզբը: Այն, որ մինչև 18-րդ դարի սկիզբը Համշենի հայության շրջանում իսլամացվածները մեծ թիվ չեն կազմել, փաստում են տարբեր աղբյուրներ, որոնց թվում խիստ կարևոր են օսմանյան աշխարհագիր մատյանները[51], որոնք ուսումնասիրել է թուրքագետ Լ. Սահակյանը: Համշենահայերի բռնի իսլամացման քաղաքականությունն ակտիվորեն դրսևորվել է նաև 19-րդ դարի վերջին քառորդին, որն իր վերջնակետին է հասել 1915 թ. Հայոց ցեղասպանության տարիներին: Բռնի իսլամացմանը զուգահեռ և դրանից խուսափելու համար համշենահայերը դիմել են նաև գաղթի, որի հետևանքով լայնացել է նրանց աշխարհագրական սփռվածությունը:

Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ Համշենում իսլամացումը տեղի է ունեցել գերազանցապես բռնի մեթոդներով,

[47] Խաչիկյան Լ., նշված հոդ., էջ 136, Edwards R., նշված հոդ., էջ 420:

[48] Benninghaus R., Turks and Hemshinli: Manipulating ethnic origins and identity, The Hemshin: history, society and identity in the Highlands of Norteast Turkey, London-New York, 2007, p. 353.

[49] Թումայեանց Պ., Պոնտոսի հայերը. Աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի, Տփղիս, 1899, գիրք Բ, էջ 175:

[50] Տաշեան Հ., նշված աշխ., էջ 30:

[51] Սահակյան Լ., նշված հոդ., էջ 212-215:

մահվան սպառնալիքի տակ: Ինչպես նշվեց, բանահավաք Ս. Հայկունին բավական մանրամասն ներկայացրել է Սև գետի շրջանում բնակվող հայերի բռնի իսլամացումը, և քանի որ այդ ցեղասպանական արարքը գրեթե բոլոր վայրերում ընթացել է նույն մեթոդներով, հարկ ենք համարում մեջբերել նրա արժեքավոր հոդվածում տեղ գտած նկարագրությունը հայերի այդ խմբի իսլամացման մասին: Հայկունին նախ նշում է, որ մուսուլման հոգևորականները մոտ տասը տարի քարոզել են Սև գետի հայերի շրջանում, իսկ այնուհետև առաջարկել են ընդունել իսլամ: Մերժում ստանալով՝ մոլեռանդ թուրք խուժանը ենիչերիների, մուսուլման հոգևորականների ուղեկցությամբ մտնում է Թորոսլի գյուղ, որտեղ ապրել և քարոզել է համշենահայերի շրջանում լեգենդար անուն ունեցող տեր Կարապետ քահանան: *«Աւագ շաբաթ օրն էր, ժողովուրդն հաւաքուած էր եկեղեցին կրօնական պաշտամանց ներկայ լինելու. տեսան շրջապատուած ամբոխն, որ կառաջարկէին եւ կըսպառնային մահմետականութիւն ընդունելու. Հայ ժողովուրդն շուարած Տէր Կարապետի երեսն կը նայէին, մօլլաներէն մին թրով մի հարուած իջեցոյց քահանայի գլխին, նա ձեռն դէմ տալով՝ կտրուեցան բազուկներն. երկրորդ եւ երրորդ հարուածին արիւնը սկսաւ ֆշշալ եւ գետին տապալեցաւ՝ որ անմիջապէս միւս մօլլաներն յօշոտեցին մաս առ մաս նորա մարմինը՝ որպէս զի երկիւղ ազդեն ամբողջ հայ ժողովրդեան վերայ: Ժողովրդեան մեծ մասը դիմադրեց թուրք ամբոխին, մերժեց նոր առաջարկութիւնը եւ մերժողի դիակը ընկաւ բարի քահանայի մասունքներու վերայ. կոտորածը ամեն կողմ սկսաւ՝ ծեր եւ մանկունք սուրերու հարուածներու տակ կը թաւալէին արեան մէջ»*[52]: Կոտորածից հետո ժողովրդի մի մասն ընկրկում է և ընդունում իսլամ, իսկ մոլեռանդ թուրք ամբոխը շարունակում է ասպատակությունը շրջակա գյուղերում. *«Իսկ այն կողմ Գարա դէրէի մէջ թուրք ամբոխը՝ ինչ արած էր Թորոսլիի, նոյնը եւս արեց հարիւրի չափ գիւղօրէից. փախչողն արդէն փախաւ՝ մէկ մասը կոտորուեցաւ՝ մէկ մասն եւս առ երես ուրացաւ, որպէս զի վտանգն դռնից հեռացնէ»*[53]:

Կան նաև փաստեր, որոնք վկայում են, որ Համշենում իրականացվել են բռնի իսլամացման քաղաքականության այլ մեթոդներ ևս. այսպես, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 1531 թվականի մի ձեռագրի մեջ վկայված է, որ Համշենում հայ բնակչության շրջանում անցկացվել են մանկահավաքներ (դևշիրմե). *«Թվին ՁԾ (-1531) սուլթան Սուլեյմանն՝ որ է Սելիմի տղայն ենիչարա համար տղայ ժողվեց ի հայոց ազգէս. այսչափ տեղացս այս տարի ժողվեցին՝*

[52] Հայկունի Ս., նշված հոդ., էջ 241:

[53] Նույն տեղում, էջ 242: Հայազգի մարտիրոսների մասին այս պատմությունը տե՛ս նաև՝ Մանանդյան Հ., Աճառյան Հր., Հայոց նոր վկաները (1155-1843թթ.), Տեր Կարապետ քահանայ թորոսլիցի, Էջմիածին, 1903, էջ 702-709:

*ու զապագայն Աստծոյ է գիտելի ի Տրապիզոնու, **ի Համշենու*** (ընդգծումը մերն է- Ռ.Մ., Մ.Ա.), *ի Սպերու, ի Բաբերդու, ի Դերջանու...»*[54]: Այս ամենին զուգահեռ նկատենք նաև, որ թուրքական իշխանությունները Համշենում ևս փորձել են կիրառել քրիստոնյաներին շահագրգռելու քաղաքականությունը, որպեսզի մարդիկ անձնական շահի համար «կամովին» իսլամ ընդունեն[55]:

Կարևոր է շեշտել, որ ներկայումս Թուրքիայի տարածքում բնակվող կրոնափոխ համշենահայերի յուրահատկություններից է այն, որ նրանց մի մասը մինչև մեր օրերը պահպանել է հայերեն խոսվածքը, հայկական, քրիստոնեական որոշ սովորույթներ: Կենսակերպի այս երկակի բնույթը պատճառ է դարձել, որպեսզի մասնագիտական գրականության մեջ նրանց երբեմն անվանեն «կես-կես»-եր: Արտաքուստ մուսուլման դարձած համշենահայերի վիճակին անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այսպես, համշենահայերի խնդրի բազմամյա ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանը հրատարակել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Պողոս վարդապետ Մեհերյանի անտիպ ուղեգրությունից մի հատված, որում նա 1776 թ. սեպտեմբերին, լինելով Համշենի Խևակ գյուղում, գրում է, որ այնտեղ ապրում էին

[54] Զուլալյան Մ., նշված հոդ., էջ 251:

[55] Թոռլաքյան Բ., Հայ ազգագրություն և բանահյուսություն, Երևան, 1981, հ. 13, էջ 67:

200 տուն մուսուլման և 5-6 տուն քրիստոնյա հայեր[56]: Թեև բնակչության մեծամասնությունը պաշտոնապես եղել է մուսուլման, բայց ինչպես նշում է հոգևորականը. *«Յաջմէ եւ յահեկէ համբուրէին զաջն իմ»*[57]: Ավելին՝ շատ իսլամացված համշենահայեր խնդրել են քրիստոնեական ծեսով օրհնել իրենց նախնիների գերեզմանները: Ավելի ուշ Մխիթարյան միաբանության մեկ այլ գործիչ Մինաս Բժշկյանը, 19-րդ դարի սկզբին շրջագայելով Համշենում, նշում է. *«Համշենցիք կէս-կէս են. շատը դարձած են, բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն, ժամոց եւ ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամէնքը Վարդավառին եւ Վերափոխման կերթան եկեղեցին մոմ կը վառեն եւ մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար. բոլորը հայերէն կը խօսին»*[58]: Նույն խնդրին է անդրադարձել նաև Հ. Տաշյանը. *«Բնականապէս այսպիսի բռնութեամբ իսլամացած ժողովուրդ մը երկար ատեն կէս-կէս կը մնար: Այս բառով կը նշանակուին այս կողմերն անոնք, որ արտաքուստ ստիպուած են այլ եւս մահմեդական մնալ՝ որովհետեւ թուրքական ու իսլամական օրէնքով իսլամացածի մը քրիստոնէութեան վերադարձի փորձն իսկ մահապարտութեան պատիժ կը կրե. բայց ներ-*

[56] Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009, էջ 33:

[57] Նույն տեղում, էջ 419:

[58] Բժշկեան Մ., Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 96-97:

քուստ կը պահէ աւելի կամ նուազ երկար տեւողութեամբ յիշատակն անցելոյն եւ վառ ոգի մը ներքին քրիստոնեական ու ազգային համոզման»[59]:

Բացի այդ, կարևոր է նկատել, որ իրավիճակի փոփոխության և առավել բարենպաստ պայմանների հաստատման ժամանակ, ինչպիսին էր, օրինակ, Սև ծովի առափնյա որոշ տարածքների գրավումը ռուսական զորքերի կողմից, համշենցիների շրջանում նկատվել են նաև փորձեր կամ, առնվազն, հետաքրքրություն իրենց արմատներին վերադառնալու ուղղությամբ: Հ. Հովակիմյանն այս առիթով նշում է. *«Ռուսական բանակին Տրապիզոնը գրաւած օրերուն, 1916-ին, հայ եւ յոյն մահմեդականներու մէջ ազգային ոգիին վերազարթնումը կրկին անգամ մեծ թափ ստացաւ, նոյնիսկ Օֆի մոլեռանդ մոլլաներուն մօտ: Այս անգամ քրիստոնեայ Մոսկոֆին ազդեցութիւնն էր գործոն ուժը»*[60]: Իսկ ավելի վաղ Հ. Հովակիմյանը փաստում է, որ համշենահայերի մոտ քրիստոնեության վերադառնալու ակտիվ փորձեր նկատվել են դեռևս 19-րդ դարի կեսերին՝ Թանզիմաթյան բարեփոխումների հռչակման օրերին. *«Արդէն ԺԹ. դարու 40-50-ական թուականներուն թրքանալու բռնադատուած ժողովուրդներուն վերադարձի ձգտումը այնքան ուժեղ էր, որ*

[59] Տաշեան Հ., նշված աշխ., էջ 35:

[60] Յովակիմեան Յ., Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պեյրութ, 1967, էջ 70:

թուրք կառավարութիւնը ամէնէն խիստ միջոցները գործադրեց: Ամէն տեղ դպրոցներ բացաւ ու մոլեռանդ մոլլաները գործի լծեց»[61]: Համշենահայերի շրջանում հայկական արմատների կարևորման և ակունքներին վերադարձի հավանականության մասին ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանն արել է հետևյալ հետաքրքիր դիտարկումը. *«Որոշ հեմշինլի առաջնորդներ մեծ հետաքրքրութիւն էին ցուցաբերում իրենց հայ համշէնական արմատներին վերադառնալու նկատմամբ, եւ եթէ այդ շրջանը մնար Ռուսաստանի ազդեցութեան տակ, ապա հաւանաբար հեմշինլիները կրկին կը դառնային քրիստոնեայ համշէնցիներ»*[62]:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության հիմքերը դրվել են սելջուկյան շրջանում, իսկ Օսմանյան կայսրությունում այն դարձել է արդեն պետական մշակված քաղաքականություն, որն իր վրա է կրել նաև աշխարհաքաղաքական և ժողովրդագրական կարևոր ազդակներ: Ամփոփելով 11-18-րդ դարերի ընթացքում սելջուկյան և օսմանյան պետություններում հայերի նկատմամբ կիրառված բռնի իսլամացման քաղաքակա-

[61] Նույն տեղում, էջ 68:

[62] Յովհաննիսեան Ռ., Համշէնցիները, Պոնտոսը եւ Հայաստանը 1914-1921թթ., Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան - Պեյրութ, 2007, էջ 44:

նության հիմնական ուղղությունների համառոտ վերլուծությունը՝ հարկ ենք համարում մեջբերել պատմաբան Աշոտ Մելքոնյանի դիտարկումները կրոնափոխության քաղաքականության փուլային բաժանումների և հետևանքների վերաբերյալ. *«Բռնի իսլամացում, որի հետեւանքով. ա/ կէսկէսների առաջացում, այնուհետեւ՝ նրանց մի մասի տաճկացում... Այս երեւոյթը նկատելի էր Երզնկայի, Կամախի, մասամբ՝ Էրզրումի եւ յատկապէս Պոնտական լեռների յարող գաւառներում (Սպեր, Թորթում, Կիսկիմ, Համշէն եւ այլն): բ/ Քրդացում (Քղի, Խնուս, Բայազէտ, Ալաշկերտ, Հաքեարի, Դիարբեքիր եւ այլ գավառներ): գ/ Լազ էթնոկրօնական հանրութեան ձեւաւորում (հիմնականում՝ Պոնտոսի շրջակայք)»*[63]:

[63] Մելքոնեան Ա., Համշէն. պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր); Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան - Պեյրութ, 2007, էջ 28-29:

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ 1909 Թ. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Քաղաքական գործընթացները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և հայերի վիճակը

Օսմանյան կայսրությունում տարատեսակ ոլորտներում առկա խնդիրները ստիպեցին, որպեսզի իշխանությունները քայլեր ձեռնարկեն բարեփոխումների ուղղությամբ: Արդեն 18-րդ դարի վերջին բարեփոխումների շուրջ քննարկումներն ավելի առարկայական դարձան, երբ 1791 թ. Ռումելիի քադիասկեր Թաթարջըք Աբդուլա Էֆենդին ժամանակի սուլթան Սելիմ III-ի հրամանով կազմում է բարեփոխումների ծրագիր[1]: Այդ ամբողջ գործընթացում որոշակի տեղ են զբաղեցնում հպատակ ոչ մուսուլման ազգերի իրավունքների, կարգավիճակի հարցերը: Միևնույն ժամանակ, կարևոր է նկատել, որ հենց այդ ժամանակաշրջանում որակական նոր մակարդակ թևակոխեցին օսմանյան բռնապետական լծից ազատվելու համար հպատակ ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարները: Իհարկե, այս շարժումներն, ի վերջո, հանգեցնելու էին Օսմանյան կայսրության

[1] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 44-45:

տիրույթների ձևափոխումների, և ինչպես նկատում է Ռ. Սաֆրաստյանը. *«Օսմանյան պետության ղեկավարների համար առաջնային նշանակություն ձեռք բերեց երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, ինչը նրանցից պահանջեց նոր միջոցների որոնում քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները չեզոքացնելու համար»*[2]: Այսինքն՝ օսմանյան պետության խնդիրը ոչ թե իրական բարեփոխումներով քրիստոնյաների վիճակի բարելավումն էր, այլ բարեփոխումներ անցկացնելու իմիտացիայի շղարշի ներքո քրիստոնյաների ազգային-ազատագրական պայքարների մարումը: Հենց նշված ժամանակաշրջանում տեղի էին ունենում մակերեսային փոփոխություններ, որոնք իրականում ձևական բնույթ էին կրում: Օրինակ, հայտնի օսմանյան պետական գործիչ, մեծ վեզիր Մուսթաֆա փաշա Բայրաքթարի օրոք ընդունվեց հրամանագիր, որով արգելվում էր կիրառել քրիստոնյաներին վիրավորող «գյավուր» (անհավատ) տերմինը, սակայն, ինչպես նկատում է Ռ. Սաֆրաստյանը. *«այդ օրենքը որևէ գործնական նշանակություն չունեցավ և «գյավուր» բառի օգտագործումը շարունակվեց մինչև կայսրության կործանումը»*[3]:

[2] Նույն տեղում, էջ 44:
[3] Նույն տեղում, էջ 46:

Ինչևէ, մի քանի տասնամյակ տևած գործընթացի արդյունքում՝ 1839 թ. սուլթան Աբդուլ Մեջիդ I-ի հրովարտակով, որը հայտնի է «Գյուլհանեի հաթթը շերիֆ» անվանումով, հռչակվում էր Օսմանյան կայսրության բոլոր բնակիչների կյանքի, ինչքի, իրավունքների երաշխիք: Այսպիսով, Օսմանյան կայսրության պատմության մեջ սկսվում է մի ժամանակաշրջան, որը հայտնի է Թանզիմաթյան (բարեփոխական) անվամբ: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ «Գյուլհանեի հաթթը շերիֆ»-ով նախատեսված քրիստոնյաների վիճակի փոփոխությունները կյանքի չկոչվեցին: Ինչպես նկատում է Դ. Երեմեևը, Թանզիմաթյան բարեփոխումների մեծ մասը մնաց որպես *«բարի ցանկություն»*[4]: Իրականում մուսուլմանների և քրիստոնյաների իրավահավասարության հռչակված սկզբունքների հանդեպ քրիստոնյա ժողովուրդները հավատ չէին տածում, իսկ մուսուլման հասարակությունը թշնամաբար էր տրամադրված այդ բարեփոխումներին, որոնք իրենց հավասարեցնում էին «գյավուրների» հետ: Սակայն այս ամենի զավեշտն այն էր, որ իրենց իսկ հայտարարած բարեփոխումների նկատմամբ անկեղծ չէին հենց իրենք՝ օսմանյան բարձրագույն իշխանությունները: «Թանզիմաթի հայր» հռչակված վեզիր Մուսթաֆա Ռեշիդ փաշան ֆրանսիական մի պաշտոնյայի հետ զրույցում անկեղծանա-

[4] Երեմեև Դ., նշված աշխ., էջ 232:

լով՝ ասել էր, որ իր նպատակն է ոչ թե հավասարեցնել մուսուլմանների և քրիստոնյաների իրավունքները, այլ ընդամենը մեղմացնել եղած անհավասարությունը[5]:

Հայտարարված բարեփոխումներից հետո ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների վիճակի մեջ որևէ էական փոփոխություն չարձանագրվեց: Եվ պատահական չպետք է համարել, որ 1856 թ. սուլթանը հրապարակեց կայսրությունում բարեփոխումների անցկացման երկրորդ հրովարտակը՝ «Հաթթ-ը հյումայուն»-ը, որը հիմնականում կրկնում էր այն դրույթները, որոնք արտահայտված էին «Գյուլհանեի հաթթ-ը շերիֆում»: Այս կրկնությունը բարեփոխումների առաջին շրջանի տապալման ևս մեկ ապացույց էր: Երկրորդ հրովարտակից հետո սկսված, այսպես կոչված, թանզիմաթյան երկրորդ փուլը նույնպես էական փոփոխություններ չմտցրեց ոչ մուսուլմանների դրության մեջ:

Հարկ է շեշտել նաև, որ այս շրջանի կարևոր պետական գործիչներ (վեզիրներ) Ալի և Ֆուադ փաշաներն էլ ավելի առաջնային դարձրին և զարգացրին Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների «միախառնման և միաձուլման» քաղաքականությունը[6]: Սակայն «միախառնումն ու միաձուլումը», ըստ էության, նշանակում էր ձուլում «օսմանյան ազգի» մեջ: Ռ. Սաֆրաստյանը աղբյուրագիտական լայն հենքի վրա բացահայտել է թուրք «բարեփոխիչների» այս քաղաքականության իրական էությունը՝ մասնավորապես գրելով. *«Գնահատելով Ալի փաշայի և Ֆուադ փաշայի լայնորեն պրոպագանդվող «միաձուլումը»՝ գալիս ենք եզրակացության, որ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ քրիստոնյա ժողովուրդների «խաղաղ» ապազգայնացման և ուծացման փորձ և դրանով իսկ Օսմանյան կայսրությունում ազգային հարցի լուծում»*[7]:

19-րդ դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումների մեջ առանձնահատուկ դեր ունի 1865 թ. «Նոր օսմաններ» կոչվող գաղտնի խմբակի ստեղծումը: Թանզիմաթյան բարեփոխումներին դեմ տրամադրված գործիչներն այս խմբակով հիմք դրեցին Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժմանը[8]: «Նոր օսմանները» որդեգրել էին հստակ հակաքրիստոնեական դիրքորոշում, և Թանզիմաթյան բարեփոխումների հիմնական քննադատությունն էլ հենց խարսխված էր իսլամական-ազգայնական մոլեռանդության վրա: Նրանց համար անընդունելի էր մուսուլմանների ու «գյավուրների»

[5] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 49-50:
[6] Նույն տեղում, էջ 54:

[7] Նույն տեղում, էջ 59:
[8] Նույն տեղում, էջ 73:

թեկուզ և միայն թղթի վրա հռչակված հավասարությունը: Քաղաքական գործընթացները, ի վերջո, հանգեցրին 1876 թվականին Օսմանյան կայսրության առաջին սահմանադրության ընդունմանը: Ակնհայտ էր, որ «սահմանադրականները» ևս խիստ բացասաբար էին տրամադրված ոչ մուսուլման ժողովուրդների նկատմամբ. «սահմանադրական շարժման» ականավոր դեմքերից և փաստացի ղեկավարներից մեկը՝ «ազատական» հայացքներով հայտնի քաղաքական գործիչ Միդհատ փաշան, մարմնավորում էր թուրքական բռնատիրության բոլոր ավանդույթները: Հիրավի արժեքավոր է Ռ. Սաֆրաստյանի այն դիտարկումը, որ հենց Միդհատ փաշան ցեղասպանության ծրագիրը դարձրեց Օսմանյան կայսրության պետական քաղաքականության անկյունաքար[9]:

Ինչպես ցույց տվեց պատմությունը, ո՛չ Թանզիմաթյան բարեփոխումների երկու փուլերը, ո՛չ սահմանադրական շարժումն ու դրա հռչակումը փոփոխություն չմտցրին քրիստոնյաների և, մասնավորապես, հայերի դրության մեջ: Վերլուծելով թանզիմաթի շրջանը և տեղի ունեցած իրադարձությունները՝ Ռ. Սաֆրաստյանը գալիս է այն ուշագրավ եզրահանգմանը, որ հենց այդ ժամանակը հիմք ծառայեց կայսրությունում նախացեղասպանական իրավիճակի ստեղծման համար[10]:

[9] Նույն տեղում, էջ 156:

* * *

Կարևոր է ուսումնասիրել հայերի բռնի իսլամացման ուղղությամբ արվող քայլերը նշված ժամանակահատվածում, երբ Օսմանյան կայսրության և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքականության մեջ տեղի էին ունենում էական շրջադարձեր: Փաստերը ցույց են տալիս, որ 19-րդ դարում ևս օսմանյան իշխանությունները շարունակում էին իրականացնել ոչ մուսուլմանների նկատմամբ որդեգրած քաղաքականության հիմնական դրույթները, այն է՝ հարկային և ֆինանսական հալածանքի միջոցով նրանց դրդել «կամովին» իսլամացման[11], իսկ առավելապես կրոնափոխ անել մահվան սպառնալիքով:

Նույնիսկ բարեփոխումների նախաձեռնողների և իրականացնողների համարում ունեցող գործիչները ոչ մուսուլման ժողովուրդների նկատմամբ որդեգրած քաղաքականությամբ և մտածելակերպով չէին տարբերվում իրենց նախորդներից: Ռ. Սաֆրաստյանը շեշտում է, որ 19-րդ դարի կեսերի օսմանյան քաղաքական կյանքի ամենահայտնի գործիչներ, «բարեփոխականներ» Ալի և Ֆուադ փաշաներն *«ամեն հար-*

[10] Նույն տեղում, էջ 72:
[11] Ինճիկյան Հ., նշված աշխ., էջ 58:

մար պահի դիմում էին նաև ապելի «անհավատներից» ազատվելու թուրքական իշխանավորների հին փորձված միջոցին՝ բռնի իսլամացմանը»[12]: Իսկ սահմանադրական շարժման «կնքահայր» Միդհատ փաշայի իրական դիրքորոշումը ոչ մուսուլման ազգերի նկատմամբ ցայտուն կերպով արտահայտվում է ֆրանսիացի Բենուա Բրունսվիկի հետ նրա անձնական զրույցում, որի ժամանակ, խոսելով օսմանյան նախորդ իշխանությունների մասին, Միդհատ փաշան քննադատել է նրանց այն պատճառով, որ նրանք սխալվել են՝ *«չսփիպելով մեր հպատակներին... ընդունել իսլամ: Այդ է պետք սկսել»*[13]: Այս առիթով պատմաբան Հայկ Ղազարյանը գրում է. *«Հայերի ուծացման քաղաքականությունը մտավ նոր փուլի մեջ, որի իրականացումը հանձնարարվեց իսլամ շեյխերին, քուրդ աղաներին, տեղական կառավարիչներին»*[14]: Նույն հեղինակի աշխատությունում մեջբերված է Կոստանդնուպոլսի հայոց ազգային ժողովի մի բողոքագիր, որում ասված է. *«Կանայք և անչափահաս մանկունք բռնի մահմետականութեան դարձնելու ջանքերն՝ որ մոլեռանդից ձեռօք կըլլան, շատ անգամ կառաւարութեան անդամոց կողմէ կողմնակցութիւն կը գտնեն և այս բաւական աղէտ մը եղած է ժողովրդեան»*[15]: Սակայն, ի տարբերություն նախորդ շրջանների, 19-րդ դարում հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը բախվում էր որոշակի դժվարությունների, որոնցից պատմաբան Արման Կիրակոսյանն առանձնացնում է ոչ մուսուլման ժողովուրդների ազգային ինքնագիտակցության զարթոնքն ու արևմտյան տերությունների ճնշումները[16]:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը արևմտյան պետությունների ճնշման և ընդհանրապես Հայկական հարցի ծավալման դեմ որդեգրեց մի քաղաքականություն, որում առանցքային դեր հատկացվեց կրոնական մոլեռանդության բորբոքմանը, կոտորածին և բռնի իսլամացմանը[17]: Կարծիքներ կան, որ հենց արևմտյան տերությունների ճնշումը ստիպեց, որպեսզի Աբդուլ Համիդը փորձի ստեղծել այլընտրանք՝ ի դեմս մուսուլմանական աշխարհի՝ լայն տեղ տալով պանիսլամիզմին: Այս եզրահանգման հեղինակ, ականավոր պետական գործիչ և գիտնական Ջոն Կիրակոսյանը ներկայացնում է այդ դրույթից բխող սուլթանի հաջորդ տրամաբանական քայլը. *«Սուլթանն ու իսլամի նրա հավատարիմ սպասավորները ճիգ ու ջանք չէին խնայում Արևմտյան Հայաստանում մահմեդական*

[12] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 60:
[13] Նույն տեղում, էջ 156:
[14] Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 353:

[15] Նույն տեղում, էջ 353:
[16] Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2007, էջ 4:
[17] Նույն տեղում, էջ 9:

կրոնի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Դրա առաջին պայմանը հայության բռնի հավատափոխությունն էր»[18]: Որդեգրելով պանիսլամիզմի գաղափարախոսությունը՝ Աբդուլ Համիդն էլ ավելի ուժեղացրեց իսլամական մոլեռանդությունը և կարծում էր, որ *«իր գահի անսասանությունը հնարավոր էր ապահովել միայն կայսրության իսլամացումով»*[19]: Արդեն 1892 թ. «Դրոշակը» ահազանգում է. *«Բռնի կրոնափոխությունը օրեցօր շատանում է...»*[20]:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացներն առիթ էին դառնում նաև այլ բնույթի զարգացումների, որոնց շարքում որոշակի տեղ ունեն հայերի բռնի կրոնափոխության և դրան հարակից այլ հարցեր: Այսպես, Օսմանյան կայսրության թուլացումը թույլ էր տալիս այլ պետություններին առավել հաճախ միջամտել նրա ներքին գործերին: Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների իրավունքների շարունակական ոտնահարումը ու բռնի կրոնափոխվածների իրողությունը դարձան որոշակի խաղաթուղթ մեծ տերությունների ձեռքում: Այսուհանդերձ, հատկանշական է, որ արտաքին միջամտության արդ-

[18] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, հ. 1, էջ 19:

[19] Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ), Երևան, 1988, էջ 16:

[20] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2008, էջ 70:

յունքում արձանագրված որոշ փոփոխությունները բռնի իսլամացված հայերի շրջանում նոր զարգացումների ազդակ դարձան: Օրինակ, Ղրիմի պատերազմից հետո՝ 1856 թ., Օսմանյան կայսրությունում արգելվեց իսլամից հրաժարվելու և այլ կրոն ընդունելու համար սահմանված մահապատիժը[21]: Սրանից հետո նախկինում իսլամ ընդունած օսմանյան հպատակները և, մասնավորապես, հայերը սկսեցին վերընդունել քրիստոնեություն, որը լուրջ մտահոգության առիթ դարձավ իշխանությունների համար: Փաստերը ցույց են տալիս, որ բռնի կրոնափոխ հայերի շրջանում քրիստոնեության վերադառնալու գործընթացը հատկապես նկատելի է եղել 1840-1850-ական թվականներին[22]: Այդ տարիներին տարբեր գավառների ղեկավարներին հանձնարարվել է անգամ պատրաստել այն հայերի ցուցակը, որոնք ցանկանում էին վերադառնալ քրիստոնեության: Արմատներին վերադարձի գործընթացում զգալի տեղաշարժեր նկատվեցին նաև օսմանյան առաջին սահմանադրության ընդունման ժամանակաշրջանում: Ինչպես նշում է Հ. Հովակիմյանը. *«Սահմանադրութեան շրջանին հայ ու յոյն մահմեդականներու լեզուի կապանքները քանդուած էին եւ ժամանակի խնդիր էր անոնց*

[21] Гордлевский В., К истории тайных христиан в Малой Азии (Из поездки в Трапезунд), Избранные сочинения, Москва, 1962, том III, стр. 332.

[22] Simonian H., Hemshin from Islamicization to the end of the nineteenth century, The Hemshin: history, society and identity in the Highlands of Northeast Turkey, London-New York, 2007, p. 75.

դարձը դէպի իրենց ազգն ու եկեղեցին»[23]: Ազգագրագետ Սեյլանը ևս կարծիք է հայտնել, որ եթե օսմանյան իշխանություններն Արևմտյան Հայաստանում իրական բարեփոխումներ իրականացնեին, ապա մեծ թվով կրոնափոխված հայեր կվերադառնային քրիստոնեության[24]:

Տարբեր տարիներին արձանագրված փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ բռնի կրոնափոխված հայերն ամեն հարմար առիթի դեպքում ձգտում էին վերադառնալ իրենց ակունքներին. դա կարող էր տեղի ունենալ իսլամացվելուց անգամ տասնամյակներ անց: Օրինակ, 1887 թվականին նման մի ուշագրավ տեղեկություն է փոխանցում «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին: Այսպես, խոսելով ռուս-թուրքական 1877-78 թթ. պատերազմից հետո Ռուսաստանի կայսրությանն անցած մի շարք տարածքների և այնտեղի բնակչության մասին՝ Արծրունին նշում է. *«Երբ որ շատ տարի սրանից առաջ մենք այն միտքը յայտնեցինք, թէ Ռուսաստանից նուաճուած Կարսի եւ մասամբ Բաթումի նահանգում բազմաթիւ են հայ-մահմետականներ, որոնք բռնի կերպով ընդունեցին իսլամը թիւրքաց տիրապետութեան տակ,- մեզ ոչ ոք չէր ուզում հաւատալ: Եւ այն ժամանակ մենք մատնացոյց անելով այդ երեւոյթի վրա, հրաւիրում էինք մեր հոգեւորականութիւնը հոգալ այդ մահմետականացած հայերի մասին, այն րոպէից, երբ Կարսի եւ Բաթումի նահանգը անցել էին քրիստոնեայ պետութեան, Ռուսաստանի տիրապետութեան տակ: Այժմ, մեր ստացած տեղեկութիւններին համեմատ, Օլթիի շրջանի մի քանի գիւղերում, օրինակ՝ Օրթլու գիւղում, մի քանի մահմետական հայ ընտանիքներ սկսեցին վերադառնալ դէպի լուսաւորչական կրօնը: Վաթսուն-եօթանասուն տարի առաջ իսլամ ընդունած հայերը, տեսնելով, որ բուն թուրքերը հետզհետէ գաղթում են Կարսի նահանգից դէպի Թիւրքիա, եւ զգալով, թէ իրանք այժմ ապրում են այլ եւս ոչ թէ մահմետական տիրապետութեան տակ, այլ քրիստոնեայ պետութեան հովանիի տակ, սկսում են նորից վերադառնալ դէպի իրանց պապերի կրօնը»*[25]:

Նկատենք, որ բռնի կրոնափոխված հայերի շրջանում քրիստոնեության և հայկական ինքնության վերադարձի ձգտումը արտահայտվել է նաև հետագայում, ընդհուպ մինչև մեր օրերը:

[23] Յովակիմեան Յ., նշված աշխ., էջ 70:
[24] Սեյլան, նշված հոդ., էջ 952-953:

[25] Արծրունի Գ., Մահմետական հայեր, Մշակ, Թիֆլիս, 05, 02, 1887:

Հայերի բռնի իսլամացումը 1894-96 թթ. կոտորածների տարիներին

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտություն կրեց և Բեռլինյան կոնգրեսում նրան պարտադրվեց իրականացնել բարեփոխումներ ոչ մուսուլման ժողովուրդների իրավունքների ու վիճակի հետ կապված: Բարեփոխումները մեծապես վերաբերում էին նաև Օսմանյան կայսրության քաղաքացի հայերին[26], սակայն դրանք հիմնականում մնացին թղթի վրա: Բեռլինի կոնգրեսից հետո հակահայկական տրամադրություններն էլ ավելի սրվեցին օսմանյան վերնախավի և մոլեռանդ մուսուլմանների շրջանում, և մեծ վեզիր Քյամիլ փաշայի խոսքերը լավագույնս արտացոլում են այն ժամանակվա օսմանյան իշխանությունների տեսակետը հայության վերաբերյալ: Ըստ նրա, արտաքին միջամտությունից խուսափելու համար պետք է չկրկնել բալկանյան տիրույթներում Օսմանյան կայսրության կատարած «սխալը», որի արդյունքում մի շարք ժողովուրդներ կարողացան ազատվել օսմանյան բռնապետությունից, իսկ այդ նպատակին հասնելու համար *«անհրաժեշտ է վերացնել ամենաանշան կասկածելի երևույթներն ու տարրերը և ապահովել մեր ապագան: Հայկական ազգը մենք պետք է սրբենք և արմատապես վերացնենք մեր երկրից»*[27]: Բեռլինի կոնգրեսից հետո օսմանյան իշխանությունները սկսեցին ավելի գործնական քայլեր մշակել Հայկական հարցը հիմնովին ու «վերջնական» լուծելու ուղղությամբ և տարբեր նահանգներում կազմակերպեցին հայերի զանգվածային կոտորածներ: Օսմանյան կայսրությունում նախկինում արդեն տեղ գտած կոտորածները 1894-96 թթ. ստացան ավելի մշակված և կազմակերպված բնույթ:

Համիդյան կոտորածներին զուգահեռ՝ օսմանյան իշխանություններն իրականացրին բռնի կրոնափոխություն, որի հետևանքով հազարավոր հայերի պարտադրվեց իսլամ: Ընդհանրապես, փաստերը ցույց են տալիս, որ ոչ մուսուլման ժողովուրդների բռնի իսլամացման գործընթացն ավելի մեծ ինտենսիվություն է արձանագրել հատկապես կոտորածների, ցեղասպանությունների ժամանակ, և բացառություն չէին 1894-96 թթ. համիդյան ջարդերը: Այդ տարիներին օսմանյան կառավարությունը գործի է դրել ինչպես մահվան սպառնալիքով, այնպես էլ «կամովին» իսլամ պարտադրելու մեթոդները: Հենց այդ տարիներին են արձանագրվել բազմաթիվ հայերի դիմում-խնդրագրեր «կամովին» իսլամ ըն-

---

[26] Петросян Ю., Османская империя: могущество и гибель, Москва, 1990, стр. 215.

[27] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980, էջ 30:

դունելու վերաբերյալ, որոնք ակնհայտորեն արվել են որպես մահից խուսափելու միակ միջոց, սակայն օսմանյան իշխանություններին հիմք են տվել դրանք ներկայացնել որպես պարտադրանքից հեռու ինքնակամ երևույթ:

Հայտնի է, որ 1894-96 թթ. կոտորածները տեղի ունեցան պատմական Հայաստանի մի քանի նահանգներում և Կոստանդնուպոլսում: Արդեն առաջին կոտորածների ժամանակ, որոնք տեղի ունեցան Սասունում 1894 թ., արձանագրվել են հայերի բռնի իսլամացման բազմաթիվ դեպքեր և փորձեր: Այդ ամենին ականատես ԱՄՆ-ի մի քաղաքացի վկայում է. *«Երիտասարդ աղջիկները առևանգվում են որպես ռազմավար»*[28], ինչից հետո նրանք կամ ստիպված ընդունում էին իսլամ և դառնում մուսուլմանական հարեմների զոհ, կամ հրաժարվում էին ընդունել իսլամ և սպանվում էին: Համիդյան կոտորածների առաջին ալիքից հետո՝ 1895 թ. ապրիլին, բրիտանական կառավարությունը մշակեց Արևմտյան Հայաստանի բարեփոխումների մի ծրագիր: Ուշագրավ է, որ խոսելով Սասունի և Տալվորիկի մասին, որտեղ տեղի էին ունեցել կոտորածներ, նշվում էր *«հայերի **կրոնական հավատափոխության*** (ընդգծումը մերն է- Ռ.Մ., Մ.Ա.) *ազատ*

[28] Геноцид армян в Османской империи (сборник документов и материалов под редакцией М. Нерсисяна, 2-ое, дополненное издание), Ереван, 1982, стр. 36.

իրավունք»-ի մասին[29]: Բարեփոխումների այս կետը հստակ վերաբերելու էր այն հայերին, որոնք Սասունի կոտորածների ժամանակ ենթարկվել էին բռնի կրոնափոխության: Փաստորեն, սրանով ապահովվում էր նրանց քրիստոնեության վերադառնալու հնարավորությունը: Բայց այս բարեփոխումների առաջարկից շատ չանցած՝ 1895 թ. սեպտեմբերին, վերսկսվեցին հայկական կոտորածները, որոնք շարունակվեցին ընդհուպ մինչև 1896 թ.:

Սպանդի նահանգներից մեկը Դիարբեքիրն էր, և հենց այստեղ է արձանագրվել կրոնափոխության ամենամեծ ալիքը: Նոյեմբերի սկզբին ծայր է առել կոտորածը, և արդեն նոյեմբերի 10-ին Դիարբեքիրի նահանգապետ Էնիս փաշան հաղորդում է կենտրոնական իշխանություններին, որ որոշ հայկական գյուղերի բնակիչներ ցանկանում են ընդունել իսլամ ու Բարձր Դռնից փորձում է ճշտել իր հետագա գործողությունները: Նոյեմբերի 14-ին կենտրոնից եկած հրահանգում նշված էր՝ առայժմ մերժել կրոնափոխության դիմումները, իսկ դրանք կրկնվելու դեպքում՝ ընդառաջել միայն մի մասին[30]: 1896 թ. մարտի 17-ին Մեծ Բրիտանիայի հյուպատոս Հալվարդը իր զեկուցագրում անդրադառնում է կոնկրետ Դիարբեքիրի նահանգում տեղի ունեցող դեպքերին

[29] Կիրակոսյան Ա., նշված աշխ., էջ 10:

[30] Deringil S., "The Armenian Question Is Finally Closed": Mass Conversion of Armenians in Anatolia during Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies of Society and History, Cambidge, 2009, 51 (2), p. 352.

նշելով, որ *«կոտորածը ներառյալ և կրոնափոխությունը տեղի է ունենում նահագապետ Էնիս փաշայի հսկողության ներքո»*[31]:

Սակայն ընդհանուր բռնության և անպաշտպանության մթնոլորտն այնպիսին էր, որ շատ հայեր, որպես փրկության վերջին միջոց, դիմում էին կրոնափոխության և անգամ չէին էլ սպասում իշխանությունների դրական պատասխանին: Այսպես, 1895 թ. նոյեմբերի 12-ին Խարբերդի վիլայեթի Փերի գյուղում հայերն իրենք իրենց թլպատել էին[32]: 1895 թ. նոյեմբերի 27-ին Բիթլիսի միանգամից 3 գյուղի (Մերզան, Էրզիֆ, Թանիմավերան) կանայք և տղամարդիկ դիմել են կրոնափոխության[33]: Սակայն ավելի շատ գերիշխում էր զենքի պարտադրանքով իսլամացումը: Այսպես, Ակն գավառում իրենց բարբարոսությամբ հայտնի Էմին Իբրահիմ Չավուշը և Հոմեր Էֆենդին, խաղաղ բնակչությանը կոտորելուց բացի, մահվան սպառնալիքով պարտադրել են ընդունել իսլամ: Հավաքելով ժողովրդին մզկիթներում՝ թլպատել են և ստիպել հրապարակավ ընդունել իսլամ: Նրանց գլխավորած հրոսակները հարձակվել են Վանք, Կռան, Խոռոջ և Էնեեկինք գյուղերի վրա, սպանել ժողովրդի մի մասին, իսկ ողջ մնացածներին բռնի իսլամացրել: Բանըգ գյուղի հայերը

[31] Akçam T., նշված աշխ., էջ 108.
[32] Deringil S., նշված հոդ., էջ 354-355:
[33] Նույն տեղում, էջ 355:

1896 թ. կոտորածներից հետո մեծ մասամբ իսլամացվել են, նույնը կատարվել է Քյոթյու գյուղում, իսկ Ուրֆայում իսլամացվել է 400-500 հայ[34]: Միայն Բալուի գավառում և շրջակա գյուղերում համիդյան կոտորածների ժամանակ կրոնափոխ են եղել 3181 հայեր, թլպատվել են 603-ը, թուրքերի հետ ամուսնացել են 152 աղջիկ: Իսկ Խարբերդի նահանգում և հարակից 73 գյուղերում բռնի իսլամացվել են 7664 հայեր[35]:

Սակայն հարկ է շեշտել, որ կրոնափոխությունը ոչ միշտ էր հայերին ազատում մահից. եղել են դեպքեր, երբ պարտադրելով իսլամ՝ այնուհետև նրանց կրկին աքսորել կամ կոտորել են: Կրոնափոխության ալիքի ծավալմանը զուգահեռ՝ օսմանյան իշխանությունները փորձում էին հիմնավորել այն և պատճառներ փնտրել: Բացի նրանից, որ նշում էին, թե հայերը կամովին են փոխում իրենց կրոնը, նաև տարածվում էր այն վարկածը, թե կենտրոնական իշխանություններն այս ամենի հետ կապ չունեն, և եթե անգամ արձանագրվել են բռնի կրոնափոխության դեպքեր, ապա դրանց մեղավորը քրդերն են, որոնց և հայերի միջև տարատեսակ խնդիրներ կան[36]: Օսմանյան իշխանությունների այս վարկածը ժխտելու են գալիս բազմաթիվ փաստեր. օրինակ, Յո-

[34] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, էջ 288:
[35] Çalışlar O., 1895 ve 1896 Ermeni Katliamları, Agos, İstanbul, 01, 05, 2009.
[36] Deringil S., նշված աշխ., էջ 348:

հաննես Լեփսիուսը, խոսելով 1894-96 թթ. համիդյան ջարդերի և 1909 թ. Կիլիկիայի կոտորածի մասին, հստակ առանձնացնում է բռնի կրոնափոխության խնդիրը. *«Հատկանշական մի երևույթ ևս, որ ի հայտ է եկել Աբդուլ Համիդի ջարդերի՝ 1894-1896 թթ. և Կիլիկիայի ջարդերի (1909 թ.) ժամանակ, զանգվածային իսլամացման հանգամանքներն են՝ կրոնափոխությունները, որոնք տեղի չեն ունեցել կատարյալ հոժարությամբ նույնիսկ այն տեղերում, ուր դրանք ներկայացվում են այդ գույնով»*[37]:

Համիդյան կոտորածների ժամանակ հատկապես հարթավայրային գոտու հայ բնակչությունը, չկարողանալով փախչել լեռները և թաքնվել այնտեղ, երբեմն ապաստան են գտել մզկիթներում, իսլամական հոգևորականների տներում, որոնք էլ նրանց ստիպել են ընդունել իսլամ[38]: Այսինքն՝ հայերի բռնի իսլամացման գործում ներգրավված են եղել օսմանյան մուսուլման հասարակության գրեթե բոլոր շերտերը, և ակտիվ դեր են կատարել նաև հոգևորականները:

Ավելորդ չէ նշել, որ ինչպես հայերի կոտորածները, այնպես էլ բռնի կրոնափոխության գործընթացը գտնվում էին արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների ուշադրության կենտրոնում, և նրանք փորձում էին միջամտել: Նաև այդ հանգամանքի շնորհիվ օսմանյան կառավարությունը կազմել է հանձնաժողով, որը, իբրև թե, պետք է ուսումնասիրեր կրոնափոխության պատճառները և գործընթացը: Հանձնաժողովի կազմում էին Հալեպից երկու պաշտոնյա և բրիտանական դեսպանատան թարգմանիչ Ֆիցմաուրիսը: Հանձնաժողովը հանդիպել է կրոնափոխված համայնքի ղեկավարների հետ, որոնք պնդում էին, որ վերջին իրադարձությունները վախով էին լցրել իրենց կյանքը, և այդ պատճառով էլ իսլամացել են: Նրանք նաև նշել են, որ չեն վերադառնա իրենց կրոնին այնքան ժամանակ, քանի դեռ վտանգը լիովին չի վերացել[39]: Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ հիշյալ կառավարական հանձնաժողովը համայնքի ղեկավարներին ստիպել է ստորագրել մի փաստաթուղթ, որով նրանք վստահեցրել են, որ իրենք ճնշման տակ չեն կրոնափոխվել: Հանձնաժողովի անդամ բրիտանական դեսպանատան թարգմանիչ Ֆիցմաուրիսը հավաստիացնում էր, որ զանգվածային ջարդերը և կրոնափոխությունները տեղի են ունեցել կենտրոնական իշխանությունների և տեղական ղեկավար մարմինների կազմակերպմամբ: Նա նշում է, որ մուսուլմանական ամբոխը գոռում էր, թե փադի-

[37] Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին (խմբագիր՝ Պ. Հովհաննիսյան), Երևան, 2011, էջ 384:

[38] Геноцид армян в Османской империи, стр. 119.

[39] Deringil S., նշված հոդ., էջ 364:

շահը հրամայել է, որ հայերը պետք է կոտորվեն, և ոչ մի քրիստոնյա չպետք է մնա իրենց երկրում[40]:

Ինչպես բոլոր կոտորածների ժամանակ, այս անգամ ևս կրոնափոխության առաջնային թիրախներից էին կանայք և երեխաները: Կոտորածներից հետո սկսվել է մուսուլմանների տներում պահվող առևանգված հայ կանանց և երեխաներին ազատելու գործընթացը, որում մեծ դեր ունեին օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները: Դիարբեքիրում Ֆրանսիայի հյուպատոս Գուստավ Մեյրիերը գրում է, որ իրենք հետ են վերադարձրել 6 կանանց, որոնցից և ոչ մեկը չէր ցանկանում վերադառնալ իրենց ընտանիքները. նրանք վախենում էին մահից և գիտեին, որ ոչ մի պաշտպանություն չէին գտնի[41]: Կա նաև հարցի մեկ այլ կողմ. առևանգված կանայք չէին ցանկանում վերադառնալ, քանի որ լուրջ կասկածներ և մտավախություն ունեին իրենց ազգակիցների կողմից ընկալվելու հարցում: Բրիտանական կառավարությունը ևս նախաձեռնել է բռնի իսլամացած հայ կանանց որոնում: Հյուպատոս Մեյրիերը պատվիրակություն է ուղարկել Տիգրանակերտի շրջակա գյուղերը՝ գտնելու և փրկելու առևանգված հայ կանանց, բայց անհաջող: Հյուպատոսը տալիս է ավելի քան 100 անուն, սակայն պատվիրակությունը վերադառնում է միայն մեկ կնոջ ու աղջկա հետ: Մուսուլմանները թաքցնում էին իրենց զոհերին, անգամ ուղարկում էին այլ վայրեր[42]:

Համիդյան կոտորածների ժամանակ հայերի բռնի կրոնափոխությանը հետևեց մեկ այլ զարգացում ևս. կոտորածների հուժկու ալիքից հետո նաև նպաստավոր պայմանների առկայության պարագայում բռնի իսլամացված հայերի մի մասը սկսեց վերադառնալ հայկական-քրիստոնեական ակունքներին: Բռնությունները դադարելուց հետո, նաև օտարերկրյա դիվանագետների ճնշմամբ, իշխանությունների թույլտվությամբ որոշ թվով հայեր վերընդունեցին քրիստոնեություն, սակայն վախի պայմաններում նրանցից շատերը բացահայտ չգնացին նման քայլի, քանի որ այդ պարագայում սկսվում էին հասարակական ճնշումներ, մահվան սպառնալիքներ, որոնք բացահայտ կամ գաղտնի աջակցություն էին ստանում և քաջալերվում պետության կողմից: Ավելին՝ երբեմն տեղի էին ունենում քրիստոնեության վերադարձած հայերի սպանություններ[43], և նաև այդ պատճառով նրանց մի մասը նախընտրում էր արտաքուստ մնալ մուսուլման և բռնել ուծացման ուղին, իսկ մի մասն էլ սկսում էր երկակի կյանք վարել՝ դառնալով ծպտյալ քրիստոնյա: Անդրա-

[40] Նույն տեղում, էջ 365:
[41] Նույն տեղում, էջ 360:

[42] Նույն տեղում, էջ 362:
[43] Այդ մասին տե՛ս օրինակ՝ Akçam T., նշված աշխ., էջ 111:

դառնալով կոտորածների ժամանակ հայերի կրոնափոխությանը և, մասնավորապես, դրան հետևած քրիստոնեություն վերընդունելու գործընթացին՝ թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլը որոշ անպատասխան հարցադրումներ է անում. *«Իսլամացվածների ո՞ր մասը վերադարձավ առաքելական քրիստոնեության, որքա՞ն մարդ մնաց մուսուլման, ի՞նչ ճակատագիր ունեցան նրանք 1915-ին: Արդյոք նրանք կապ պահպանեցի՞ն իրենց նախկին համայնքի հետ»*[44]:

Բռնի կրոնափոխ հայերի՝ հետագայում քրիստոնեության վերադառնալու երևույթը, անշուշտ, չէր վրիպել օսմանյան ղեկավարների աչքից, և դրան հաջորդած 1909 թ. Ադանայի կոտորածների և արդեն 1915 թ. սկսված Հայոց ցեղասպանության ժամանակ իշխանությունները հստակ զգուշացնում էին, որ հայերն իսլամ ընդունում են լոկ մահից ազատվելու համար, իսկ այնուհետև կրկին վերադառնում են քրիստոնեության:

Ընդհանուր առմամբ 1894-96 թթ. հայկական կոտորածներին զոհ են գնացել շուրջ 300 հազար հայեր, բռնի կրոնափոխության են ենթարկվել 200 հազարը[45]: Այլ տվյալների համաձայն՝ սպանված հայերի թիվը հասնում էր 500 հազարի[46]: Ջ. Կիրակոսյանը մեջբերում է ֆրանսիացի պատմաբան Ժակ Մորգանի տվյալները բռնի կրոնափոխվածների մասին, համաձայն որոնց՝ 1894-96 թթ. իսլամացվել են 100 հազար հայեր, իսկ 100 հազար աղջիկ ու կին տարվել են հարեմներ[47]: Բոլոր նշված աղբյուրների տվյալները, ըստ էության, համապատասխանում են իրար, քանի որ մուսուլմանական հարեմներ տարված 100 հազար կանայք ևս, բնականաբար, ենթարկվել են կրոնափոխության, այսինքն՝ 1894-96 թթ. հայկական կոտորածների ժամանակ բռնի իսլամացված հայերի առավել հավանական թիվը 200 հազար է:

Համիդյան կոտորածների ընթացքում իրականացված համակարգված իսլամացումը ցույց տվեց, որ 19-րդ դարի կեսին թվացյալ բարեփոխումների ժամանակ Օսմանյան կայսրության խոստումները բռնություններից, հարկադիր կրոնափոխությունից հրաժարվելու մասին ոչ միայն չիրականացվեցին, այլև հարմար առիթի դեպքում գործի դրվեցին առավել մեծ մասշտաբներով:

Ամփոփելով՝ նշենք, որ 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ տեղի ունեցած հայերի բռնի կրոնափոխությունը

---

[44] Deringil S., նշված հոդ., էջ 371:

[45] Կիրակոսյան Ա., նշված աշխ., էջ 11-12:

[46] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, հ. 1, 1982, էջ 56:

[47] Նույն տեղում:

հիմք հանդիսացավ նաև հետագայում իսլամացման ու թուրքացման քաղաքականության էլ ավելի բիրտ շարունակության համար:

Հայերի բռնի իսլամացումը 1909 թ. Կիլիկիայի կոտորածի ժամանակ

20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունն էր երիտթուրքական հեղաշրջման արդյունքում «Միություն և առաջադիմություն» կուսակցության իշխանության գալը: Կայսրության բոլոր ժողովուրդների միջև հավասար իրավունքների կոչերով հանդես եկող երիտթուրքերը 1909 թ. տիրանալով իշխանությանը՝ շարունակեցին քրիստոնյաների հանդեպ բռնությունների դարավոր քաղաքականությունը, որն առավել ցայտուն արտահայտվեց հայերի պարագայում: Արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին որդեգրված ցեղասպանական քաղաքականության իրագործումը դարձավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության թիվ մեկ խնդիրը, և այս ուղղությամբ առաջին գործնական քայլերն արվեցին երիտթուրքերի իշխանության հենց սկզբից. 1909 թ. Կիլիկիայում կազմակերպվեց հայերի զանգվածային կոտորածը: Ինչպես նկատում է այդ դեպքերի ականատես-վկա

Ֆերիման Դուքեթը, չնայած Օսմանյան կայսրությունում ստեղծվել էր նոր «սահմանադրական կառավարություն», սակայն հայկական խնդրում շարունակվեցին հին մեթոդները: Նա թուրքական նոր իշխանություններին գնահատական է տալիս ֆրանսիական Բուրբոնների արքայատոհմի վերաբերյալ տարածված հայտնի ասույթի միջոցով. «*Թուրքական նոր սահմանադրական կառավարությունը չէր մոռացել ոչինչ և չէր սովորել ոչինչ*»[48]: Կազմակերպված կոտորածին զոհ գնաց շուրջ երեսուն հազար հայ, սակայն սպանդին զուգահեռ՝ արձանագրվեցին նաև հայերի զանգվածային իսլամացման դեպքեր: Ավելորդ չէ նկատել, որ 1909 թ. Կիլիկիայի կոտորածի ժամանակ հայերի և՛ սպանդին, և՛ բռնի կրոնափոխությանը գործուն մասնակցություն են ունեցել թուրքերի «կրտսեր եղբայրները»՝ այն ժամանակ կովկասյան թաթարներ կամ թյուրքեր կոչվող ներկայիս ադրբեջանցիները: Նրանցից մեկը՝ Ահմեդ բեկ Աղաևը, կոչ էր արել քանդել հայկական ընտանիքները, իսլամացնել և ցրել թուրքերի մեջ[49]:

Կիլիկիայի կոտորածի ժամանակ բռնի իսլամացման հիմնական թիրախը եղել են հայ կանայք և աղջիկները, իսկ հայ տղամարդիկ անգամ կրոնը փոխելուց հետո էլ չեն ազատվել

---

[48] Duckett F., The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909, Yerevan, 2009, p. 55.

[49] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, հ. 1, էջ 208:

մահից: «Բյուզանդիոն» թերթում բերվում է վերն ասվածն ապացուցող մի օրինակ, որը տեղի է ունեցել Քըրքքիանում. *«Կը սպիպեն ժողովուրդը որ թուրք ըլլայ. խեղճ հայերը կը հաւանին այս առաջարկին, եւ սակայն իրենց դաւանափոխութիւնը օրինաւոր ըլլալու համար կը սպիպեն որ Մուսթաֆա փաշայի մզկիթը երթան. ժողովուրդը դարձեալ կը հաւանի, եւ երբ հազիւ քաղաքէն քիչ մը կը հեռանան, վայրագ խուժանը բոլոր էրիկ մարդիկը կը սպաննէ եւ կիներն ու աղջիկները իրենց մէջ կը բաժնէ»*[50]: Նմանատիպ մի օրինակի ենք հանդիպում նաև հայտնի գրող Զապել Եսայանի մեծարժեք «Ավերակներուն մեջ» փաստագրական ստեղծագործության մեջ, որի հիմքն այն իրողություններն էին, որոնք գրողն անձամբ էր արձանագրել՝ Կիլիկիայի կոտորածներից հետո այնտեղի աղետյալներին օգնող հանձնախմբի անդամ լինելով: Եսայանը փոխանցում է կոտորածի ականատես-վերապրող մի կնոջ զգայացունց պատմությունն իր տղայի մասին: Նրանց հարևան թուրքն առաջարկում է իսլամ ընդունել և փրկվել. *«Եթե մահմեդական ըլլաք, կազատիք, եթե ոչ, հայտնի է, որ պիտի սպաննվիք»*[51]: Տեղի տալով՝ նրանք իսլամ են ընդունում, սակայն անգամ դրանից հետո թուրք

[50] Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 337, մեջբերված է «Բյուզանդիոն»-ի 1909թ. ապրլի 21-ի (հունիսի 3-ի) 3818 համարից:

[51] Եսայան Զ., Ավերակներուն մեջ, Երևան, 2006, էջ 80:

ջարդարարները սպանում են նրա տղային: Փաստերի համադրումը թույլ է տալիս ենթադրել, որ Կիլիկիայի կոտորածի ժամանակ իսլամ ընդունելու գնով փրկվելու շանսեր են ունեցել առավելապես հայ արհեստավոր տղամարդիկ: Օրինակ, Զապել Եսայանի գրքում կարդում ենք. *«Միսիսի մեջ հայ չէր մնացեր... բացի մեկ քանի երկաթագործներե, որոնք մահմեդական դարձուցեր ու պահեր էին իրենց մոտ, որովհետև ուրիշ երկաթագործ չի կա հոս...»*[52]:

Իսկ հայ կանանց նկատմամբ թուրքական իշխանություններն իրականացրել են բռնի իսլամացման քաղաքականություն, որին մասնակից են դարձրել նաև մուսուլման հասարակության տարբեր շերտերին: Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը, Կիլիկիայի կոտորածներին նվիրված իր բարձրարժեք աշխատության մեջ անդրադառնալով այդ ժամանակ արձանագրված բռնի կրոնափոխությանը, նշում է, որ ջարդերն ուղեկցվել են հատկապես հայ կանանց իսլամացումով, որը չի դադարել նաև կոտորածից հետո. *«Արձանագրվել են բազում դեպքեր, երբ կոտորածից հետո պետական ասպիճանավորները շարունակում էին հափշտակել հայ կույսերի, նորահարսերի և այրիների՝ նրանց սպիպելով ամուսնանալ իրենց կամ իրենց որևէ հարազատի հետ»*[53]:

[52] Նույն տեղում, էջ 123:

[53] Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 337:

Կոտորածից հետո արևմտյան երկրների դեսպանությունները, ինչպես նաև հայկական համայնքային տարբեր կառույցներ օսմանյան իշխանությունների առջև բարձրացրել են բռնի իսլամացված հայերի վերադարձի հարցը: 1909 թ. հունիսին Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը Բարձր Դռանը ներկայացրած գրության մեջ հստակ առանձնացնում է բռնի իսլամացված հայերի խնդիրը. *«Անհրաժեշտ է, որ կայսրությունում երաշխավորվի հայերի պատվի անվտանգությունը, քրիստոնեությանը վերադարձվեն բոլոր իսլամացված հայերը»*[54]:

Յոհաննես Լեփսիուսը նույնպես, անդրադառնալով Ադանայի կոտորածի ընթացքում բռնի իսլամացված հայերի վերադարձի խնդրին, նշում է. *«Ադանայի ջարդերից հետո, 1909 թ. կառավարությունը եվրոպական պետությունների ճնշմամբ ստիպված եղավ թույլ տալու, որ իսլամացողները վերադառնան՝ նույնիսկ սպառնալով պատժել նրանց, ովքեր քրիստոնյա երեխաներին պիտի պահեին մահմեդական տներում»*[55]: Աղբյուրներ կան, որոնք վկայում են նաև, որ կոտորածից հետո ճնշումների ներքո թուրքերը ստիպված էին վերադարձնել առևանգված հայ կանանց ու աղջիկներին:

[54] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2, Երևան, 2008, էջ 149:

[55] Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, էջ 385:

Ըստ անգլիացի ականատես Ֆերիման Դուքեթի հայտնած տեղեկությունների՝ վերադարձվածների մեջ կային անգամ *«գերեվարված 11-12 տարեկան աղջիկներ»*[56]:

Սակայն հարկ է շեշտել, որ Կիլիկիայի կոտորածների ժամանակ արդեն նկատվում էր մի կարևոր առանձնահատկություն. եթե 1894-96 թթ. հայկական կոտորածներից հետո արտաքին և տարատեսակ այլ ճնշումների ներքո օսմանյան իշխանությունները թույլ էին տվել բռնի կրոնափոխված հայերին վերադառնալ իրենց ակունքներին և կրոնին, ապա 1909-ին այդ հարցում երիտթուրքական իշխանություններն ավելի անզիջում էին: Օրինակ, երբ բռնի կրոնափոխված հայերի (հիմնականում կանանց և աղջիկների) խնդիրը բարձրացվել է անձամբ սուլթանի, մեծ վեզիրի, խորհրդարանի նախագահի և ներքին գործերի նախարարի առջև, նրանք, այսինքն՝ օսմանյան քաղաքական վերնախավը, առաջ են քաշել հայ կանանց «կամովին» իսլամ ընդունելու թեզը, որին դիպուկ պատասխանել է «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյանը. *«Զարմանալի է, որ Ատանայի հայ կիներն ու աղջիկները Ատանայի ջարդին խռովեալ ժամանակն ընտրեր են ինքնաբերաբար իսլամութեան դիմելու համար»*[57]:

[56] Duckett F., նշված աշխ., էջ 84.

[57] Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 338-339, մեջբերված է «Բյուզանդիոն»-ի 1909թ. մայիսի 17-ի 3829 համարից:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ օսմանյան նոր իշխանությունները, ի դեմս երիտթուրքերի, ավելի մշակված և հետևողականորեն շարունակեցին հայերի բռնի կրոնափոխության քաղաքականությունը, և այս հանգամանքը ևս մեկ անգամ ապացուցեց, որ անկախ իշխանության ղեկին գտնվող ուժի հռչակած գաղափարախոսությունից՝ հայերի պարագայում բռնությունների քաղաքականությունը մնում էր անփոփոխ: Անդրադառնալով այդ շրջանում հայերի նկատմամբ երիտթուրքերի բռնի իսլամացման քաղաքականությանը՝ Հր. Սիմոնյանը հետևյալ գնահատականն է տալիս. *«Սահմանադրության և ազատության, արդարության ու հավասարության կեղծ կարգախոսներով հանդես եկող երիտթուրքերը այս հարցում ևս գերազանցեցին Կարմիր սուլթանին... Հակառակ հայոց ազգային մարմինների համառ ջանքերի, կենտրոնական կառավարությունը կրոնափոխ հայերի բռնի իսլամացումը չեղյալ հռչակող որևէ հրահանգ չուղարկեց տեղեր, և բռնի իսլամացված հայուհիները, սպառնալիքների ազդեցությամբ և իշխանությունների մեղսակցությամբ, համակերպվեցին իրենց սև ճակատագրին ու անհետ կորան հայության համար...»*[58]: Իսկ «Բյուզանդիոն» թերթի խմբագրի ստորև մեջբերվող խոսքերը լավագույնս պատկերում են դարերով շարունակված և Կիլիկիայի կոտորածի ժամանակ

[58] Նույն տեղում, էջ 342:

կազմակերպված իսլամացման քաղաքականությունը. *«Թուրքերը ժամանակաւ իսլամացուցին քրիստոնեաներն որքան կրցան... Եւ այսօր Կիլիկիոյ մէջ հայ կիները, աղջիկներն ու տղաքները գերի վարող եւ իսլամացնող խուժանն առհաւութեամբ մը (atavisme) իր թուրք նախահարց նոյն սիրական մէթոտին կը վերադառնայ պարզօրէն»*[59]:

[59] Նույն տեղում, էջ 340, մեջբերված է «Բյուզանդիոն»-ի 1909թ. մայիսի 21-ի (հունիսի 3-ի) 3843 համարից:

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1915-1916 ԹԹ.

Կիլիկիայի կոտորածից հետո արդեն ակնհայտ էր, որ երիտթուրքական իշխանություններն ամբողջ թափով լծվել էին հայերի բնաջնջման և ուծացման քաղաքականության վերջնական իրագործմանը: Այդ ժամանակաշրջանում պետական և քաղաքական կարևոր դերակատարներն արդեն բացահայտ խոսում էին հայերին բնաջնջելու կամ թուրքացնելու անհրաժեշտության մասին: Օրինակ, Հայոց ցեղասպանության հիմնական պատասխանատուներից մեկը՝ երիտթուրք պարագլուխ դոկտոր Նազիմը, հայտարարում էր. *«Պետությունը պետք է փարամերժորեն թուրք ըլլա. օտար տարրերու գոյությունը պատրվակ է եվրոպական միջամտության. պետք է բռնի թրքացնել զանոնք»*[1]: Երիտթուրքերը մեծ տեղ էին տալիս ոչ մուսուլման ժողովուրդների բռնի իսլամացման և թուրքացման հարցին ու շատ հաճախ մեղադրում էին իրենց նախնիներին, որ այդ գործը ժամանակին չեն հասցրել ավարտին: Նույն դոկտոր Նազիմը, խոսելով այդ մասին, կշտամբում էր օսմանյան տիրակալներին. *«Մեղապարտ թուլությամբ թույլ տվին, որ իրենց գրաված երկրներում բնիկ տարրերը ապրեն, զարգանան, փոխանակ թուրքացման քաղաքականությամբ նրանց ծուլելու»*[2]: Կայսրության բռնի իսլամացման մասին հայտարարությունները ստացան նաև մշակված բնույթ և երիտթուրքերի կուսակցական որոշումներում առաջնահերթություն դարձան: Այսպես, «Միություն և առաջադիմություն» կուսակցության 1911 թ. կոնգրեսում ընդունված որոշումը հստակ սահմանում էր. *«Կայսրության նկարագիրը պետք է ըլլա մահմեդական»*[3], իսկ ոչ մուսուլման ազգությունները կամ պետք է իսլամանան, կամ հեռանան երկրից: Երիտթուրք տարբեր պաշտոնյաներ և պատգամավորներ ցեղասպանությունից դեռևս տարիներ առաջ հայերին բռնի թուրքացման հրապարակային կոչեր էին անում[4]:

Այս ամենին զուգահեռ՝ այդ ժամանակաշրջանում կայսրությունում արդեն մոլեգնում էր պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որի տեսաբան Զիա Գյոքալփը բացահայտ քննադատում էր օսմանիզմը, գտնելով, որ Թուրքիայում պետք է լինի միայն մեկ ազգ՝ թուրքը[5]: Այս ամենը թույլ է

[1] Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 37:

[2] Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 108:

[3] Զարևանդ, նշված աշխ., էջ 44:

[4] Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, հ. 1, 1982, էջ 224:

[5] Նույն տեղում, էջ 60: Զիա Գյոքալփի կողմից օսմանիզմի քննադատության մասին առավել մանրամասն տե՛ս Սաֆարյան Ալ., «Օսմանյան մոդելի» քննադատությունը Զիա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում, Իրան-նամէ, Երևան, 2001, թիվ 37, էջ 1-6:

տալիս ենթադրել, որ օսմանյան քաղաքական վերնախավում ծրագրված ցեղասպանական քաղաքականության մեջ որոշակի տեղ էր հատկացվել նաև բռնի կրոնափոխությանը:

1909 թ. Կիլիկիայի կոտորածներից հետո հայերի վիճակն օրեցօր վատթարանում էր, և նրանց նկատմամբ կիրառվող կամայականությունները որևէ կերպ չէին կանխվում: Բազմաթիվ փաստեր ապացուցում են, որ 1915 թ. Հայոց ցեղասպանությանը նախորդող տարիներին շարունակվել է բռնի կրոնափոխության քաղաքականությունը: Օրինակ, Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի դեսպան Գիրսը 1912 թ. իր երկրի արտաքին գործերի նախարարություն հղած զեկուցագրում նշում է հայերի նկատմամբ կատարվող բռնությունների, այդ թվում և բռնի իսլամացման մասին ու հավելում. *«սանձարձակությունների համար մեղավորները երբեք պատասխանատվության չէին կանչվում»*[6]: Այն փաստը, որ այդ նույն տարիներին, չդիմանալով հալածանքներին՝ հայերը երբեմն ամբողջ գյուղերով են փոխել կրոնը (ընդունել իսլամ), արձանագրվել է նաև ռուսաստանյան և եվրոպական փաստաթղթերում ու հրապարակումներում[7]:

Այս ամենին զուգահեռ՝ երիտթուրքական իշխանությունների կողմից կրկին փորձեր էին արվում արևմտյան տերություններին ներկայացնել, թե իբր Օսմանյան կայսրությունում հայերը կամովին են իսլամ ընդունում, կատարվում էին որոշ քարոզչական քայլեր այդ կեղծիքն ապացուցելու համար: Օրինակ, Փարիզի համալսարանում ուսանող ոմն Նալբանդյան հենց Ֆրանսիայի մայրաքաղաքում «կամովին» ընդունեց իսլամ, փոխեց անունը՝ դառնալով Մեհմեդ Ալի, և այս ամբողջ թատերական բեմականացումը փորձ արվեց ծառայեցնել ի նպաստ թուրքական այն տեսակետի, թե հայերը որևէ բռնության չեն ենթարկվում Օսմանյան կայսրությունում[8], և եթե անգամ լինում են հայությունից հրաժարվելու դեպքեր, ապա միայն «կամովին»:

Բազմաթիվ փաստեր և վկայություններ ապացուցում են, որ 1915-23 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին կիրառվել են Օսմանյան կայսրությունում դարերի ընթացքում գործադրված իսլամացման գրեթե բոլոր մեթոդները, սակայն ավելի մշակված և պետության կողմից կանոնակարգված ձևով: Այդ տարիներին օսմանյան պետությունը հասարակության մոլեռանդ տարրերի հետ առավել համագործակցաբար է կազմակերպել հայերի բռնի կրոնափոխությունը: Պետք է առանձնահատուկ շեշտել, որ հայերի կրոնափոխությունը տեղի է ունեցել օսմանյան պետության պաշտոնա-

[6] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 50:

[7] Մասնավորապես տե՛ս Երեմեն Դ., նշված աշխ., էջ 127:

[8] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, էջ 144:

կան հրամանների համաձայն, և ամբողջ գործընթացը եղել է ներքին գործերի նախարարության, անձամբ նախարար Թալեաթի հսկողության ներքո: Այսօր արդեն հրապարակվել են հայերի բռնի իսլամացման և թուրքացման ուղղությամբ Թալեաթի տված բազմաթիվ բաց և ծածկագիր հրամաններ, որոնք լավագույնս ի ցույց են դնում օսմանյան պետության ցեղասպանական քաղաքականության մի կարևոր կողմը:

Սկսած 1915 թվականի կեսերից՝ Թալեաթը տարբեր նահանգներ հրամաններ է ուղարկում, որոնք որոշակի պայմաններով արտոնում են հայերին (հիմնականում կանանց և երեխաներին) ընդունել իսլամ և զերծ մնալ աքսորից: Թուրք պատմաբան և ցեղասպանագետ Թաներ Աքչամը իր արժեքավոր աշխատության մեջ օսմանյան արխիվային փաստաթղթերի համադրության արդյունքում մանրամասն և փաստագրական ճշգրտությամբ ներկայացնում է այդ ամբողջ գործընթացը: Մասնավորապես՝ ըստ արխիվային փաստաթղթերի, հայերի տեղահանության հրամանից հետո օսմանյան կենտրոնական իշխանությունները թույլ են տվել այն հայերին, ովքեր իսլամ են ընդունել, մնալ իրենց բնակավայրերում և չաքսորվել, սակայն սա տևել է մինչև 1915 թ. հուլիսի 1-ը[9]: 1915 թ. հունիսի 22-ին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան Վանի նահանգապետ Ջևդեթին,

[9] Akçam T., նշված աշխ., էջ 116:

Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիին, Էրզրումի նահանգապետ Թահսինին, Բիթլիսի նահանգապետ Մուսթաֆային, Խարբերդի նահանգապետ Սաբիթին, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդին և Սեբաստիայի նահանգապետ Մուամերին ուղարկում է «գաղտնի» դասիչով հեռագիր, որտեղ նշվում է, որ վերոհիշյալ նահանգներում բնակվող այն հայերը, որոնք առանձին-առանձին կամ խմբակային իսլամ կընդունեն, չպետք է տեղահանվեն կամ էլ պետք է տեղահանվեն, սակայն բնակեցվեն նույն նահանգի տարածքում[10]: Ի դեպ, ներկայումս էլ Թուրքիայի «կառավարության օսմանյան արխիվում» պահպանված այս հեռագրի վերջում Թալեաթը պահանջում է նաև հեռագիրը ստանալուց և համապատասխան մարդկանց տեղեկացնելուց հետո այն ոչնչացնել: Սակայն կարճ ժամանակ անց, անվտանգության նկատառումներից ելնելով, Թալեաթն արգելում և կոշտ սահմանափակումներ է մտցնում հայերի կրոնափոխության հարցում: Ընդհանրապես, Թալեաթի հրամանները պարզորոշ ցույց են տալիս, թե ինչ մանրակրկտությամբ է նա հետևել հայերի կրոնափոխության գործընթացին և փորձել վերահսկել յուրաքանչյուր զարգացում: Երբ ուսումնասիրում ենք 1915 թ. մի քանի ամիսների ընթացքում հայերի կրոնափոխության վերաբերյալ Թալեաթի հրամանները, տեսնում ենք, որ դրանցում կան ակնհայտ հակասություններ: Օսման-

[10] Նույն տեղում, էջ 117:

յան պետությունը փորձել է գտնել իր համար առավել վստահելի տարբերակ հայերի կրոնափոխության հետ կապված, և Թալեաթի հրամանները, որոնք վերաբերում են իսլամացմանը, ցույց են տալիս, որ իշխանությունները եղել են ճանապարհի փնտրտուքի մեջ: Այսպես, 1915 թ. հուլիսի 1-ին կրկին Թալեաթը նահանգներ է ուղարկում մեկ այլ հեռագիր, որով տեղեկացնում է, որ դադարեցվել է հայերի կրոնափոխության թույլտվությունը, և բոլոր հայերը, այդ թվում և կրոնափոխվածները, պետք է աքսորվեն[11]: Նկատենք, որ Թալեաթը հետամուտ է լինում իր հրամանի ի կատար ածմանը, մանավանդ որ հուլիսի 1-ից հետո էլ երբեմն արձանագրվում էին հայերի իսլամ ընդունելու և աքսորից խուսափելու դեպքեր: Ուստի 1915 թ. հուլիսի 20-ին Թալեաթը կրկին հեռագիր-հրաման է ուղարկում նահանգներ, որտեղ հղում անելով հուլիսի 1-ի հեռագրին՝ խստորեն պահանջում է «առանց որևէ բացառության» աքսորել հայերին և նաև նրանց, ովքեր իսլամ էին ընդունել[12]: Փաստորեն, հուլիսի 1-ից հետո որոշ ժամանակ պետությունը արգելում և մերժում է հայերի իսլամ ընդունելու դիմումները: Աքչամը մեջբերում է արխիվային մի փաստաթուղթ, ըստ որի՝ 1915 թ. օգոստոսի 16-ին Ուրֆայի գավառապետը Ստամբուլի կենտրոնական իշխանություններին տեղեկացնում է, որ տեղի հայերը իրենց

[11] Նույն տեղում, էջ 124:
[12] Նույն տեղում, էջ 125:

եկեղեցին վերածել են մզկիթի և ցանկանում են իսլամ ընդունել, սակայն երկու օր անց պատասխան է գալիս, որով այդ դիմումները մերժվում են[13]:

Հայերի կրոնափոխության հարցին օսմանյան պետությունը կրկին անդրադառնում է 1915 թ. նոյեմբերի 4-ին և վերստին թույլ տալիս հայերի իսլամացումը, նաև այն հայերի, ովքեր հասել էին աքսորավայր, սակայն այս անգամ արդեն յուրաքանչյուր անձի դեպք առանձին ուսումնասիրվում էր և նոր միայն թույլտվություն տրվում[14]: Դիմումների մի մասը մերժվում էր, իսկ մի մասն էլ ենթարկվում մանրակրկիտ քննության, որում ընդգրկված էին մի քանի կառույցներ, ինչպիսիք էին ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը, արդարադատության նախարարությունը և այլն: Ուշագրավ է, որ կրոնափոխության ալիքը չի շրջանցել նաև օսմանյան բանակում գտնվող հայ զինվորներին և, ըստ որոշ արխիվային փաստաթղթերի՝ արձանագրվել են կրոնափոխության դեպքեր բանակում ևս[15]: Սակայն մեր կարծիքով սրանք եղել են թերևս եզակի դեպքեր և բխել են բանակի կենսական կարիքներից և վերաբերել են օրինակ՝ հազվագյուտ մասնագետներին, զինվորական բժիշկներին և այլն,

[13] Նույն տեղում, էջ 129:
[14] Նույն տեղում, էջ 116:
[15] Նույն տեղում, էջ 134-135:

իսկ մնացած դեպքերում հայ զինվորները, ինչպես հայտնի է, զինաթափվել և կոտորվել են:

Կրոնափոխության գործընթացի հանդեպ թուրքական պետության հատուկ ուշադրության մի մաս պետք է համարել նաև այն, որ ըստ օսմանյան արխիվային փաստաթղթերի, կառավարությունը, ի դեմս ներքին գործերի նախարարության, հաշվի առնելով անցյալի փորձը, երբեմն հրահանգել է աքսորել նաև իսլամացված հայերին[16]: Նման մի օրինակի ենք հանդիպում թուրք ուսումնասիրող Սայիթ Չեթինօղլուի հոդվածում, որտեղ նշվում է, որ Օրդուից տեղահանված հայերը, չնայած իսլամ էին ընդունել, այնուամենայնիվ, աքսորվել էին: Իրենց ճանապարհին տարագիր իսլամացված հայերի քարավանը դադար է տվել Մեսուդիյե բնակավայրում, և տեղացի մուսուլմանները, տեսնելով նրանց վիճակը, անգամ խնդրագիր են ուղարկել կենտրոնական իշխանություններին՝ դադարեցնելու իսլամ ընդունած հայերի աքսորը, սակայն այդ դիմումը ևս մերժվել է[17]: Նմանատիպ մեկ այլ օրինակ է փոխանցում սամսունցի մի վերապրող, համաձայն որի՝ Չարշամբայի հայերի դիմումներն իսլամ ընդունելու վերաբերյալ նախ ընդունվել են, իսկ հետո. *«ամէնքն ալ տեղահան ըլլալով դէպի Մուսուլ քշուեցան Յուլիսի սկիզբը»*[18]: Փաստաթղթերն ապացուցում են նաև, որ երբեմն Թալեաթն անձամբ կարգադրություններ է ուղարկել տարբեր նահանգներ՝ հրամայելով տարբերություն չդնել քրիստոնյա և իսլամացված հայերի միջև և *«նույն ձևով վարվել նաև նրանց հետ»*[19]: Այս հրամանի կոնկրետ կիրառման օրինակների ենք հանդիպում Յոզղաթի հայության տեղահանությանը և կոտորածին վերաբերող աղբյուրներում: Մասնավորապես՝ տեղահանությունից առաջ Յոզղաթում հայտարարվել է, որ այն հայերը, որոնք կընդունեն իսլամ, չեն տարագրվի, սակայն անգամ այս պայմանը կատարողները ենթարկվել են կոտորածի, որի կազմակերպիչը հայ ժողովրդի դահիճներից մեկն էր՝ Բողազլյանի գավառապետ Քեմալ բեյը[20]: Ինչպես գրում է Գրիկերը. *«Պողազլեանի Գայմագամ Քէմալ Պէյ փողոցներու մէջ մունետիկ կանչել*

[16] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 29.

[17] Çetinoğlu S., 1915'te Mesudiye'den yükselen vicdanın sesi, Taraf, İstanbul, 18,11, 2010.

[18] Զավէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 145:

[19] Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 387:

[20] Չնայած Քեմալ բեյն օսմանյան դատարանի կողմից 1919թ. դատապարտվել է մահապատժի և կախաղան բարձրացվել, սակայն ընդամենը 3 տարի անց արդեն քեմալական իշխանությունների կողմից արդարացվել և հերոսացվել է: Նրա ընտանիքին նույնիսկ փոխհատուցում է տրվել՝ հայկական լքված գույքերի հաշվին: Այսօր ևս Քեմալ բեյը Թուրքիայում հերոսացված է. նրա անունով կան փողոցներ, դպրոցներ և այլն: Այս և այլ երիտթուրք ոճրագործների հերոսացման մասին տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2015, թիվ 2 (199), էջ 61-71:

տուաւ թէ Հայերը, որոնք իսլամացած են, պիտի չաքսորուին: Բայց անգամ մը որ իսլամացած հայերը իրենց պահուած տեղերէն դուրս ելան, Քէմալ զանոնք ղրկեց դէպի Կեսարիա եւ զանոնք կոտորել տուաւ»[21]: Փաստորեն, այս դեպքում մուսուլմանների կողմից սպանվում էին այն հայերը, որոնք պաշտոնապես արդեն մուսուլմաններ էին: «Կրոնակից» հայերին կոտորելը Քեմալ բեյը հետագայում բացատրել է նրանով, որ ինքն առաջնորդվել է ոչ թե «կրոնական», այլ «քաղաքական օրենքով»: Նման օրինակ է արձանագրվել նաև Սամսունում, որտեղ տեղի նահանգապետ Սուլեյման Նեջմի բեյի հրամանով կոտորվել են սամսունցի երեք հարյուր կրոնափոխ հայեր: Նկատենք նաև, որ Թալեաթի վերոնշյալ հրամանը վերաբերել է ոչ միայն դեռևս չաքսորված հայերին, այլև նրանց, ովքեր տարագրվել էին, երբեմն էլ արդեն հասել էին արաբական վիլայեթներ: Օրինակ, 1915 թ. դեկտեմբերի 17-ին Թալեաթը Հալեպի նահանգապետին, ի պատասխան վերջինիս հարցին, թե տարագիր հայերը ցանկանում են իսլամ ընդունել, պատասխանում է. *«Դէպի անապատ ընդհանուր առաքումներէ ազատելու մտքով իսլամութիւն ընդունող Հայերուն ըսեք որ անհրաժեշտ է որ իսլամանան իրենց աքսորավայր հասնելէն ետք»*[22]: Հայտնի էր, որ

[21] Գրիկէր, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 163:

[22] Նույն տեղում, էջ 173:

հայերն աքսորվում էին ոչ թե իրապես ինչ-որ տեղ հասնելու համար, այլ ճանապարհներին կոտորվելու նպատակով, և այս հրամանը Գրիկերը որակում է հետևյալ կերպ. *«կը նշանակէ թէ անոնք իսլամ պիտի ըլլան մահէն ետք»*[23]:

Կարևոր է նկատել, որ բռնի կրոնափոխության ենթակա թիրախների և մեթոդների հարցն արտացոլված էր նաև երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության «Տասը պատվիրաններ» անունով հայտնի փաստաթղթի 5-րդ կետում, որը որոշակի հստակություն է մտցնում կրոնափոխության գործընթացում: Հրահանգում նշված է. *«Հիսուն տարեկանից ցածր բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և մանկավարժներին ոչնչացրեք, կանանց և երեխաներին իսլամացրեք»*[24]:

Կարող ենք փաստել, որ Թալեաթի և ընդհանուր օսմանյան վերնախավի գործունեության մեջ հայերին իսլամացնելու խնդրում որոշակի հստակություն է նկատվում 1916 թ. մարտին, երբ հրահանգ է տարածվում, որ կրոնափոխ կարող են լինել միայն այն հայ կանայք, ովքեր ամուսնանում են մուսուլմանների հետ[25]: Որոշ ժամանակ անց իսլամացման

[23] Նույն տեղում, էջ 170:

[24] Dadrian V., Genç Türk ittihadcıları gizli konferansı ve I. Dünya savaşı Ermeni soykırımı kararı; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 335.

[25] Dündar F., Modern Türkiye'nin Şifresi: İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918), İstanbul, 2008, s. 303.

ենթակա մեկ այլ խումբ էլ է հստակեցվում՝ հայ երեխաները: Այսպես, 1916 թ. ապրիլի 30-ին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարությունը հայ երեխաների և կանանց վերաբերյալ ծածկագիր հրահանգ է ուղարկում որոշ նահանգապետարաններ ու գավառապետարաններ: Ստորև մեջբերում ենք օսմանյան արխիվում պահվող այդ հրահանգի որոշ կետեր.

«1. Այն ընտանիքները, որոնց տղամարդիկ աքսորվել են կամ գտնվում են զինծառայության մեջ, պետք է բաժանվեն այն գյուղերում և գյուղաքաղաքներում, որտեղ չկան օտարներ և հայեր:

2. Երիտասարդ և այրի կանայք պետք է ամուսնացվեն:

3. Մինչև տասներկու տարեկան երեխաները պետք է բաժանվեն մեր որբանոցները:

4. Եթե որբանոցները չեն բավարարում, պետք է բաժանվեն ապահովված մուսուլմաններին, որպեսզի նրանց դաստիարակեն տեղական սովորույթներով»[26]:

Հարկ է նշել նաև, որ աքսորված այն հայերը, որոնք մի կերպ փրկվել էին սպանդից և հասել արաբական նահանգներ, այնտեղ ևս որոշ ժամանակ անց ենթարկվել են բռնի կրոնափոխության: Տարագրված հայերի բռնի իսլամացման մասին տվյալների ենք հանդիպում Սիրիայում և Լիբանանում հաստատված գաղթական հայերի տեսուչ Հասան Ամջայի հուշերում: Այսպես, նոր ստանձնելով իր պաշտոնը՝ նա տեղեկանում է իր նախորդներից գաղթական հայերի նկատմամբ կիրառվելիք քաղաքականության մասին. *«Քիչ անց տեղակալը ժամանեց: Շնորհավորեց իմ նոր նշանակումը: Շարունակելով՝ պատմեց, որ տեղահանված այս բոլոր մարդիկ պետք է մահմեդականացվեն, իսկ մի տերտերի, որը բազմիցս մերժում էր դավանափոխ լինելու առաջարկները՝ սովամահ արեցին»*[27]:

Արաբական նահանգներում գտնվող տարագիր հայերի բռնի իսլամացման մասին ուշագրավ տվյալներ է փոխանցում թուրք գրող, ցեղասպանության տարիներին երիտթուրք պարագլուխ Ջեմալ փաշայի քարտուղար Ֆալիհ Ռըֆքը Աթայը: Նա պատմում է, որ ստեղծվել է բարձրաստիճան երիտթուրքերից կազմված հանձնաժողով, որը քննարկել է արաբական նահանգներ աքսորված հայերի խնդիրը. *«Հայերին հող և տուն տալու պայմանով իսլամացնելու համար նույնիսկ մի հանձնաժողով էր կազմվել: Այդ հանձնաժողովը մեկ անգամ իմ սենյակում հավաքվեց»*[28]:

---

[26] Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009, s. 185.

[27] Ամջա Հ., Տեղահանություն և ոչնչացում (օսմաներենից թարգմանությունը՝ Ա. Ավագյանի), Երևան, 2007, էջ 31:

[28] Atay F., Zeytindağı, İstanbul, 1989, s. 75.

Աքսորյալ հայերի կրոնափոխության իրական պատկերն է ներկայացնում հայ անվանի գրող, ցեղասպանության վերապրող Երվանդ Օտյանը: Նրա փոխանցած տվյալները ևս փաստում են, որ աքսորավայրերում հայերի կրոնափոխության գործընթացը ղեկավարում և կազմակերպում էին երիտթուրքական կուսակցության տեղի պատասխանատուները, իսկ հայերի նկատմամբ հարկադրման մեթոդը նույնն էր՝ իսլամ չընդունելու դեպքում կրկին տարագրություն դեպի արաբական անապատների խորքերը, այսինքն՝ դեպի մահ: Ըստ Երվանդ Օտյանի, այդ սպառնալիքն ազդեց տարագրյալ հայերի վրա. *«Չորս հինգ օր եկքը Համա գտնուող հինգ հազար տարագիր Հայերը այս ձեւով իսլամացան»*[29]: Ի դեպ, այդ կրոնափոխվողների շարքում է եղել նաև հենց ինքը՝ Օտյանը:

Կարող ենք փաստել նաև, որ հաշվի առնելով անցյալի փորձը, այսինքն՝ 1894-96 թթ. և 1909 թ. կոտորածներից հետո տարբեր պետությունների ճնշման ներքո բռնի իսլամացված հայերի վերադարձի խնդիրը, այս անգամ օսմանյան իշխանությունները ավելի մանրամասն էին պատրաստում փաստարկներ հետագայում նման իրավիճակից խուսափելու համար: Ուստի, այդ նպատակով շատ հաճախ պարտադրում էին հայերին ստորագրել փաստաթուղթ, որում ասված էր, թե իրենք կամովին են ընդունում իսլամ[30]: Ինչպես փոխանցում է Յոհաննես Լեփսիուսը. *«Պաշտոնյաների այն գրասենյակները, որոնք քննում էին աղերսագրերը, լցված էին այն մարդկանցով, որոնք ցանկանում էին իսլամություն ընդունել»*[31]:

Հայերի բռնի կրոնափոխության աճին զուգահեռ՝ արևմտյան տարբեր երկրների դեսպանատներ ուշադրության կենտրոնում են պահել այդ խնդիրը և իրենց մտահոգությունները հայտնել օսմանյան ղեկավարներին: Յոհաննես Լեփսիուսի դիտարկմամբ՝ արդեն սկսած 1915-ի վերջից և 1916-ի սկզբից *«հյուպատոսական զեկույցների հիմնական թեման բռնի հավատափոխություններն էին»*[32]: Այս խնդրով հետաքրքրվել է նաև Գերմանիայի դեսպան կոմս Մետերնիխը, որի բազմաթիվ դիմումներին ի պատասխան՝ օսմանյան վերնախավը հայտարարել է, թե իբր կրոնափոխություն տեղի չի ունենում, և դրանք առանձին դեպքեր են: 1916 թ. հուլիսի 3-ին դեսպանի զեկուցագրում նշվում է. *«Չնայած պաշ-*

---

[29] Օտեան Ե., Անիծեալ տարիներ (1914-1919). անձնական յիշատակներ, Երևան, 2004, էջ 233:

[30] Մև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, էջ 384:

[31] Նույն տեղում, էջ 386:

[32] Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի (թարգմանությունը՝ Վ. Մինալյանի), Երևան, 2006, էջ 46:

գոնական խոստումներին և հակառակ կարծեցյալ հրահանգների՝ շարունակվում է հայերի իսլամացումը: Դրա դեմ մեր առաջարկություններն անօգուտ են»[33]: Ի վերջո, 1917 թ. հունվարի 4-ին բազմաթիվ դիմումներից, բանավոր զրույցներից հետո Գերմանիայի դեսպանատունն օսմանյան կառավարությանը՝ Բարձր Դռանն է հանձնում բողոքի նոտա՝ կապված հայերի բռնի կրոնափոխության հետ[34]:

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում աչքի է զարնում նաև այն հանգամանքը, որ օսմանյան իշխանությունները շարունակ իրենց ուշադրության կենտրոնում են պահել կրոնափոխ հայերի խնդիրը, և չնայած պատերազմական վիճակին, անընդհատ նահանգներից պահանջել են տեղեկատվություն բնակության վայրերի, թվաքանակի, նրանց շրջանում տեղի ունեցող զարգացումների մասին: Այդ ամենում առկա է գերիշխող մի կարևոր հանգամանք. այն, որ կրոնափոխվելուց հետո էլ հայերը մնում էին անհուսալի և անվստահելի թուրքական իշխանությունների համար: Օրինակ, 1916 թ. օգոստոսի 24-ին կենտրոնական իշխանությունների հրամանով Օսմանյան կայսրության նախկին հայաբնակ վայրերում անցկացվում է մարդահամար, որի միակ նպատակը կրոնափոխված կամ հատուկ թույլտվությամբ

[33] Նույն տեղում, էջ 48:
[34] Նույն տեղում, էջ 48-49:

չաքսորված հայերի թվաքանակի ճշգրտումն էր[35]: Հրամանում առանձնահատուկ նշվում է ճշտել հատկապես կրոնափոխ հայուհիների թվաքանակը: Այս մարդահամարից կարճ ժամանակ անց՝ 1916 թ. սեպտեմբերի 25-ին, բոլոր նահանգներ և գավառներ են ուղարկվում «շտապ» դասիչով ծածկագիր հեռագիր-հրահանգներ, որոնցով պահանջվում էր իրականացնել, առանց բացառության, բոլոր հայերի մարդահամար: Հատուկ նշվում էր, որ հաշվարկվեն բոլոր դավանանքների (առաքելական, կաթոլիկ, ավետարանական), ինչպես նաև իսլամ ընդունած հայերը[36]: Ավելի ուշ՝ 1917 թ., կրկին կենտրոնական իշխանություններից հրաման է տարածվում նահանգներում «մեկ առ մեկ» ճշտել և զեկուցել հայերի մասին մանրամասն տեղեկություններ՝ ընտանիքների անունները, բնակության թաղամասերը, տների համարները, աքսորի չենթարկվելու պատճառները և այլն[37]: 1918 թ. գարնանը օսմանյան իշխանությունները հրաման են ուղարկում նահանգներ՝ կատարել միայն կրոնափոխ հայերի մարդահամար, բացի այդ՝ ներկայացնել նրանց անունները և իսլամ ընդունելուց հետո նրանց պահվածքը[38]:

[35] Dündar F., նշված աշխ., էջ 145:
[36] Նույն տեղում, էջ 322:
[37] Նույն տեղում, էջ 145-146:
[38] Նույն տեղում, էջ 323:

Հատուկ ուշադրություն էր դարձվում իսլամացված հայերի տեղաշարժին. այսպես, որպեսզի կրոնափոխ հայը կարողանար իր բնակության վայրից տեղափոխվել, կամ ճամփորդել, պետք է թույլտվություն ստանար ոչ թե տեղական իշխանություններից, այլ մայրաքաղաքից, կոնկրետ ներքին գործերի նախարարությունից[39]: Անգամ մեկ հայի տեղաշարժը կարևորվել է այն աստիճան, որ այդ հարցը դրվել է ներքին գործերի նախարարության անմիջական վերահսկողության ներքո: Ըստ Աքչամի, նման հրաման Թալեաթը նահանգներ է ուղարկել արդեն 1916 թ. փետրվարի 2-ին[40]: Հետագայում այդ հրամանը, որը վերաբերում է հայերի տեղաշարժի թույլտվությանը, քանիցս կրկնվել է: Սակայն խնդրի ամենաանտրամաբանական ու միևնույն ժամանակ բավական խոսուն և անգամ ծիծաղելի կողմն այն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ գտնվող Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթը անձամբ է զբաղվել յուրաքանչյուր իսլամացված հայի տեղաշարժի ուսումնասիրությամբ և իր հրահանգի խախտման դեպքերով: Նման օրինակ է պահպանվել կապված Կոնիայի նահանգում գտնվող իսլամացված մի հայուհու հետ, որը

[39] Akçam T., նշված աշխ., էջ 135:
[40] Նույն տեղում, էջ 136:

եղել է տեղի թուրք պաշտոնյաներից մեկի տան աղախինը և առանց ներքին գործերի նախարարությանը տեղյակ պահելու ճամփորդել է իրեն ապաստան տված մուսուլման ընտանիքի հետ: 1917 թ. հուլիսի 30-ին անձամբ Թալեաթը Կոնիայի նահանգապետարան է ուղարկում հեռագիր, որտեղ խոսում է հայ աղախնի հետ կապված դեպքի մասին և խստորեն հրահանգում հետևել իսլամացված հայերի տեղաշարժի վերաբերյալ ներքին գործերի նախարարության վերոնշյալ հրամանին[41]: Նմանատիպ մի խնդիր է լինում օսմանյան բանակի մայոր Հայրիի հետ, քանի որ նա Հալեպից իր հետ Ստամբուլ է բերում մի քանի հայ կանանց և աղջիկների: Այդ պատճառով մայորի նկատմամբ հարուցվում է քրեական գործ և ներքին գործերի նախարար Թալեաթը դիմում է անձամբ ռազմական նախարար Էնվերին, ընդ որում՝ «գաղտնի և հրատապ» գրությամբ, որտեղ պահանջում է երիտթուրք պարագլխից խիստ պատժի ենթարկել թուրք սպային՝ իսլամացված հայերի տեղաշարժի մասին օրենքը խախտելու համար[42]: Այս և նմանատիպ այլ օրինակները ի ցույց են դնում խնդրի լրջությունը և այն մոտեցումը, որը ի սկզբանե օսմանյան իշխանությունները որդեգրում էին այդ հարցի նկատ-

[41] Նույն տեղում, էջ 138:
[42] Նույն տեղում, էջ 139:

մամբ և որը հետագայում փոխանցվելու էր հաջորդող իշխանություններին և վարչակարգերին ու հասնելու էր մինչև մեր օրերը, ներկայիս Թուրքիայի Հանրապետություն:

Ըստ պատմաբան Աքչամի՝ իսլամացված հայերի տեղաշարժի մասին օրենքը հատկապես դժվար էր կիրառել հայ կանանց և աղջիկների պարագայում, քանի որ օսմանյան զինվորականները որպես հարճ կամ կին էին վերցրել աքսորյալ հայուհիների և իրենց բնակության փոփոխության պարագայում խնդիր էր ծագում այդ հայուհիների հետ կապված[43]: Հայերի տեղաշարժի վերաբերյալ օրենքում որոշ մեղմացումներ են արվում 1918 թ. օգոստոսի 19-ի որոշմամբ, որով թույլ է տրվում տեղական իշխանություններին արտոնել նահանգներում և գավառներում բնակվող իսլամացված հայերին «մի թաղամասից այլ թաղամաս գնալը», իսկ մայրաքաղաք Ստամբուլի պարագայում կրկին գործում էր արգելքը և ներքին գործերի անմիջական հսկողության տակ գտնվելու պայմանը[44]: Բացի այդ, համապատասխան կառույցներին հանձնարարվել է հատուկ նշումներ անել և անձնագրային բաժիններում ճանաչելի դարձնել իսլամացված հայերին, ինչպես նաև այդ ժամանակ տրամադրվել է հատուկ նշումով անձնագրեր[45], որոնք հետագայում դուրս են

[43] Նույն տեղում:
[44] Նույն տեղում, էջ 141:
[45] Türker Y., Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27, 08, 2007.

եկել կիրառությունից: Ի դեպ, մինչ օրս էլ թուրքական այդ կառույցներում հենց նման նշումների շնորհիվ են կարողանում ճանաչել և իմանալ իսլամացված հայերի սերունդներին ու անհրաժեշտության դեպքում համապատասխան վերաբերմունք դրսևորել:

Ավելորդ չէ նկատել նաև մեկ այլ մանրամասն ևս. կրոնափոխված հայերի վերաբերյալ ներքին գործերի նախարարությունը տարածել էր մի հրաման, համաձայն որի՝ նրանք պետք է փոխեին իրենց բնակավայրերը և հաստատվեին մուսուլմանական գյուղերում, որտեղ նրանց թվաքանակը պետք է լիներ ընդհանուր բնակչության առավելագույնը հինգ տոկոսը[46]: Այս հրամանի նպատակն ու տրամաբանությունն այն էր, որ կրոնափոխվելուց հետո հայերը չունենային նվազագույն պայմաններ իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար և ձուլվեին հոծ մուսուլման բնակչության մեջ: Ի դեպ, այս հրամանի մասին տվյալների ենք հանդիպում նաև հետագայում երիտթուրքերի դատավարության ժամանակ: Այսպես, պատասխանելով քննիչի հարցին, թե արդյոք Յոզղաթի նահանգում և Բողազլյան գավառում մնացի՞ն չտարագրված հայեր, ոճրագործ Քեմալ բեյը պատասխանում է. *«Թէ Եոզղատի գաւառին եւ թէ Պողազլեանի գաւառակին մէջ չտեղահանուած Հայեր մնացին:*

[46] Գրիկէր, նշված աշխ., էջ 162:

Ասոնք իսլամ գիւղերու մէջ բաժանուեցան: Այրերու թիւը քիչ էր. մեծ մասը կիներ եւ մանուկներ էին: Ներքին գործերու նախարարութիւնը հրամաններ ղրկած էր կառավարիչներուն զանոնք բաժնելու իսլամ գիւղերու մէջ»[47]:

Բռնի իսլամացված հայերի հետ կապված Թալեաթի և թուրքական պետական մեքենայի մտահոգության պատճառների մասին հետաքրքիր դիտարկում է արել Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում գտնված գերմանական բանակի սպա Վ. Հոֆմանը. *«Այս ամէնից յետոյ եթէ մահմեդական հայերը ցայժմ իրենց մտածողութեամբ ու զգացողութեամբ հայ են մնացել (եւ վստահաբար ոչ միայն ներկայ իրենց սերունդներով), ապա որպէս այլակերպուած մահմեդականներ՝ աւելի վտանգաւոր են լինելու թուրք ժողովրդի համար հէնց իրենց նուազ բացայայտ լինելու պատճառով»*[48]:

Չափազանց ուշագրավ տեղեկություն ենք հանդիպում Կարեն Խանլարյանի գրքում, որտեղ նշվում է, որ երիտթուրքերի տապալումից հետո արդեն 1919 թվականի վերջերին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարությունից գաղտնի շրջաբերական է ուղարկվում գավառներ, որտեղ կարգադրվում է իսլամացնել այն բոլոր հայերին, որոնք

[47] Նույն տեղում, էջ 419-420:

[48] Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005), Անթիլիաս, 2009, էջ 34:

ինչ-ինչ պատճառներով չեն տեղահանվել կամ հետո վերադարձել են իրենց նախկին բնակավայրերը: Այդ պարագայում միայն նրանք կարող էին հետ ստանալ իրենց ունեցվածքը[49]: Սա ևս մեկ անառարկելի ապացույց է, որ բռնի իսլամացումը շարունակել էր մնալ Օսմանյան կայսրության պետական քաղաքականության կարևոր տարրերից մեկը՝ անկախ պետության վիճակից. անգամ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ջախջախված օսմանյան պետությունը, ծանրագույն պայմաններում գտնվելով հանդերձ, չի հրաժարվել իր նախորդներից ժառանգած քաղաքականությունից:

Այսպիսով, համադրելով առկա փաստերը՝ կարող ենք արձանագրել, որ 1915 թ. օսմանյան պետական մեքենան փնտրտուքներից հետո հայերի շրջանում առանձնացնում է հիմնական երկու և մեկ հարակից թիրախային խմբեր, որոնց նկատմամբ էլ կիրառում է ցեղասպանական այդ արարքը՝ բռնի կրոնափոխությունը: Թիրախային հիմնական երկու խմբերն էին հայ երեխաները և կանայք, սակայն բացի նրանցից իսլամացման ենթակա են եղել նաև սահմանափակ թվով հայ արհեստավորներ և բացառիկ մասնագիտության տեր մարդիկ: Հարկ է նկատել, որ եթե սկզբում արտոնվել է հայ արհեստավորներին կրոնափոխ լինել և մնալ

[49] Նույն տեղում, էջ 39-40:

տվյալ գավառում կամ այնտեղ, որտեղ կարիք կա, ապա արդեն 1915 թ. օգոստոսի 29-ի հրամանով նշվում էր, որ կարող են կրոնափոխ լինել և չաքսորվել ոչ թե բոլոր հայ արհեստավորները, այլ միայն նրանք «*ում կարիքն ունի պետությունը*»[50]: Օրինակ՝ Սեբաստիայի Դավրա գյուղի բնակիչները մեծ մասամբ ջրաղացպաններ էին և այդ պատճառով չաքսորվեցին, սակայն ամբողջ գյուղով ընդունեցին իսլամ[51]: Բացի այդ՝ հրամայվում էր անուն առ անուն գրանցել չաքսորված արհեստավորներին՝ նշելով նաև նրանց արհեստներն ու զբաղվածության ոլորտները:

[50] Dündar F., նշված աշխ., էջ 298:
[51] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, էջ 50:

ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ 1915-1916 ԹԹ.

Հայ երեխաների բռնի իսլամացման քաղաքականությունը և կիրառման մեթոդները

Ինչպես արդեն նշվել է, ոչ մուսուլման ժողովուրդների երեխաների բռնի իսլամացումն ու թուրքացումը խոր արմատներ ուներ Օսմանյան կայսրությունում: Փաստերը ցույց են տալիս, որ այդ քաղաքականությունը կիրառվել է ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության անկումը, և Հայոց ցեղասպանության տարիներին արձանագրվել են պետության ու մուսուլման հասարակության կողմից հայ երեխաների զանգվածային իսլամացման բազմաթիվ դեպքեր: Ընդ որում, պետության և հասարակության միջև եղել է, ըստ էության, փոխադարձ շահերի վրա հիմնված համաձայնություն:

Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների նկատմամբ օսմանյան իշխանությունների կիրառած քաղաքականության երկու հիմնական ուղղություններն են. ա) երեխաները վերցվել են պետական թուրքական որբանոցներ՝ իսլամացվելու և թուրքացվելու նպատակով, բ) հայ երեխաներին պետությունն իր համապատասխան կառույցներով և

մեթոդներով բաժանել է մուսուլման բնակչությանը՝ կրկին իսլամացնելու և ուծացնելու նպատակով:

Մեծ հայասեր և հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենը, անդրադառնալով հայերի բռնի կրոնափոխության խնդրին, առանձնացնում է երեխաներին՝ նշելով. *«Իսլամ ընդունողների և թլպատվողների թիվը մեծ էր, հատկապես երեխաների, որոնց ձեռք էին գցում իշխանությունները»*[1]: Հայտնի ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացման խնդրին, իրավացիորեն նշում է, որ թուրքերի համար այդ երեխաները նաև դիտվում էին որպես թուրք ժողովրդի էթնիկ գենային նկարագիրը հարստացնելու համար փնտրված աղբյուր[2]: Չնայած որ այս ձևակերպման հետ որոշ մասնագետներ չեն համաձայնվում, դրա մեջ տեսնելով ծայրահեղական և ռասիստական շեղումներ, սակայն փաստերը խոսում են հենց Դադրյանի վարկածի օգտին: Իրականում էլ հայ աղջիկ երեխաները դառնալու էին թուրքերի և քրդերի հարեմների զոհ և երեխաներ ունենալով՝ հարստացնելու էին նրանց գենետիկ ֆոնդը, իսկ հայ տղա երեխաները, իսլամացվելուց հետո, դաստիարակվելու էին որպես թուրք մուսուլման: Խոսելով Հայոց ցեղասպանության տարիներին հայերի և, հատկապես երեխաների, բռնի կրոնափոխության մասին՝ հետազոտող Մաթիաս Բժորնլունդը նշում է. *«Միայն կրոնը չէր, որ պետք է պաշտոնապես փոխել դաժան և սիստեմատիկ ճնշումների ներքո: Այդ ճակատագրին պետք է արժանանային նաև հայոց լեզուն, մշակույթը, նույնիսկ վերապրողների անձնանունները թե՛ սեփական տներում, թե՛ կառավարության հովանու ներքո գտնվող որբանոցներում և թե՛ հասարակական ոլորտում՝ թողնելով միայն պարբերական թուրքացման պատրաստ կենսաբանական «հում նյութը»»*[3]:

Հայ երեխաների իսլամացման քաղաքականությունը թուրք հեղինակները անհաջող փորձեր են անում ներկայացնել հիմնականում հումանիզմի համատեքստում: Այսպես, պատմաբան Իբրահիմ Աթնուրի գրքում ասվում է, թե օսմանյան կառավարությունը, հասկանալով, որ աքսորի ժամանակ երեխաները բազմաթիվ դժվարությունների են բախվում, դիմեց *«հայ երեխաների խնամքի և կրթության համար*

[1] Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, էջ 451:

[2] Dadrian V., Soykırımın kurbanları çocuklar; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 313.

[3] Bjørnlund M., "'A fate worse than dying': sexual violence during the Armenian genocide" (unpublished manuscript, 2006), p.18. մեջբերված, Ունգոր Ռ., Կրոնափոխություն և փրկություն. գոյատևման ռազմավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, Երևան, 2008, թիվ 22, էջ 104:

երկու մեթոդի»[4]: Այդ մեթոդներից մեկը երեխաներին թուրքական որբանոցներում տեղավորելն էր, իսկ մյուսը՝ մուսուլման ընտանիքներին բաժանելը: Հատկապես մուսուլմանական ընտանիքներին բաժանելու փաստը թուրք հեղինակը փորձում է հիմնավորել հետևյալ անհեթեթ փաստարկով. *«Անշուշտ, քանի որ պատերազմական վիճակում հնարավոր չէր բոլոր երեխաներին տեղավորել որբանոցներում, ուստի ընտրվել էր այս ճանապարհը»*[5]: Սրան զուգահեռ՝ Աթնուրը նշում է, թե թուրքական որբանոցներում հայ երեխաների նկատմամբ չէր կիրառվում էթնիկ և կրոնական խտրականություն, սակայն այս ամենի կողքին նա չի կարողանում շրջանցել օսմանյան ղեկավարների՝ հայ երեխաներին թուրքացնելու մասին տված հստակ հրամանները: Նման ամենացայտուն օրինակներից է Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվերի նամակը՝ ուղղված ներքին գործերի նախարար Թալեաթին, որտեղ նա խնդրում է հայ որբերին ուղարկել հատկապես թուրքական որբանոցներ: 1916 թ. մայիսի 9-ին գրված նամակում ասվում է. *«Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին եթե վերցնեք մեր որբանոցները, ես պատրաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա համար*

[4] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 52.

[5] Նույն տեղում, էջ 53:

անհրաժեշտ ծախսերը»[6]: Օսմանյան կառավարության մեկ այլ անդամ՝ կրթության նախարարը, Մարդինի նահանգապետարան ուղարկած նամակում հստակ կարգադրում է որբանոցներ վերցնել միայն կրոնափոխ հայ երեխաներին[7]: Հայ երեխաների թուրքացման պետական քաղաքականության մասին անհերքելի տվյալներ են ներկայացված հենց օսմանյան արխիվում, որոնցից, օրինակ, 1915 թ. հուլիսի 10-ին թվագրված փաստաթղթում համապատասխան կառույցներին և պատասխանատուներին հրահանգվում է. *«Երեխաներին իսլամական սովորույթներին համապատասխան ձևով բաժանել բարեկեցիկ ընտանիքներին այն գյուղերում և գյուղաքաղաքներում, որտեղ չկան հայեր, եթե երեխաների թիվը շատ է, նրանց տալ մաքուր և պատվարժան ընտանիքներին, որոնք ապրուստը դժվար են հոգում, այդ նպատակով ամեն երեխայի համար ընտանիքներին վճարել ամսական 30 քուրուշ, կազմել սպույգ աղյուսակներ, թե ում են տրվել այդ երեխաները և մեկ օրինակ ուղարկել կենտրոն»*[8]: Այս հրահանգում գրված *«իսլամական սովորույթներին համապատասխան»* ձևակերպումն բացահայտ ենթադրում էր կրոնափոխություն: Ավելորդ չէ նկատել, որ նման հրահանգ-

[6] Նույն տեղում, էջ 56-57:

[7] Նույն տեղում, էջ 57:

[8] Նույն տեղում, էջ 65:

ներ ուղարկվել են նաև ավելի ուշ, սակայն բոլորի բովանդակությունը եղել է նույնը, և խստորեն պահպանվել է հրահանգի այն կետը, որը պահանջում էր երեխաներին տալ իսլամական դաստիարակություն, այսինքն՝ իսլամացնել: Յուրաքանչյուր նման հրահանգին որոշ ժամանակ անց հաջորդել է հաշվետվության պահանջ, թե ինչպես է կատարվել հայ երեխաներին մուսուլման ընտանիքներին բաժանելու գործընթացը և ինչպես է ընթանում *«իսլամական դաստիարակությունը»:* Այս և նման այլ փաստերի ազդեցության տակ անգամ թուրք պատմաբան Աթնուրը, ի վերջո, եզրակացնում է. *«Կարելի է ընդունել, որ մուսուլմանական գյուղերում բաժանված երեխաների մի մասը բռնությամբ է կրոնափոխ եղել»*[9]*:*

Օսմանյան իշխանությունները մուսուլմաններին են բաժանել ոչ միայն հայ որբ երեխաներին, այլև անգամ նրանց, ում ծնողները դեռ ողջ են եղել: Օրինակ, Մարզվանի, Ամասիայի և Թոքատի (Եվդոկիա) տարագիր հայության աքսորի ժամանակ պետական պաշտոնյաները քարավաններից առանձնացրել են երեխաներին, իսկ նրանց տարագիր ծնողներին հրամայել շարունակել ճանապարհը: Այնուհետև հայտարարություններ են տարածել շրջակա գյուղերի մուսուլման բնակչության շրջանում, որպեսզի գան և վերցնեն իրենց նախընտրած հայ երեխային[10]:

Հ. Հովակիմյանը փոխանցում է, որ Տրապիզոնի վիլայեթում ևս հայերի բռնի իսլամացումն առավելապես տարածվել է երեխաների վրա. *«Հայերու փեղահանման եւ բնաջնջման հետ փեղի ունեցաւ նաեւ բռնի իսլամացումը, որ ֆիզիքական գոյութիւնը պահելու միջոց մըն էր միայն: Շատերը պատրաստուեցան ընդունիլ մահմետականութիւնը, բայց ան չգործադրուեցաւ մեծերու վերաբերմամբ, այլ ի զորու եղաւ միայն փոքրերուն համար»*[11]*:*

Հայ որբերի իսլամացման ավելի համակարգված և վերահսկվող գործընթաց տեղի էր ունենում թուրքական որբանոցներում: Ավելորդ չէ դիտարկել, որ թուրքական որբանոցներում առավելապես հավաքվում էին հայ տղա երեխաներ՝ ըստ երևույթին յուրահատուկ «ենիչերիական» պատրաստվածություն անցնելու համար, իսկ աղջիկ երեխաները բաժանվում էին մուսուլմանական տներում՝ որպես ապագա կանայք կամ հարեմների զոհեր: Որբանոցներում հայ երեխաների թուրքացման մասին պահպանվել են բազմաթիվ փաստեր. օրինակ, Ջ. Կիրակոսյանը, հենվելով ամերիկյան աղբյուրների վրա, նշում է. *«Հայ որբերին թուրքական անուններ էին տալիս և դաստիարակում որբանոցներում որ-*

[9] Նույն տեղում, էջ 68:

[10] Զավէն Արքեպիսկոպոս, նշված աշխ., էջ 138:

[11] Յովակիմեան Յ., նշված աշխ., էջ 264:

պես թուրքերի»[12]: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ չնայած պատերազմական վիճակին, թուրքական կառավարությունը ձգտում էր հայ որբ երեխաներին բաժանել հատկապես թուրքական որբանոցներում: Թուրքական կառավարության այս «հոգատարության» մասին այդ տարիներին Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսը գրում է. *«Բացահայտ է, որ կառավարությունը որոշել է ամեն կերպ թույլ չտալ, որ այստեղ մնացած արտասահմանյան միսիոներները կրթական կամ կրոնական գործունեություն ծավալեն: Որոշ հայուհիների ամուսնացնում են մահմեդականների հետ, որոշ հայ երեխաների էլ մահմեդականացնում են, բայց ոչ ոքի թույլ չեն տալիս ուրիշ, օտար ազդեցությունների ենթարկվել»*[13]: Օսմանյան ղեկավարների հայ երեխաներին թուրքական որբանոցներ վերցնելու շահագրգռվածությունը հստակորեն պայմանավորված էր նրանց իսլամացնելու և ձուլելու ցանկությամբ, քանի որ այդ տարիներին Օսմանյան կայսրության տարածքում գտնվում էին նաև եվրոպական ու ամերիկյան միսիոներական որբանոցներ ևս:

[12] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, հ. 2, էջ 42:

[13] Դևիս Լ., Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917թթ. (թարգմանությունը՝ Գ. Ջանիկյանի), Երևան, 2001, էջ 279-280:

Հայ որբերի թուրքացման հարցում հատկապես ակտիվ գործունեություն է ծավալել երիտթուրք պարագլուխներից Ջեմալ փաշան, որի նախաձեռնությամբ Լիբանանում «Ային Թուրա» ճիզվիտական մենաստանում հիմնվել է որբանոց, որտեղ հավաքել են շուրջ 1200 հայ երեխա՝ իսլամացնելու և թուրքացնելու նպատակով[14]: Ջեմալ փաշան հայ երեխաներին իսլամական և թուրքական կրթություն տալու նպատակով այնտեղ է հրավիրում հայտնի պանթյուրքիստ, կին գրող Հալիդե Էդիփին: Երեխաներին թուրքացնելու համար պատասխանատու այս տիկինը հետագայում պատմել է, որ Ջեմալ փաշան հայ երեխաներին տեղավորում էր այդ որբանոցում, այնուհետև փոխում նրանց կրոնն ու անունները՝ տալով թուրքական և մուսուլմանական անձնանուններ[15]: Ի դեպ, Ջեմալ փաշայի որոշումը որպես թուրք մուսուլմաններ գրանցել հայ որբերին որոշ մասնագետներ կապում են դեռևս 1915 թ. հուլիսի 1-ին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության կողմից Սիրիայի, Հալեպի, Մուսուլի նահանգապետարան և Ուրֆայի, Զորի գավառապետարաններին ուղարկված ծածկագիր հրամանի հետ, որի 2-րդ կե-

[14] Parseghian N., "New revelation on the Armenian genocide", www.aztagdaily.com/EnglishSupplement/ FEA_02012006_0001.htm

[15] Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009, s.187, նույնը տե՛ս նաև՝ Adıvar H., Mor Salkımlı Ev, İstanbul, 2008, s. 264.

տում հստակ նշվում է. *«Նոր ստեղծվելիք հայկական շրջաններում կտրականապես արգելվելու է հայկական դպրոց բացել և բոլոր հայ երիտասարդներն ու երեխաները պետք է կառավարությանը պատկանող դպրոցներում սովորեն»*[16]: Հետաքրքիրն այն է, որ հայ երեխաների անվանափոխման ժամանակ հաճախ նախկին հայկական անուն-ազգանվան առաջին տառերով են կազմվել թուրքական անունները: Օրինակ՝ Հարություն Նազարյանը վերածվել է Համիդ Նազիմի, Պողոս Մերդանյանը՝ Բեքիր Մուհամադի, Սարգիս Սարաֆյանը՝ Սաֆվադ Սուլեյմանի և այլն[17]: Փաստերը վկայում են, որ «Ային Թուրա» որբանոցում հայ երեխաներին տրվել է կրոնական (իսլամական) և թուրքական ազգայնական դաստիարակություն, ինչին, իբրև թե, դեմ է եղել Հալիդե Էդիփը: Սակայն նրա ժամանակակիցների վկայությամբ, որը մեջբերված է թուրքագետ Ավետիս Փափազյանի կազմած գրքում, հենց Հալիդե Էդիփն է եղել հայ որբերին որպես մուսուլմաններ դաստիարակելու ջատագովը[18]: Ուշագրավ է, որ երիտթուրք պարագլուխների հետ ունեցած ջերմ կապերով, ինչպես նաև հայ երեխաներին իսլամացնելու և թուր-

[16] Özdemir H., նշված աշխ., էջ 187:

[17] Parseghian N., նշված հոդ.:

[18] Հայոց ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի), Երևան, 1989, էջ 11:

քացնելու ուղղությամբ գործադրած եռանդուն ու հանցավոր ջանքերով հայտնի Հալիդե Էդիփը հետագայում՝ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո, «Վաքիթ» թերթում հայտարարել է. *«Մեր զօրաւոր օրերուն՝ քրիստոնեաները եւ մասնաւորաբար Հայերը միջնադարեան դրութեամբ աշխատեցանք բնաջնջել ծառայութիւն մատուցանելու համար Թուրքերուն»*[19]:

«Ային Թուրա» որբանոցի և այնտեղ հայ որբերի թուրքացման մասին խիստ արժեքավոր մի տվյալ ենք հանդիպում հենց այդ որբանոցի նախկին «սան» Թորոս Թադևոսյանի՝ պատմաբան Ջոն Կիրակոսյանին 1983 թ. ուղղված նամակում: Նամակի հեղինակը մեկն է այն 1200 հայ երեխաներից, որոնք Ջեմալ փաշայի հրամանով հավաքվել էին «Ային Թուրա» որբանոցում՝ իսլամացվելու և թուրքացվելու նպատակով: Այս արժեքավոր վկայության մեջ որբանոցի սարսափները վերապրածի շուրթերով ներկայացվում է իրականությունը, և հիմնովին հերքվում են թուրքական տեսակետները որբանոցի «հումանիստական» բնույթի վերաբերյալ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հարկ ենք համարում ընդարձակ մեջբերում անել նամակից. *«Մեզ տեղ հասցնելուց անմիջապես հետո թուրքացրին, անուններս փոխեցին, դասարանների բաժանեցին, Կ.Պոլսից հրավիրված դասատու-*

[19] Գրիկէր, նշված աշխ., էջ 13:

ները սկսեցին մեզ հետ պարապել: Խստիվ արգելեցին հայերեն խոսել: Հատուկ դասարանների ավագներ նշանակեցին մեծահասակներից, որոնց պատվիրել էին հայերեն խոսողներին ցուցակագրել պատժելու համար: Այս ավագները հավատարմությամբ կատարում էին իրենց պարտականությունները: Ամեն երեկո, երբ ամբողջ երեխաներին հավաքում էին աշխատողների հետ մասին ՀԱՌՅԱ-ի և բոլորը միատեղ երեք անգամ «Թագավորը երկար ապրի» էին գոչում, այդ հանդիսավոր ժամին կարդում էին օրվա հայերեն (գյավուրջա) խոսողների ցուցակը և թուրքավարի պատժում ամեն օր, մինչև որ բոլոր երեխաները վերջ տվեցին հայերեն խոսելուն: Պատժի ձևը հետևյալն էր. մեջքի վրա պառկեցնում էին, երկու ոտքերը վերև բարձրացրած երկու հոգի բռնում, իսկ ինքը՝ որբանոցի ղեկավարը, անձամբ գավազանով 100-200 հարված հասցնում ոտքերին: Վայ այն երեխային, որն այդ ծեծի ժամանակ կանչեր մայրիկ, մամա ջան, գազանը առավել կգազազեր և կշարունակեր իր հարվածները՝ մինչև քիչ հանդարտվեին կրքերը: Ծեծի այդ ձևը թուրքերեն ֆալախա քաշել էին անվանում: Շատ տղաներ ոտքերից վնասվածքներ ստացան և կաղ մնացին»[20]: Այստեղ տեղին է հատուկ նշել, որ ցեղասպանության տեսական սահմանման մեջ

[20] Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (Արման Կիրակոսյանի խմբագրությամբ), Երևան, 2009, էջ 298-299:

Ռաֆայել Լեմկինը հստակ ընդգծել է, որ ցեղասպանական արարք է համարվում ազգային լեզվի, կրթության, դասագրքերի նկատմամբ թշնամական վերաբերմունքը: Եվ այս որբանոցի պատերից ներս տեղի ունեցածը թուրքական քաղաքականության ցեղասպան բնույթի ևս մեկ անհերքելի ապացույցն է:

Խոսելով որբանոցում հավաքված հայ երեխաների դաստիարակության մասին՝ Թ. Թադևոսյանը նշում է. *«Մեզ դաստիարակում են մոլեռանդ թուրքեր, սովորեցնում թունդ շովինիստական ազգային երգեր, թուրք ազգի անցյալն ու ներկան գովերգող և պանթուրքիզմն ու պանիսլամիզմը գովաբանող: Անցել է ավելի քան վաթսուն տարի, և տակավին հիշում եմ այդ երգերից առանձին քառյակներ»*[21]: Ցեղասպանությունը վերապրողի հուշերից նաև պարզ է դառնում, որ պարտությունից հետո, երբ թուրքերը փախչելիս են եղել, հանձնարարել են որբանոցի դեղագործ Ռիզա բեյին ճաշը թունավորելու միջոցով սպանել որբանոցի բոլոր երեխաներին: Սակայն թուրքացած բուլղար Ռիզա բեյը չի կատարել այդ ոճիրը, ինչի մասին հետագայում պատմել է որբանոցի սաներից մեկին, որին պատահաբար հանդիպել է Ստամբուլում: Նշենք, սակայն, որ «Ային Թուրա» որբանոցի շուրջ 300

[21] Նույն տեղում, էջ 299:

որբ հայ երեխաներ տարատեսակ հիվանդությունների, սովի հետևանքով մահանում են և նրանց բոլորին միասին թաղում են որբանոցի տարածքում, եղբայրական գերեզմանատանը, որը միայն 1993-ին շինարարական աշխատանքների ժամանակ է ի հայտ գալիս և որտեղ 2010 թ. կանգնեցվում է խաչքար[22]:

Ստորև հարկ ենք համարում մեջբերել հայ երեխաների բռնի իսլամացման մեթոդներից ևս մեկը, որը լավագույնս ի ցույց է դնում թուրքական պաշտոնական պատմագրության տարածած հայերի «կամովին» իսլամ ընդունելու թեզի սնանկությունը: 1915 թ. բռնի կրոնափոխված, այնուհետև իր արմատներին վերադարձած հայազգի Հենրին այսպես է պատմում իսլամացման և դրանից հետո նրանց հանդեպ մուսուլման շրջապատի ունեցած վերաբերմունքը. *«Միասին գնացինք քաղաքապետարանի շենք, և դատավորը մեզ բոլորիս նմանատիպ հարցեր տվեց. «Տղաս, քո կրոնը լավ կրոն չէ, պետք է պարսավես, պարսավո՞ւմ ես»: Մենք էլ պատասխանեցինք. «Այո՛, պարոն»: «Իրական կրոնը՝ իսլամը ընդունո՞ւմ ես» «Այո՛, պարոն»: «Տղաս, սրանից հետո քո անունը լինելու է Ասսադ օղլու Աբդուրահման, այլ ոչ թե*

[22] Քիւրքճեան Ա., Իսլմաց(ու)ած հայեր. Թուրք, քիւրտ, արաբ, Թորոնթօ, 2014, էջ 9:

Վարդանյան»...Այնուհետև բոլոր տղաները պետք է թլպատվեին, դա էլ, իհարկե, արեցինք: Դրանից հետո կարողանալու էինք հանգիստ փողոց դուրս գալ, սակայն նույնիսկ այս ամենից հետո էլ թուրք երեխաները սկսեցին մեզ անհանգստացնել անվանելով «կրոնափոխ» (դյոնմե)»[23]:

Նկատենք նաև, որ ավելի ուշ, երիտթուրքերի տապալումից հետո, հենց ինքը՝ Ջեմալ փաշան, պատմելով իր «որբախնամ» գործունեության մասին, ասել է. *«Բռնագաղթի ենթարկված երեխաներին մահից և բարոյական վտանգներից փրկելու համար Սիրիայում պահեցի: Նրանց համար որբանոցներ բացեցի. մեկ հատը Լիբանանում՝ Ային Թուրա մենաստանում, երկրորդը՝ Դամասկոսում, երրորդն էլ՝ Հալեպում: Այս որբանոցները, որտեղ կային 3000-4000 երեխաներ, անձամբ իմ պաշտպանության տակ վերցրեցի և երեխաներին ուտելիք, հագուստ և դաս տալու համար ամբողջ ծախսերը վճարեցի բանակի բյուջեից»*[24]: Իհարկե, այս ամենը նա ասում էր, երբ արդեն տապալված էր երիտթուրքական իշխանությունը, և Ջեմալ փաշան խնդիր ուներ հումանիստ երևալու, սակայն անգամ նրա ինքնախոստովանական և ինքնապաշտպանական հայտարարությունները վկա-

[23] Miller D., Miller L., Tanıklar Dilinden Ermeni Soykırımı, İstanbul, 2006, s. 210.

[24] Özdemir H., նշված աշխ., էջ 23:

յում են այդ «որբախնամ» գործունեության ցեղասպանական բնույթի մասին:

Դրանից ավելի վաղ Ջեմալ փաշան, որին որոշ ուժեր երբեմն փորձում են փոքր-ինչ ավելի մեղմ նկարագիր տալ, 1916 թ. օգոստոսի 1-ին Թալեաթին է ուղարկում մի ծածկագիր զեկույց, որտեղ հաշվետվություն է տալիս Սիրիայում աքսորյալ հայերի նկատմամբ իր իրագործած ցեղասպանական արարքների մասին: Այդ զեկույցում աշակերտի պես հաշվետվություն տվող ոճրագործը բառացիորեն նշում է. *«Ես Սիրիա աքսորված հայերին անապատում հավաքեցի և նրանցից 10 հազարին իսլամացնելով ցրեցի Սիրիայի գյուղաքաղաքներով: Այրի կանանց մուսուլման տղամարդկանց հետ ամուսնացրեցի, որբերին իմ հիմնած որբանոցներ ուղարկեցի և սկսեցի իսլամական կրթություն տալ»*[25]: Փաստերը և հենց միայն այս զեկույցը ապացուցում են, որ Ջեմալ փաշային մյուս ոճրագործ երիտթուրքերից տարբերվող հատկանիշներով և գործելաոճով ներկայացնելու թեզը լիովին արհեստական է և կեղծ:

Ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու թուրքացումը կատարվում էին նաև մուսուլմանական հասարակության միջոցով, որին էլ արտոնում և խրախուսում էին օսմանյան իշխանությունները: Մուսուլմանների կողմից հայ երեխաների «փրկության» շարժառիթը ոչ թե հումանիստական, այլ ավելի շատ շահադիտական մղումներն են եղել: Խլելով և ձուլելով հայ երեխաներին՝ թուրք և քուրդ գյուղացիները մի կողմից՝ ձեռք էին բերում ձրի աշխատուժ, մյուս կողմից՝ հատկապես հայ աղջիկ երեխաները համալրում էին նրանց հարեմները: Ինչպես նշվում է ցեղասպանությունը վերապրած մտավորական Վահան Մինախորյանի արժեքավոր գրքում. *«Հայու երեխայ ունենալը մի մարմանջ էր դարձել. ամէն մարդ ուզում է մեկը ունենալ»*[26]: Աքսորի ընթացքում հաճախ նաև տեղի է ունեցել երեխաների առևտուր, ու խոսելով այդ մասին՝ ցեղասպանության ականատես-վերապրող հայտնի գրող Երվանդ Օտյանը նշում է. *«Մանուկներու վաճառումը տեղահանութեան ահռելի եղեռնին ամէնէն զահանդեցնող (սարսափեցնող) դրուագներէն մէկն է: Երբեք կարելի չէ մարդկութեան աւելի նուաստացում մը երեւակայել»*[27]: Նա նաև նշում է, որ բազմահազար հայ որբեր են եղել արաբների մոտ. *«Համայի արաբ ընտանիքներուն քով թերեւս 2-3 հազար Հայ մանուկներ կը գտնուէին, մեծ մասով փոքրիկ աղջիկներ, 4-6-8 տարեկան, երբեմն աւելի մեծ»*[28]:

[25] Akçam T., նշված աշխ., էջ 178:

[26] Մինախորեան Վ., 1915 թվականը. արհաւիրքի օրեր, Թեհրան, 2006, էջ 328:

[27] Օտեան Ե., նշված աշխ., էջ 209:

[28] Նույն տեղում, էջ 241:

Հայոց ցեղասպանության ականատես վերապրող Արամ Անտոնյանն իր բացառիկ արժեքավոր գրքում, խոսելով հայ երեխաների իսլամացման մասին, շեշտում է, որ մուսուլմանական ընտանիքները հայ որբերին վերցնում էին զուտ շահադիտական նկատառումներով, սակայն դա ևս անհանգստացնում էր օսմանյան կենտրոնական իշխանություններին, քանի որ արդեն որոշակի տարիքի հասած հայ երեխաները կարող էին պահպանել իրենց հայկական ինքնագիտակցությունը և հարմար պահի հետ դառնալ: Փորձելով վերահսկել նաև այդ գործընթացը՝ Թալեաթը 1915 թ. նոյեմբերի 5-ին հրահանգ է ուղարկում Հալեպ, պահանջելով. *«Կ'իմանանք թէ Սվազի, Մամուրէթ-Իւլ-Ազիզի, Տիարպէքիրի, Էրզրումի նահանգներէն գրաւուած եւ ճամբուն ընթացքին իրենց ծնողներուն մեռած ըլլալուն հետեւանքով անոք մնացած ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) պզտիկները կարգ մը իսլամ ընտանիքներու կողմէ որդեգրութեան եւ սպասաւորութեան կ'ընդունուին: Ձեր նահանգին մէջ գտնուող այդ կարգի տղաքը հաւաքելով՝ գրաւուութեան վայրերը (անապատները) ղրկելնիդ եւ յարմար դատուած կերպով ժողովուրդին այս մասին պէտք եղած հրահանգները տալերնիդ իբր շրջաբերական կը ծանուցանենք»*[29]: Սակայն Թալեաթի՝ հայ երեխաների հետ կապված իրական «մտահոգության» բուն պատճառը պարզ է դառնում կրկին Հալեպ ուղարկված նրա հաջորդ ծածկագիր հրահանգում, արդեն 1915 թ. դեկտեմբերի 12-ին, որում ասվում է. *«Հաւաքեցէք եւ սնուցէք այն որբերը միայն որոնք չեն կրնար յիշել զուլումը որուն ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէք»*[30]:

Բացի հրամաններից, որ Թալեաթն ուղարկել է տարբեր նահանգներ, նա իր անձնական օրագրում գրի է առել իսլամացված հայ երեխաների տվյալները, մասնավորապես, թե որ նահանգում մուսուլմաններին պետության գիտությամբ քանի հայ որբ է բաժանվել: Ստորև ներկայացնում ենք Թալեաթի օրագրի այդ հատվածը, որը տպագրվել է 2009 թ. թուրք ուսումնասիրող Մուրադ Բարդաքչիի գրքում.

«Էրզրումի նահանգ՝ 500
Ադանայի նահանգ՝ 90
Դիարբեքիրի նահանգ՝ 1800
Տրապիզոնի նահանգ՝ 2292
Սեբաստիայի նահանգ՝ 1500
Ճանիկի գավառ՝ 561
Մարաշի գավառ՝ 25»[31]:

[29] Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 180:

[30] Նույն տեղում, էջ 187:

[31] Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, İstanbul, 2009, s. 89.

Պատմաբան Թաներ Աքչամը, անդրադառնալով Թալեաթի օրագրում առկա թվային փաստերին և, մասնավորապես, որբ հայ երեխաների հարցին, իրավացիորեն նշում է, որ թվերը թերի են և չեն ներառում մոտ 30 նահանգի և գավառի մասին տվյալներ[32]: Եվ իրոք, ենթադրելի է, որ սա ամբողջական ցուցակը չի եղել, այլ ուղղակի Թալեաթը մուտքագրել է ստացված տվյալները նահանգներից, որոնք հետագայում լրացվել են, սակայն հենց միայն այն տողերը, որտեղ ցեղասպանության ճարտարապետներից մեկը նշում է մուսուլմաններին բաժանված հայ որբերի գոյության փաստը, լիովին տեղավորվում է Ցեղասպանության կանխարգելման կոնվենցիայի 5-րդ կետի շրջանակներում, համաձայն որի՝ ցեղասպանություն է համարվում մեկ էթնիկ, կրոնական խմբի երեխաներին բռնությամբ մեկ այլ խումբ տեղափոխելը[33]:

Ցեղասպանագետ Վ. Դադրյանը քննության է ենթարկել հայ որբերի հետ կապված քիչ ուսումնասիրված ևս մի թեմա: Ըստ Դադրյանի, հայ տղա երեխաները դարձել են նաև մանկապղծության զոհեր, քանի որ նրանց տիրացած մուսուլմանները այդ երեխաների հետ ունեցել են հոմոսեքսուալ կապեր: Հենվելով Հայոց ցեղասպանության շվեյցարացի ականատեսի վկայությունների վրա՝ Դադրյանը նշում է. *«Հայ տղա երեխաները թե՛ ցեղասպանության հանցագործությունների ժամանակ և թե՛ իրենց որդեգրած թուրքական ընտանիքներում ենթարկվել են հոմոսեքսուալ բնույթի բռնաբարությունների»*[34]:

Հայ երեխաների հետ կապված՝ առկա է նաև մեկ այլ տեսակետ, որի համար բերված ապացույցները բավական իրատեսական են դարձնում վարկածը: Այսպես, ցեղասպանության սկզբնական շրջանում թուրքերը և այլ մուսուլմաններ հայ երեխաներին վերցնում էին որպես ռազմավար, սակայն հետագայում, հանգամանքների փոփոխությունից հետո, նրանք ցանկացել են այլ կերպ ներկայացնել իրենց արարքը: Ցեղասպանության ականատես-վկա, գրող Վահան Մինախորյանը հետաքրքիր դիտարկում է անում՝ նշելով, որ ռուսական զորքի հաղթանակների ժամանակ թուրքերը ձգտել են իրենց տներում հայ երեխա պահել, որպեսզի *«բարերարի հանգամանքով պատասխանատուութիւնից ազատուին...»*[35]:

Որբ հայ երեխաները գտնվել են Օսմանյան կայսրության և հետագայում հանրապետական Թուրքիայի կարևոր ռազմական և քաղաքական գործիչներից ևս մեկի՝ Քյազըմ Քարաբեքիրի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, նրա հրամանով 1919-1921 թթ. Արևմտյան Հայաստանի

[32] Աքչամ Թ., նշված աշխ., էջ 408:
[33] http://www.genocide-museum.am/arm/genocide.php

[34] Dadrian V., Soykırımın kurbanları çocuklar; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 322-323.
[35] Մինախորեան Վ., նշված աշխ., էջ 327:

տարբեր նահանգներից հավաքվել են որբ հայ տղա երեխաները, որոնք Քարաբեքիրի հիմնած հատուկ դպրոցներում իսլամացվել են, ստացել ռազմական կրթություն, և հենց նրանցից է հետագայում ստեղծվել, այսպես կոչված, *«երեխաների բանակը»*[36]: Թուրքական աղբյուրները ևս փաստում են, որ այդ որբերին տրվում էր թուրքական ազգայնական կրթություն[37]:

Ի դեպ, հետաքրքիր է, որ ըստ պատմաբան Արսեն Ավագյանի՝ տղա երեխաներից շատերը հետագայում լուրջ դիրք են զբաղեցրել հանրապետական Թուրքիայի բանակի սպայական անձնակազմում[38]: Աղջիկ հայ երեխաներին Քարաբեքիրի հրամանով սովորեցնում էին մանկաբարձական գործ[39] կամ կար ու ձև, այնուհետև բաժանում մուսուլմանական գյուղերում[40]:

Փաստենք նաև, որ Քարաբեքիրի այս գործունեությունը հստակորեն տեղավորվում է օսմանյան մանկահավաքի սովորույթների շրջանակներում, իսկ զինվորական կրթություն

[36] Ավագյան Ա., Թուրքական բանակի բարձրաստիճան սպայության էթնիկական կազմի խնդրի շուրջ, Հայկական բանակ, Երևան, 2007, թիվ 1, էջ 40:

[37] Başyurt E., Ermeni evlatlıklar, İstanbul, 2006, s. 41.

[38] Ավագյան Ա., նշված հոդ., էջ 42:

[39] Այս առումով, պատահական չէ, որ հետագայում Թուրքիայի շատ բնակավայրերում հանդիպում են բռնի կրոնափոխված հայուհիներ, որոնք աշխատում էին որպես մանկաբարձ:

[40] Özbay F., 1911-1922 yıllarında Anadolunun Kimsesiz Kız Çocukları; Savaş Çocukları: Öksüzler ve Yetimler, İstanbul, 2003, s. 113.

ստացած հայ որբերը կարող են նաև համարվել Օսմանյան կայսրության «վերջին ենիչերիներ»: Այս նույն թեմայի համատեքստում արժե նաև դիտարկել Թուրքիայի ռազմական համակարգում բարձր դիրքի և հասարակական մեծ ճանաչման հասած Թուրքիայի առաջին կին օդաչու Սաբիհա Գյոքչենի կենսագրությունը և գործունեությունը[41]: Գյոքչենը որդեգրվել է Թուրքիայի հիմնադիր-նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կողմից, կրոնափոխ արվել և դաստիարակվել որպես ռազմական օդաչու. այսինքն՝ հանրապետական Թուրքիայի լիդերները ևս շարունակել են օսմանյան մանկահավաքի ցեղասպան մեթոդները և քաղաքականությունը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ որբերի բռնի իսլամացումը կրել է պետական քաղաքականության բնույթ և գտնվել թուրք բարձրաստիճան ղեկավարների ու մուսուլմանական հասարակության տարբեր շերտերի ուշադրության կենտրոնում:

Հայ կանանց և աղջիկների բռնի իսլամացումը

Բռնի իսլամացման ենթակա հաջորդ թիրախի՝ հայ կանանց և աղջիկների նկատմամբ օսմանյան իշխանություններ-

[41] Սաբիհա Գյոքչենի ծագման սկանդալային բացահայտման և նրա գործունեության մասին մանրամասն տե՛ս, Dink H, Lokmagözyan D., Sabiha-Hatunun sırrı, Agos, 6, 02, 2004.

որը կրկին վարում էին համակարգված քաղաքականություն, որի հիմնական նպատակն էր նրանց բաժանել մուսուլմաններին՝ որպես կին կամ աղախին: Այստեղ ևս բացահայտ երևում է պետության և մուսուլմանական հասարակության փոխշահավետ համագործակցությունը: Փաստերը ցույց են տալիս, որ բռնի իսլամացումն ամենաշատը կիրառվել է այս թիրախային խմբի հանդեպ, և կրոնափոխ հայերի ընդհանուր թվի երկու երրորդը կազմել են հենց կանայք[42]:

Հայոց ցեղասպանության մեկնարկից հետո թուրքական հասարակության տարբեր շերտեր, այդ թվում և «մտավորականներ», հանդես եկան այդ ոճրի պաշտպանության դիրքերից, և ժամանակի մամուլում կարելի էր հանդիպել բացահայտ ցեղասպանական կոչերի: Օրինակ, 1915 թ. սեպտեմբերին երիտթուրքական ազդեցիկ «Թանին» թերթում տպագրված հոդվածում որպես Օսմանյան կայսրության փրկության միակ ուղի էր ներկայացվում *«բոլոր հայ կանանց ոչնչացումը կամ մահմեդականացումը»*[43]: Օսմանյան արխիվներում պահպանված են հայ կանանց վերաբերյալ հրահանգներ, որոնցում հստակ արտոնվում է հայուհիների հետ մուսուլմանների ամուսնությունը: Իսկ ավելի ուշ հրահանգվում է *«երիտասարդ աղջիկների և այրի կանանց՝ մուսուլմանների հետ ամուսնանալու անհրաժեշտությունը»*[44]:

Այրի հայ կանանց պետական կառույցների կազմակերպմամբ բաժանում էին մուսուլմաններին, և նման քաղաքականությունը նոր չէր Օսմանյան կայսրության համար. 20-րդ դարի սկզբին թուրքերն իրագործեցին այն նույն մեթոդը, ինչն իրականացրել էր օսմանյան սուլթան Օրհանը դեռևս 14-րդ դարում: Այսպես, գրավելով Նիկեա քաղաքը և կոտորելով տղամարդկանց մեծ մասին՝ սուլթան Օրհանը այրի մնացած կանանց բաժանել է իր զինվորների միջև. *«Այդ ժամանակ սուլթանը իր կադիներին ու սիփահիներին դիմեց հետևյալ հրամանով. «Ովքեր կարիք ունեն, թող այս կանանցից իրենց կնության վերցնեն»»*[45]: Նման օրինակները բազմաթիվ են նաև Հայոց ցեղասպանության տարիներին և հանդիպում են գրեթե բոլոր նահանգներում[46]:

Պոլսո Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը, որն եղել է արևմտահայության ցեղասպանության ականատեսն ու վկան, իր արժեքավոր հուշագրության մեջ նկարագրում է, թե ինչպես են, աքսորի ժամանակ հայ տղամարդկանց կո-

[42] Dündar F., նշված աշխ., էջ 157:

[43] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2, էջ 31:

[44] Atnur İ., նշված աշխ., էջ 72:

[45] Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 84:

[46] Օրինակ, Սեբաստիայի նահանգի հայուհիների բռնի իսլամացման և մուսուլմանների մեջ բաժանելու մասին մանրամասն տե՛ս Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, էջ 386:

տորելուց հետո, վարվել անպաշտպան մնացած կանանց, երեխաների և ծերերի հետ. *«Մնացեալ ժողովուրդէն կին, ծեր և մանուկ Խարբերդի վիլայէթին մէջ պարզապես իբրեւ անտէր ապրանք նկատուած իսլամ ժողովուրդին քմահաճոյքին ենթարկուած են, ամենաբարձր պաշտօնեաներէն սկսեալ մինչեւ հասարակ գիւղացին իրեն հաւնած կինը կամ աղջիկը իրեն կնութեան առած է բռնի իսլամացնելով, պզտիկ մանուկները ուզողը առած է ուզածին չափ և մնացեալները ճամբայ հանուած են հետիոտն և անօթի առանց պաշարի, գտնուած չէթէներուն սուրին կեր ըլլալու կամ անօթութենէ մեռնելու համար»*[47]:

Բայց չպետք է կարծել, թե հայ կանանց կրոնափոխությունն ընթանում էր հանգիստ և բավական էր միայն նրանց ցանկությունը՝ ընդունել իսլամ: Ինչպես նկատում է 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն. *«Եթէ նոյն իսկ անոնք* (հայ կանայք- Ռ.Մ., Մ.Ա.) *ընդունէին նոր հաւատքը, ինչ որ քիչերը կ'ընէին, նորէն իրենց երկրային փառապանքները վերջ չէին գտներ»*[48]: Հայ կանանց կրոնափոխության պարտադիր պայմաններից էր այն, որ նրանք պետք է ամուսնանային մուսուլմանների հետ, հակառակ պարագայում աքսորվում էին. *«Եթէ իբր ամուսին*

[47] Զավէն Արքեպիսկոպոս, նշված աշխ., էջ 137:

[48] Մորգենթաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, (թարգմ.՝ Ենովք Արմեն), Երևան, 1990, էջ 259-260:

ներկայացող Մահմետական մը չգտնուէր, այն ատեն, նոր կրօնափոխը կը փարագրուէր, որչափ ալ ուժգնապէս Իսլամութեան համար իր հաւատարմութեանը վրայ պնդէր»[49]: Հայոց ցեղասպանության ականատես, արաբ բեդևի ցեղապետի որդի Ֆաիզ էլ-Ղոսեյնը նույնպես նշում է, որ հաճախ անգամ կրոնափոխությունը չէր ազատում աքսորից և կոտորածից: Ըստ նրա, օսմանյան կառավարությունը հայտարարել էր, որ այն հայ կանայք, որոնք ցանկանում են իսլամ ընդունել և ամուսնանալ թուրքի կամ քրդի հետ, կարող են մնալ և չտեղահանվել[50]: Այս օրինակներից կարելի է ենթադրել, որ օսմանյան իշխանությունները հայ կանանց և աղջիկների իսլամացումը վստահելի են համարել միայն այն դեպքում, երբ նրանք կդառնային մուսուլմանի կին: Մյուս կողմից՝ երիտթուրք պարագլուխները փորձել են վերահսկել իսլամացող կանանց թվաքանակը և որոշ սահմանափակումներ մտցնել: Այսպես, օրինակ, 1915 թ. սեպտեմբերի 29-ին Թալեաթը ծածկագիր հրահանգ է ուղարկում Հալեպի նահանգապետարան, որով պահանջում է դադարեցնել մուսուլման բնակչության ամուսնություններն աքսորյալ հայ կանանց հետ. *«Կը լսենք թէ ժողովուրդէն եւ պաշտօնեաներէ ոմանք կարգ մը հայ կիներու հետ կ'ամուսնանան: Ասիկա*

[49] Նույն տեղում, էջ 260:

[50] El-Chusein F., Bir Müslümanın gözüyle Ermenilerin şahadeti, Potsdam, 1922, s. 51-52; տե՛ս նաև Hür A., 1915, Masonluk ve din değiştirme, Agos, 24, 04, 2009.

խստիւ արգիլելով, կարեւորութեամբ կը յանձնարարեմ որ այդ կարգի կիները ջոկելով առաքուին (դեպի անապատ)»[51]:

Տարբեր աղբյուրներում կարելի է հանդիպել փաստերի, որ Հայոց ցեղասպանության տարիներին կազմակերպվել են ստրկավաճառական շուկաներ[52], շարունակելով օսմանյան «հարուստ» ավանդույթները[53]: Բազմաթիվ են փաստերը, որ աքսորի ճանապարհին տարագիր հայերին ուղեկցող պատասխանատուները, ոստիկանները որպես ստրուկներ վաճառում էին հայ կանանց, երեխաներին, որոնք ևս, բնական է, ենթարկվում էին բռնի իսլամացման: Յ. Լեփսիուսը վկայում էր. *«Տարագիրների քարավանները գերիների շրջուն շուկաներ էին»*[54]: Զավեն պատրիարքը նկարագրում է բացահայտ ստրկավաճառության շուկայի մի տեսարան. *«Կիներու և մանուկներու կարաւանները ամէն քաղաք կամ աւան հասնելուն կառավարական շէնքին առջեւ կը ցուցադրուին, որպէսզի իսլամները իրենց ընտրութիւնները կատարեն»*[55]: Ստրկավաճառական տեսարանների ականատես

[51] Անտոնեան Ա., նշված աշխ., էջ 154:

[52] Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, էջ 255:

[53] Օսմանյան կայսրությունում ստրկավաճառության մասին առավել մանրամասն տե՛ս Ղլեչյան Վ., Ստրկավաճառությունը օսմանյան կայսրությունում XIX դարում, Արևելագիտության հարցեր, Երևան, 1987, պրակ 3-4, էջ 107-120:

[54] Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, էջ 388:

[55] Զավէն Արքեպիսկոպոս, նշված աշխ., էջ 138:

է եղել և հետագայում իր հուշերում պատմել ցեղասպանության վերապրող Արշալույս Մարտիկանյանը, որը նկարագրելով իր և բախտակից այլ հայ աղջիկների վիճակը՝ նույնպես վկայել է. *«Գյուղացիները տանում էին աղջիկներին դաշտերում աշխատանքի համար, ինչպես ստրկուհիների, մյուսները տանում էին իրենց հարեմ կամ տնային աշխատանքների համար, իսկ ոմանք՝ որպես հարճ Իզմիրի և Կոստանդնուպոլսի ստրկավաճառական շուկաներում վաճառելու համար: Մուսա բեյը մեզնից յուրաքանչյուրի համար պահանջում էր 10 մեջիդիե (8 դոլար)»*[56]: Ֆաիզ Էլ-Ղոսեյնը փոխանցում է, որ այդ տարիներին արաբական անապատներում ամենաէժան «ապրանքներից» էին հայ կանայք. օրինակ, 1-5 ոչխարը կարելի էր փոխանակել մեկ հայ կնոջ հետ, և սա համարվում էր թանկ գին[57]:

Ցեղասպանության տարիներին հայ կին ունենալն այնքան սովորական էր, որ շատ մուսուլմաններ, անկախ սոցիալական վիճակից, կարողացել են ձեռք բերել մեկ կամ նույնիսկ մի քանի հայուհիներ: Նույն Ֆաիզ Էլ-Ղոսեյնը, անդրադառնալով աքսորի ճանապարհներին առևանգված և բռնի իսլամացված հայուհիների խնդրին, նկատում է. *«Դիարբեքիրում մուսուլմանի տուն չկար, որտեղ 4-5 հայուհի*

[56] Растерзанная Армения, Ереван, 2005, стр. 49.

[57] El-Chusein F., նշված աշխ., էջ 49:

աղախին չլիներ: Նույնիսկ մի փոքրիկ խանութի տերը ուներ հայ աղախին: Դիարբեքիրում սպրկական կյանք վարող հայ կանանց և աղջիկների թիվը հասրապ գերազանցում էր 5000-ը»[58]: Ի դեպ, նման տվյալ է փոխանցում նաև շվեդուհի միսիոներ Ալմա Յոհանսոնը, սակայն՝ արդեն Խարբերդի նահանգի վերաբերյալ, նշելով. *«Խարբերդում գրեթե յուրաքանչյուր թուրք հայ կին էր վերցրել»*[59]: Երվանդ Օտյանը ևս, նկարագրելով արդեն արաբական նահանգներում տիրող վիճակը, նշում է. *«Ամէն ոսրիկանի, ամէն զինուորականի, ամէն պաշրօնեայի քով առնուազն մէյմէկ Հայուհի կը գրնուէր»*[60]:

Փաստերը ցույց են տալիս, որ բռնի իսլամացված և հաճախ թուրքական հարեմներ քշված հայ կանայք շարունակել են մնալ հալածված վիճակում: Կեսարիայի իսլամացված հայ կանանց մասին ցեղասպանության ականատես-վերապրող Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանի փոխանցած տեղեկությունները լավագույնս պատկերում են նրանց վիճակը: Աքսորի ճանապարհին Պալաքյանը հանդիպում է մի խումբ կրոնափոխ հայ կանանց, որոնցից մեկը հոգևորականին է ներկայացնում իրենց վիճակը. *«Ախ, Հայր սուրբ,*

[58] Նույն տեղում, էջ 46:

[59] Յոհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, 2008, էջ 53:

[60] Օտեան Ե., նշված աշխ., էջ 384:

լմնցանք. ցավ չմնաց որ չքաշենք, փորձանք չմնաց որ գլխնուս չգար: Մեզ խաբեցին ըսելով, որ եթե իսլամանաք՝ ամեն փորձանքե կ'ազատիք, մենք ալ գոնե մնացածը փրկելու հույսով իսլամացանք: Բայց ավելի գեշ եղավ վիճակնիս. մեր երիտասարդ հարսներն ու աղջիկները բռնի «նիքեահ» ընելով իրենց հարեմները տարին: «Զուլում» չմնաց, որ չընեին, չարչարանք չմնաց, որ մեզի չտային: Երանի թե աքսոր գնացած ըլլայինք և մենք ալ մեռած ըլլայինք և ազատած, գոնե խղճմտանքնես սևցուցած չէինք ըլլար...»[61]:

Երվանդ Օտյանը արաբական նահանգներում գոյատևելու համար ստիպված է լինում զբաղվել անգամ աղբահավաքությամբ և, աշխատանքի բերումով լինելով մուսուլմանների տներում, այնտեղ հանդիպում է բազմաթիվ իսլամացված հայուհիների, որոնց մասին հետագայում գրում է. *«Միայոր ջարդէն վերապրողներ էին ասոնք, որոնք մէյ մէկ տեղացիի հետ ամուսնանալով իրենց կեանքը փրկած էին: Գիտնալով որ Հայեր ենք միջոցը կը գտնէին մեզի մօտենալուն եւ քանի մը բառ փսփսալու: Այդ բառերը ընդհանրապէս անէծքներ էին իրենց նոր ամուսիններուն ուղղուած»*[62]: Իրենց նոր ընտանիքների հանդեպ տածած հակակրանքի մեկ այլ օրինա-

[61] Պալաքյան Գ., Հայ գողգոթան: Դրվագներ հայ մարտիրոսագրութենէն..., Երևան, 1991, էջ 256:

[62] Օտեան Ե., նշված աշխ., էջ 284:

կի ենք հանդիպում եվրոպաբնակ թուրք ուսումնասիրող Ուղուր Ունգորի հոդվածում, որտեղ հեղինակը մեջբերում է բռնի իսլամացված հայուհու քուրդ թոռան խոսքը, համաձայն որի՝ տատը մինչև կյանքի վերջ բարկանալիս նրանց անվանել է *«քուրդ սրիկաներ»*[63]: Մուսուլմանների առևանգած հայուհիների կենսակերպը քննելով՝ ազգագրագետ Հարություն Մարությանը տալիս է հետաքրքիր գնահատական՝ «տրավմատիկ առօրյա»[64], այսինքն՝ փոխելով կրոնը, նրանք, միևնույն է, գտնվել են մեծ մասամբ արհամարված կարգավիճակում:

Ցեղասպանության տարիներին առևանգված կամ միայնակ մնացած հայուհիների հետ կապված մյուս ցավալի և միևնույն ժամանակ նուրբ խնդիրը նրանց շրջանում մարմնավաճառների կամ ստիպված թեթևաբարո կյանք վարողների հարցն է, որը շատ քիչ է արծարծված[65]: Ստիպողաբար այդ քայլին գնացած հայ կանայք իրենց ենթագիտակցության մեջ արդեն բացառում էին դեպի հայություն վերադառնալու հնարավորությունը և անգամ առիթի դեպքում մեծ մասամբ չէին գնում այդ քայլին: Այս երևույթի պատճառաբանությունը հենց իրենց կողմից գիտակցվող խախտված բարոյական նորմերն էին, ինչպես նաև հայ հասարակության կողմից սպասելի բացասական վերաբերմունքը: Երվանդ Օտյանը նկարագրում է աքսորից ետ դարձի ճանապարհին իր հետ պատահած մի դեպք, որը խորությամբ ի ցույց է հանում վերոնշյալը: Այսպես, գնացքի վագոնի մեջ հանդիպելով թուրք ոստիկանի սիրուհի դարձած մի բանդըրմացի հայուհու՝ նրան կոչ է անում թողնել թեթևաբարո կյանքը և վերադառնալ նորմալ կյանքի, քանի որ արդեն ավարտին է հասել ցեղասպանությունը և տեղահանությունը: Օտյանի այդ հորդորին կինը պատասխանում է. *«Ալ շատ ուշ է, բանը բանէն անցած է... երեք տարի այս կեանքը վարելէս ետքը, ո՞վ կընայի երեսս... Տես, ես պանտրըրմացի պատուաւոր ընտանիքի աղջիկ մըն եմ, բայց հիմա չեմ համարձակիր տեղս դառնալ, որովհետեւ հիմա ամօթ կը զգամ իմ ազգականներուս եւ բարեկամներուս երեսը նայելու...»*[66]: Օտյանը նաև ընդհանրացնելով այս դեպքը նշում է. *«Այս կինը արդարեւ բացառութիւն մը չէր եւ հազարներ կային որոնք այդ կնոջ վիճակին մատնուած կը վերադառնային իրենց տարագրութե-*

[63] Ունգոր Ու., նշված հոդ., էջ 107:

[64] Մարության Հ., Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, Երևան, 2008, թիվ 22, էջ 112:

[65] Բռնի կրոնափոխված հայուհիների, այդ թվում և ստիպված մարմնավաճառությամբ զբաղվողների վերինտեգրման խնդիրների մասին տե՛ս օրինակ Tachjian V., Gender, nationalism, exclusion: the reintegration process of female survivors of the Armenian genocide, Nation and Nationalism, 2009, #15, p. 60-80.

[66] Օտեան Ե., նշված աշխ., էջ 522:

նէն: Եվ դեռ քանինե՞ր կային, որոնք Հալէպի, Դամասկոսի, Գոնիայի հանրապետներուն մէջ կը գտնուէին ու չէին ուզեր նոր ազատութենէն օգտուիլ իրենց տեղերը վերադառնալու համար, որովհետեւ ալ մոլութեան մէջ փճացած էին»[67]:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ հայ կանանց և աղջիկների բռնի իսլամացումը Հայոց ցեղասպանության տարիներին ևս իրականացվել է պետության անմիջական մասնակցությամբ և ուղղորդմամբ: Այն հստակ ցեղասպանական արարք է, որում թուրքական պետությունն ու հասարակության որոշակի մասը համագործակցել են որպես հանցակիցներ: Ավելորդ չէ նկատել, որ այսօր Թուրքիայում ծավալվող էթնիկ ինքնության խնդրի համատեքստում առաջնային են հենց այդ հայուհիներից ծնված սերունդների շրջանում ընթացող զարգացումները, որոնք հաճախ հանգեցնում են «էթնիկ ճգնաժամի»:

Բռնի իսլամացված հայ կանանց և երեխաների ազատագրման գործընթացը. ներգրավված կազմակերպությունները, անձինք ու մեթոդները

Առաջին համաշխարհային պատերազմից հետո միջազգային և Օսմանյան կայսրության քաղաքական օրակարգում

[67] Նույն տեղում:

հայտնվեց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայ կանանց և երեխաների հայկական ու քրիստոնեական ինքնությանը վերադարձի հարցը: Ինչպես նշել էինք, այս անգամ օսմանյան իշխանություններն ավելի մանրակրկիտ էին պատրաստվել այդ հնարավոր զարգացմանը, ուստի բավական բարդացել էր կրոնափոխ հայերին իրենց ակունքներին վերադարձնելու գործը: Սակայն, այնուամենայնիվ, սկսված աշխատանքը որոշակի արդյունք տվեց, և հազարավոր հայեր փրկվեցին մուսուլմանական գերությունից: Արդեն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո պարտված Օսմանյան կայսրության նոր ղեկավարները ստիպված էին կատարել հաղթող տերությունների որոշակի պահանջներ, որոնց թվում է եղել իսլամացված հայ կանանց և երեխաների վերադարձի հարցը:

Ավելորդ չէ նշել, որ երիտթուրքերի տապալումից հետո նրանց քաղաքական հակառակորդները, ժամանակի թուրքական մամուլում ներկայացնելով և քննադատելով երիտթուրքական բռնապետությունը, անդրադառնում էին նաև բռնի իսլամացված հայերի և հատկապես երեխաների խնդրին[68]:

[68] Atnur İ., նշված աշխ., 140-141:

1918 թ. դեկտեմբերի 5-ին ներքին գործերի նախարարության կողմից տարբեր նահանգներ և գավառներ գրություններ ուղարկվեցին, որոնցում կարգադրվում էր մուսուլմանների մոտ գտնվող հայ երեխաներին հանձնել հայ-քրիստոնյա հոգևորականներին, եթե այդպիսիք չկան, ապա՝ իրենց ազգակիցներին, իսկ եթե կոնկրետ տարածքում ազգակիցներ էլ չկան, ապա պետք էր հանձնել պետական կառույցներին[69]: Նույն ամսին ներքին գործերի նախարարը մեկ այլ հրահանգ է ուղարկում համապատասխան կառույցներին. այդ հրահանգի իններորդ կետը վերաբերում էր կրոնափոխ հայ կանանց. *«Կրոնը փոխած և մուսուլմանների հետ ամուսնացած կանայք* (հայ- Ռ.Մ., Մ.Ա.) *կարող են վերադառնալ իրենց նախկին կրոնին: Այդ դեպքում երկու կողմերի միջև կնքված ամուսնությունը չեղյալ է համարվում»*[70]: 1919 թ. փետրվարի 5-ին կրկին հայ կանանց և երեխաներին վերաբերող հրաման է ուղարկվում նահանգներ, որտեղ ասվում էր. *«Մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»*[71]: Ուշագրավ է, որ ներկայումս էլ անդրադառնալով այս հրամաններին՝ շատ թուրք գիտնականներ այն քննադատում և համարում են ժամանակի կառավարության թուլության ապացույց:

[69] Atnur İ., նշված աշխ., էջ 135:
[70] Նույն տեղում, էջ 120:
[71] Նույն տեղում, էջ 189:

Հարկ է նկատել, սակայն, որ չնայած արևմտյան տերությունների ճնշումներին, օսմանյան նոր իշխանությունները կրոնափոխ հայերին վերադարձնելու հարցում ունեին նախկիններից չտարբերվող դիրքորոշում. անգլիական ծովակալ Քալթորփի 1919 թ. հուլիսի 30-ին գրած զեկուցագիրը լավագույնս ի ցույց է հանում պատկերը: Այսպես, խոսելով իսլամացված հայ կանանց և երեխաների վերադարձի մասին՝ նա նշում է. *«Այս հարցում նույնպես, թվում է, գործունեություն հանդես է բերվում միայն այն դեպքում, երբ բրիտանական սպաների ազդեցությունն առկա է թուրք պաշտոնյաների վրա: Ենթադրում եմ, որ քրիստոնյա երեխաների մեծամասնությունը, ովքեր գտնվել են մահմեդականների տներում, վերադարձվել են, բայց այդ նույնը չի կարելի ասել կանանց մասին»*[72]:

Հայ կանանց և երեխաների վերադարձի մասին տվյալներ է հաղորդում նաև Առաջին համաշխարհային պատերազմից հետո Օսմանյան կայսրության տարածքում աշխատած ամերիկյան բարեգործական կազմակերպության ներկայացուցիչ Մարի Քարոլին Հոլմսը: Խոսելով հատկապես

[72] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ.Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 543:

Ուրֆայում հիմնադրված հայկական որբանոցի մասին՝ նա նշում է, որ 1918 թ. և ավելի ուշ իրենց են սկսել դիմել հարյուրավոր կանայք, որբեր, որոնք մի քանի տարի եղել են մուսուլմանական գերության մեջ: Նրա փոխանցած տվյալներից հատկապես մեկն ի ցույց է հանում հայ աղջիկ երեխաների նկատմամբ նրանց «որդեգրած» մուսուլմանների վերաբերմունքը. *«Որբանոցում գրեթե չկար տասներկու տարեկանից բարձր աղջիկ, որ եղած չլիներ որևէ մուսուլմանի կին: Մի քանիսը նույնիսկ տասը տարեկանից սկսած եղել են ինչ-որ մեկի կինը: Բոլորը հիվանդ էին, և չնայած որ սեռական հիվանդությունները մենք բուժում էինք նորագույն մեթոդներով, ամեն դեպքում բավական թվով մահացության դեպքեր արձանագրվեցին նրանց շրջանում»*[73]:

Պետք է նկատել նաև, որ հատկապես հայ կանանց վերադարձը կապված էին մի շարք այլ բարդությունների հետ ևս, որոնցից էին մուսուլման «ամուսնուց» ծնված երեխաների և հայկական միջավայրում ընկալվելու խնդիրները: Իսլամացված հայ կանանց վերադարձի և կենցաղի բարդ հոգեբանական կողմերին է անդրադառնում պրոֆեսոր Ռուբինա Փիրումյանը՝ կատարելով հետաքրքիր և համոզիչ դիտարկումներ. *«Իրողութիւն է նաեւ այն պարագան, որ մեծ է թիւը կանանց, որոնք չուզեցին բաժանուել թուրքից ու քուրդից ծնած իրենց երեխաներից: Մնացին ու շատ անգամ իրենց ամօթը, իրենց տառապանքը՝ որպէս գաղտնիք գերեզման տարան, վախեցան խօսել՝ իրենց ու իրենց զաւակներին չվտանգելու համար: Լլկուած ու բռնաբարուած, սեռային անմարդկային չարչարանքների ենթարկուած զոհը ինչպէ՞ս բացայայտէր այդ ստորացուցիչ գաղտնիքը եւ ամբողջ կեանքում ապրէր այդ ամօթը ճակատին»*[74]: Ընդհանրապես բավական կարևոր և հակասական զգացողություններ ու եզրահանգումներ ի հայտ բերող թեմա է մուսուլման բռնաբար հորից և հայուհի մորից ծնված երեխաների հարցը, որի շուրջ նախկինում եղած որոշ ուսումնասիրություններին ներկայումս ավելանում են նորերը:

Հայ ժողովրդի բարեկամ Յոհաննես Լեփսիուսը նույնպես ակտիվորեն ներգրավված է եղել իսլամացված հայ երեխաների ու կանանց վերադարձի գործում և 1920-ականների սկզբին Ազգերի լիգայի շրջանակներում կոնկրետ քայլեր է արել այդ ուղղությամբ[75]: Նշենք, որ Ազգերի լիգայի նախաձեռնությամբ ստեղծվել էր հանձնաժողով, որը զբաղվել է կրոնափոխ հայ կանանց և երեխաների վերադարձի խնդրով: 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի

[73] Holmes M., Urfa'da Ermeni Yetimhanesi (1919-1921), İstanbul, 2005, s. 24.

[74] Peroomian R., And Those Who Continued Living in Turkey after 1915: The Metamorphosis of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature, Yerevan, 2008, p. 266.

[75] Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, էջ 378:

պայմանագրի 142-րդ հոդվածը նույնպես վերաբերում էր Թուրքիայում բռնի իսլամացված քրիստոնյաներին և թույլ տալիս նրանց ազատորեն վերադառնալ իրենց նախկին կրոնին[76]:

Իրենց հերթին հայկական ազգային և համայնքային կառույցները ևս փորձել են առավել կազմակերպված բնույթ տալ և ակտիվորեն ներգրավվել բռնի իսլամացված հայության փրկության գործին: Այդ նպատակով Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ որբերին գտնելու, հավաքելու և խնամքի հարցերը կազմակերպելու համար հիմնվում է «Ազգային խնամատարություն» անվամբ մարմինը, որը կազմակերպում է դրամահավաք և որին մասնակցում են հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական հարանվանության ներկայացուցիչները[77]:

Հարկ է շեշտել, որ բռնի իսլամացված հայերին գտնելու և փրկելու աշխատանքներին մեծապես խոչընդոտել են և՛ օսմանյան պետական մարմինները, և՛ հասարակության մոլեռանդ տարրերը. *«Հայ կանանց ու երեխաներին գերությունից ազատելու աշխատանքները դժվարանում էին թուրքական կողմից մշտապես հարուցվող խոչընդոտների հետևանքով: Մասնավորապես, քրիստոնյա երեխաներին պարտադրում էին մոռացության մատնել իրենց ծագումը, կեղծվում էին նրանց ծննդյան վկայականները, երեխաներին թուրքական անուններ էին տրվում: Թուրքական մանկատներում մեծ թվով երեխաներ կային, որոնք ներկայացվում էին որպես քուրդ, սակայն իրականում նրանք հայեր էին: Նույն դժվարությունները հարուցվում էին նաև գերյալ քրիստոնյա կանանց հայտնաբերելու և ազատագրելու հարցում: Ինչպես նշվում է Հինգերորդ հանձնաժողովի զեկույցում, գտնել նրանց գրեթե անհնարին էր, քանի որ «այդ հանցանքին մեղսակից էր ողջ ժողովուրդը»»*[78]:

Ինչպես նշել ենք, մեծ թվով հայ կանայք և երեխաներ առևանգվել էին նաև արաբական անապատներում բնակվող մուսուլման ցեղերի կողմից: Այստեղ հայերի վերադարձի գործընթացը լուրջ դժվարությունների է բախվել, և լավագույն մեթոդը եղել է գերված հայերի գնումը[79]: Անգամ տարածված է եղել «մեկ հայը՝ մեկ ոսկի» կարգախոսը: Հայ կանանց և երեխաների փրկության գործին լծված բազմաթիվ միսիոներներից է դանիուհի Կ. Եփփենը, ով արաբական ա-

[76] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 378:

[77] Քիւրքճեան Ա., նշված աշխ., էջ 13:

[78] Պարսամյան Ս., Միրզոյան Ա., Ազգերի լիգայի փաստաթղթերն ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը, http://www.genocide-museum.am/arm/g_brief_09.php

[79] Atnur İ., նշված աշխ., էջ 216:

շիրեթներից փրկել է շուրջ 2000 հայ կին և երեխա, հիմնել այրիանոցներ այդ փրկված կանանց համար[80]:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքերի և քրդերի տներից հավաքված հայ երեխաներին իրենց ակունքներին վերադարձնելու գործին լծվել են ժամանակի հայազգի շատ հասարակական գործիչներ, պարզապես հայեր, որոնք ուծացման ճանապարհ մղված երեխաներին տարբեր որբանոցներում տեղավորելով սկսել են ջանքեր գործադրել նրանց խաթարված ինքնությունները վերականգնելու, կորցրած ընտանիքները գտնելու ուղղությամբ: Այս ամենի համար և՛ հայկական թերթերի, և՛ այլ միջոցներով տարածվել են տվյալներ, որպեսզի գտնեն երեխաների ընտանիքներին և հանձնեն նրանց[81]: Ուշագրավ է նաև, որ ավելի մեծ տարիքում առևանգված և ազգային ինքնագիտակցությունը պահպանած հայ երեխաները հենց իրենք էին ջանում վերադառնալ ազգային ակունքներին և լսելով, որ մոտակայքում բացվել է հայկական կամ քրիստոնեական որբանոց, նրանք փախչելով առևանգիչների տներից գնում ու հանձնվում էին որբանոցներին[82]: Կրոնադարձության հետաքրքիր մի դեպք է մեջբերված ուսումնասիրող Կարեն

[80] Դառնալով մեկ ուրիշը... Ցեղասպանությունը և առևանգված հայ կանայք http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_2.php

[81] Miller D., Miller L., նշված աշխ., էջ 85-86:

[82] Նույն տեղում, էջ 180, 183:

Խանլարյանի աշխատության մեջ, որը ազգային ինքնագիտակցության պահպանման մասին է վկայում: Այսպես, Յոզղաթից Կարապետ Մելիտոնյանը, ում ընտանիքը ամբողջովին կոտորվել է 1915-ին, իսկ ինքը վերցվել մի թուրքի կողմից և իսլամացվել՝ ստանալով Ջելալ Մամեդօղլու անունը, շուրջ 50 տարի պահպանել է իր ազգային ինքնագիտակցությունը և մի օր կրկին իսկական անուն ազգանունով կոչվելու երազանքը: Եվ 1960-ականներին տեղափոխվել է Խորհրդային Հայաստան ու վերադարձել ակունքներին[83]:

Հայերին մուսուլմանների տներից ետ վերցնելու գործի մասնակիցներից և ցեղասպանությունը վերապրածներից մեկը՝ Հակոբը, հետագայում պատմել է. *«Երբ եկան անգլիացիները, սկսեցին բոլոր հայերին հավաքել: Այդ պատճառով ես և թուրքերեն լավ խոսող մի կին շրջում էինք գյուղերում և հավաքում հայերին: Գնում էինք այն բոլոր տեղերը, որտեղ գիտեինք, որ հայ կա և այսպես էինք ասում. «Քեզ մոտ եղած աղջկան կամ մեզ ես տալու կամ բանտարկվելու ես»: Այս եղանակով մոտավորապես 200 մարդ հավաքեցինք և քաղաք բերեցինք»*[84]:

Հայության բեկորների հայտնաբերման և փրկության գործում ջանքեր է ներդրել նաև Ռուսաստան արտագաղ-

[83] Ջանասէր, Բեյրութ, 15,04,1968, էջ 172, նույնը տե՛ս նաև Խանլարեան Կ., նշված աշխ., էջ 117:

[84] Նույն տեղում, էջ 180:

թած պատմական Խոտորջուրի և շրջակա տարածքների հայերի «Տայք» հայրենակցական միությունը, որը կազմակերպել է խուզարկու խմբեր և գաղտնի ուղարկել այնտեղ, որտեղով անցել են աքսորյալ հայերի քարավանները: Այս խմբերի գործունեության արդյունքում տարբեր վայրերում գտնվել են և փրկվել շուրջ 3000 հայեր, մեծ մասամբ իսլամացված հայ երեխաներ[85]:

Արձանագրվել են նաև թուրքական որբանոցներից հայ երեխաներին և մուսուլմանների տներից հայ կանանց ազատագրման առանձին անհատական դեպքեր. նման օրինակների ենք հանդիպում հայ հասարակական-քաղաքական գործիչ և ուսումնասիրող Գևորգ Հալաջյանի (Թափառական) բանտային օրագրում՝ գրված Սեբաստիայի բանտում 1925-28 թթ.[86]: Ի դեպ, այդ նույն օրագրում Հալաջյանը ներկայացնում է տվյալներ մուսուլմանական տներում և հարեմներում պահվող հայուհիների թվաքանակի վերաբերյալ իրենց կողմից արված ուսումնասիրությունից, համաձայն որի 1927 թ. դրությամբ. *«Թուրք հարէմներու ապականութեան մէջ չարչարուող գաւառահայ բեկորներու վիճակագրական թիւերը»* կազմել են 45 000[87]:

[85] Գևորգյան Թ., Խոտորջուր, Բանբեր Երևանի համալսարանի, 1971, թիվ 3, էջ 213:

[86] Հալաջյան Գ. (Թափառական), Դեպի կախաղան, Երևան, 2014, էջ 142-143, 148-149:

[87] Նույն տեղում, էջ 164:

Սակայն բռնի իսլամացված հայերի վերադարձի հարցում ամենալուրջ դերակատարումը վերապահվել է Պոլսո Հայոց Պատրիարքարանին, որը դարձել է Հայոց մնացորդաց փրկության գործի առաջամարտիկը: Մասնավորապես, ստեղծվել են հանձնախմբեր, որոնք ուսումնասիրել և տեղեկություններ են հավաքել այդ տարիներին առևանգված ու բռնի կրոնափոխված հայերի բնակության վայրերի և կարգավիճակների մասին, որից հետո սկսվել է այդ բեկորների փրկության, այն է՝ մուսուլմանական ընտանիքներից ազատելու գործընթացը: Առավել ակտիվ այս գործում ներգրավված է եղել Պոլսո Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը, հատկապես աքսորից վերադառնալուց հետո և գահակալության երկրորդ փուլում՝ 1918-1922 թթ.: Առաջին համաշխարհայինում պարտված Օսմանյան կայսրությունը հայտնվել էր բարդ իրավիճակում, և հնարավոր էր դաշնակիցների միջոցով որոշակի հարցեր կարգավորել, ինչին և լծվել է երջանկահիշատակ պատրիարքը: Մասնավորապես, արևմտյան դեսպաններին ուղղված իր խնդրագրերում նա հատուկ շեշտում էր կրոնափոխ հայերի վերադարձի հարցը: Բացի խնդրագրերից, Զավեն Սրբազանն անցնում է կոնկրետ գործողությունների: Հիրավի, հիշատակման արժանի են պատրիարքի հետևյալ մտքերը. *«Հազարաւոր հայ մանուկներ գաւառներու մէջ Թուրքերու տունները ցրուած էին, մեծ մասամբ*

իբրեւ ծառայ, քիչեր՝ որդեգիր եւ չափահաս աղջիկները իբր կին: Հինադադարէն անմիջապէս եկքը այս որբերը որքան կարելի է հաւաքել եւ ազգին դարձնել առաջին պարտականութիւններէս մէկը նկատեցի, ո՛չ միայն իբր Պատրիարք, այլ իբր հայ անհատ»[88]: Զավեն պատրիարքը սկսում է որբահավաք գործունեություն, որի արդյունքում միայն Ստամբուլում շուրջ 3000 հայ երեխաներ են ազատվում թուրքական որբանոցներից և մուսուլմանների տներից, սակայն նույնը հնարավոր չի եղել իրագործել գավառներում, ուր անհամեմատ ավելի շատ էին իսլամացված հայ որբերը և կանայք: 1921 թ. Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը մանրամասն տեղեկագիր է պատրաստում, որտեղ նշում է, թե որ նահանգում մուսուլմանների մոտ քանի հայ որբ է մնացել: Ստորև ներկայացնում ենք տեղեկագրում առկա աղյուսակը՝ ըստ նահանգների.

«1. Դեր-Զորի շրջանում Զիբար, Էգաբար և Վարաքորա ցեղախմբերի մոտ ամենաքիչը՝ 500

Ժիբոուր (Ջիբուր) ցեղախմբի մոտ՝ 600

Շամոր (Շեմմար) ցեղախմբի մոտ՝ 700

Անեզաի (Անեզա) ցեղախմբի մոտ՝ 2000

2. Ռեսուլայն շրջանի չեչենական ցեղախմբերի մոտ՝ 2000

[88] Զավէն Արքեպիսկոպոս, նշված աշխ., էջ 288:

3. Սկամբուլում և շրջակայքում՝ 6000

4. Իզմիթում, Բուրսայում, Բալըքեսիրում՝ 2000

5. Ինեբոլուում՝ 1500

6. Էսքիշեհիրում և Քոնյայում՝ 3000

7. Քասթամոնուում՝ 500

8. Տրապիզոնում՝ 2500

9. Սեբաստիայում՝ 3500

10. Կեսարիայում՝ 3500

11. Էրզրումում՝ 3000

12. Դիարբեքիրում և Մարդինում՝ 25000

13. Խարբերդում՝ 3000

14. Բիթլիսում և Վանում՝ 5000

Ընդամենը՝ 63 000»[89]:

Ի դեպ, թուրքական կողմը ներկայումս շրջանառության մեջ է դրել նաև այն անհեթեթ միտքը, թե մուսուլմանների կողմից առևանգված հայերի ազատման ընթացքում Պոլսո Հայոց Պատրիարքարանի աջակցությամբ հավաքվել են նաև մուսուլման թուրք, քուրդ երեխաներ և ներկայացվել իբրև հայեր՝ սրանով նպատակ ունենալով ավելացնել հայերի թիվը[90]: Թուրք գիտնականները դա անվանում են բռնի քրիստոնեացման գործընթաց: Անշուշտ, չի բացառվում, որ

[89] Atnur İ., նշված աշխ., էջ 219-220:

[90] Başyurt E., Ermeni Evlatlıklar, İstanbul, 2006, s. 44-45.

այդ ընթացքում կարող էին որոշ անճշտություններ ի հայտ գալ, սակայն գերակշիռ դեպքերում որպես թուրք կամ քուրդ մուսուլման ներկայացվող երեխաները մանուկ հասակում իրենց արմատից կտրված և մի քանի տարի մոլի իսլամական ոգով դաստիարակված հայ երեխաներն էին, որոնց մոտ գրեթե կորել էր հայկական ծագման հիշողությունն ու գիտակցությունը:

Կարևոր ենք համարում փաստել, որ գավառներում մնացած և ուծացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի հարցը, այս կամ այն չափով, եղել է Պոլսո Հայոց Պատրիարքարանի ուշադրության կենտրոնում նաև հետագայում: Մասնավորապես, կրոնափոխ հայերի խնդրի ուսումնասիրման և նրանց իրենց ակունքներին վերադարձնելու աշխատանքներ են կատարվել Գարեգին Խաչատուրյան պատրիարքի օրոք (1950-1961 թթ.): Այդ տարիներին սկսում են գավառներից քրդախոս հայ երեխաներ տեղափոխվել Ստամբուլի հայկական կրթօջախներ, մասնավորապես «Սուրբ Խաչ Դպրեվանք»: Նշենք սակայն, որ ինչպես այդ, այնպես էլ հետագա տարիներին գավառներում այլախոս հայ երեխաներին հավաքելու գործը ոչ միայն դժվար էր, այլև վտանգավոր, քանի որ թուրքական իշխանությունները և հասարակությունը ստեղծում էին զանազան խոչընդոտներ:

1961 թ. Պոլսո Հայոց պատրիարք ընտրված Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը զբաղվել է ոչ միայն իսլամացված հայերի վերադարձի, այլև այդ խնդրի գիտական հետազոտության հարցերով: Ինչպես պատմել է պոլսահայ լրագրող Սարգիս Սերոբյանը, 1960-ականների սկզբին մի պատահական միջադեպի շնորհիվ Ստամբուլի հայ համայնքը տեղեկանում է Արևմտյան Հայաստանում գոյատևած հայության փոքրիկ օջախների մասին: Ստամբուլում գտնվող ԽՍՀՄ հյուպատոսության շենքի դիմաց տեղի հայերից մեկը պատահաբար ականատեսն է դառնում հյուպատոսություն դիմած մի մշեցի հայի զրույցին, որից պարզվում է, որ Մուշում պահպանված մոտ 60 հոգանոց հայկական ընտանիք կա, որն էլ ցանկանում է տեղափոխվել ԽՍՀՄ: 1960-ականներին այդ ընտանիքի մոտ, բնականաբար, հայության հետ կապված շատ բաներ մոռացվել էին, սակայն ըստ Սերոբյանի վառ էր երկու բան. առաջինը, որ նրանք հայեր են, որոնք կարողացել են փրկվել ցեղասպանությունից, և երկրորդ՝ այն, որ որպես հայ կարող են ազատ ապրել Խորհրդային Հայաստանում և դրա համար էլ ցանկանում են տեղափոխվել[91]: Այս պատահական հանդիպումը պատճառ է դառնում, որպեսզի Արևմտյան Հայաստանում պահպանված հայութ-

[91] Ritter L, Sıvaslıan M., Kılıç Artıkları: Türkiyenin Gizli ve Müslümanlaşmış Ermenileri, İstanbul, 2013, s. 28.

յան այդ խմբի հարցը ներկայացվի ժամանակի Պոլսո պատրիարք Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանին, որն էլ միջոցներ է ձեռնարկում գոյատևած հայության փրկության համար: Ինչպես նկատում է Սարգիս Սերոբյանը. *«Արևելյան Անատոլիայի հայության փրկության ուղղությամբ երկարատև և լայնամասշտաբ օպերացիայի պատճառ դարձած առաջին կայծը եղավ մշեցիների հետ կապված այս միջադեպը»*[92]: Հայահավաք գործունեության համար երջանկահիշատակ Շնորհք պատրիարքը սկսում է ֆինանսական աղբյուրներ հայթայթել, այդ նպատակով անգամ այցելում է ԱՄՆ[93]: Այդ գործունեությունը առավել համակարգված իրականացնելու համար ստեղծվում է «Գաղթականաց հանձնախումբ», որն արդեն 1965 թ. սկսում է գործունեություն ծավալել և զբաղվում պատմական Հայաստանի տարբեր նահանգներում կորուսյալ հայերի, այն է բռնի իսլամացված կամ ծպտյալ հայերին ու նրանց սերունդներին գտնելու և արմատներին վերադարձնելու գործով: Նախ ստեղծվում են առանձին խմբեր, որոնք այցելում են նահանգներ, փնտրում հայերին, արձանագրում, մանրամասն ցուցակագրում: Այդ խմբում ընդգրկվում են ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևորական գործիչներ, ինչպես օրինակ Դիարբեքիրի Սուրբ

[92] Նույն տեղում:
[93] Նույն տեղում:

Կիրակոս եկեղեցու քահանա տեր Կիրակոսը[94]: Այս աշխատանքները տևում են շուրջ 20 տարի, հավաքվում է ահռելի փաստագրական նյութ, որը, ըստ էության, մինչ այժմ էլ ամբողջական հայտնի չէ և հասու չէ գիտնականներին, չի դրված գիտական շրջանառության մեջ, սակայն կարծում ենք մեծ արժեք կարող է ունենալ: 1985 թ. այդ հանձնախմբի աշխատանքները պաշտոնապես դադարեցվում են և դրա համար որպես հիմնավորում նշվում է, թե *«փրկել են բոլոր նրանց, ում հնարավոր էր փրկել»*[95]: Այս եզրահանգումը, իհարկե, վերջնական չի կարելի համարել, սակայն միևնույն ժամանակ տեղիք է տալիս մտածելու դրանից հետո և հատկապես ներկայումս ընթացող աշխատանքների արդյունավետության ու հավաստիության մասին: Հայության սերունդներին գտնելուց հետո հանձնախումբը ջանքեր է գործադրում հատկապես երեխաներին Ստամբուլ տեղափոխելու և հայկական դպրոցներում կրթություն տալու համար: Իհարկե, այս քայլերը բախվում են որոշակի դժվարությունների, քանի որ այդ երեխաների մի մասը, ինչպես նաև նրանց ծնողները, կամ գրանցված էին որպես մուսուլմաններ, ուստի իրավունք չունեին հաճախել հայկական դպրոց, կամ ընդհանրապես անձնագիր չունեին:

[94] Նույն տեղում, էջ 29:
[95] Նույն տեղում:

1980 թ. Շնորհք պատրիարքը հայ հանրությանն է ներկայացնում բռնի կրոնափոխ հայության վերաբերյալ իր երկարամյա ուսումնասիրության արդյունքները՝ ցույց տալով իսլամացման հետևանքով ստեղծված վիճակը: Երուսաղեմում ունեցած ելույթում պատրիարքը նշում է. *«Ձեզ կը ներկայացնեմ գաւառահայութեան չորս խաւերը, ինչպէս որ տեսել եմ նրանց.*

ա. Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզուել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թուով:

բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնւում: Խնուսի շրջանում հարիւր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թէ հայ են, գիտակցաբար իրենց մէջ ամուսնանում են եւ փափագում են վերադառնալ իրենց պապերի կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն:

գ. Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատուելուն պէս՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրութիւնը «էրմենի»-ով են փոխարինում:

դ. Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժուարութիւններին՝ հայ են մնացել եւ այսօր Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում»[96]:

Բռնի իսլամացված հայերի փրկության հարցը արդեն հանրապետական Թուրքիայում եղել է նաև Հայ Ավետարանական եկեղեցու ուշադրության կենտրոնում և այդ ուղղությամբ որոշակի քայլեր են արվել: Օրինակ՝ Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր սպասավոր պատվելի Հրանտ Գյուզելյանը 1960-ականների վերջերին այցելել է Թուրքիայի արևելյան նահանգներ, շփվել այնտեղ ապրող ուծացած հայության բեկորների հետ և օգնել նրանց երեխաների մի մասին ուսման համար տեղափոխվել Ստամբուլ և սովորել հայկական կրթօջախներում: Այս մեթոդով բազմաթիվ հայ երեխաներ, որոնք գտնվել են ուծացման եզրին, վերագտել են իրենց հայկական ինքնությունը[97]: Նկատենք նաև, որ իսլամացված հայերի սերունդների շրջանում այսօր էլ իրենց ակունքներին և քրիստոնեությանը վերադարձի գործընթացը շարունակվում է և հետզհետե ավելի ընդգրկուն է դառնում:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Հայոց ցեղասպանությունից հետո էլ թուրքական պետությունը և հասարակության

---

[96] Խանլարեան Կ., նշված աշխ., էջ 27, նույնը տե՛ս նաև՝ Ալիք, Թեհրան, 18. 12. 1980:

[97] Կիւզելեան Հ., Այցելութիւն մը էրմենի վարթօ աշիրէթին, Բանբեր հոգեւոր ամսաթերթ, Մարսել, 1969, թիվ 11-12, էջ 247:

շատ շերտեր ամեն կերպ փորձել են ետ չհանձնել իրենց կողմից գերված հայ երեխաներին և կանանց, ովքեր ըստ Հրանտ Դինքի՝ օսմանյան իշխանությունների կողմից դիտվել են որպես ռազմավար: Սակայն հայկական տարբեր հաստատությունների, Պոլսո Հայոց պատրիարքության, առանձին անհատների, ինչպես նաև միջազգային կառույցների, միսիոներական և մարդասիրական կազմակերպությունների կողմից արված աշխատանքների շնորհիվ հնարավոր է եղել փրկել գերյալ և բռնի իսլամացված հայության մի փոքր հատվածին, որոնք ազատվելուց հետո էլ ամբողջ կյանքում կրել են հոգեկան և հոգեբանական տարատեսակ տրավմաներ: Այդ փրկված հայերը ու նրանց գերյալ ազգակիցները թուրքական ցեղասպան քաղաքականության զոհերն ու միևնույն ժամանակ ականատես-վկաներն են:

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՑԵՂԱՍՊԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանությունը, հայերի աքսորը և բռնի իսլամացումը, ինչպես նաև հույների ցեղասանությունն ու արտաքսումը էականորեն փոխեցին այն տարածքների էթնիկ-կրոնական քարտեզն ու պատկերը, որտեղ ձևավորվեց Թուրքիայի Հանրապետությունը: Սակայն պետք է նկատել, որ Թուրքիայում գոյատևած հայության նկատմամբ պետական հալածանքի քաղաքականությունը ոչ միայն չդադարեց, այլև շարունակվեց երիտթուրքական մեթոդների կատարելագործված և ժամանակի առաջ բերած փոփոխություններին համապատասխան: Հայերի և ոչ մուսուլման այլ փոքրամասնությունների դեմ իրականացվող լայնածավալ հալածանքի քաղաքականության մեջ շարունակեց գերակա մնալ ձուլումը՝ թուրքացումը, որը չշրջանցեց թերևս և ոչ մի ոլորտ: Սակայն հարկ է հատուկ շեշտել, որ արդեն հանրապետական Թուրքիայի իշխանությունները չհրաժարվեցին նաև հայերի բռնի իսլամացման ցեղասպան քաղաքականությունից, որն իրականացվեց տարբեր տարիներին և տարբեր ինտենսիվությամբ: Բացի այդ՝ թուրքական իշխանությունն-

որը շարունակեցին իրենց ուշադրության կենտրոնում պահել Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայությանը, նրանց սերունդներին, ինչպես նաև նրանց շրջանում տեղի ունեցող ցանկացած զարգացում, այդպիսով շարունակելով Թալեաթի հիմնադրած ավանդույթները:

1936-1938 թթ. Դերսիմի ցեղասպանությունը. վերապրած հայերը կոտորածի և բռնի իսլամացման թիրախ

1923 թ. ստեղծված Թուրքիայի Հանրապետությունը մի շարք հարցերում շարունակեց երիտթուրքական ցեղասպան և այլամերժ ավանդույթները, որի համար կային մի քանի պատճառներ: Նախ՝ հանրապետության հիմնադիրները և պետական ու ռազմական բարձրաստիճան պաշտոնեությունը մեծ մասամբ երիտթուրքեր էին, որոնք շարունակում էին որպես թիրախ ընդունել հայերին, և մյուս՝ ոչ թուրք փոքրամասնություններին ու նրանց նկատմամբ կիրառել նույն քաղաքականությունը: Հետաքրքիր է նկատել, որ դեռևս 1919-1922 թվականներին քեմալականներն[1] իրենց ուշադրության կենտրոնում են պահել իսլամացված հայերի հարցը և ցեղասպան գործողությունների ժամանակ, որոնք ուղղված էին հույների դեմ, թիրախավորված են եղել նաև հայերը, այդ թվում և բռնի իսլամացված: Այսպես 1921 թ. հուլիսին քեմալական ջարդարար Թոփալ Օսմանը իր 3 500 հոգանոց ավազակախմբով գրավում է Մարզվանը և այնտեղ իրակա-

[1] Այդպես են անվանվում 1919 թ. սկսված այն ազգայնամոլական շարժման մասնակիցները, որոնց գլխավորում էր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը:

նացնում քրիստոնյա բնակչության կոտորած: Բրիտանական "The Times" օրաթերթը, խոսելով այդ դեպքերի մասին, նշում է. *«Անկանոն զորքերը մեծ ջանք են գործադրում՝ հայտնաբերելու հայերին, ովքեր մահմեդականացվել են 1915-1916 թթ., բայց հետո վերադարձել իրենց քրիստոնեական հավատին, երբ բրիտանացիներն էին վերահսկում Մարզվանը»:*[2]

Հանրապետական Թուրքիայում շարունակվեց նաև ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ պարբերաբար իրականացվող ցեղասպանությունները, որոնցից ամենալայնամասշտաբը 1936-1938 թթ. Դերսիմի զազաների և հայերի ցեղասպանությունն է, որում նույնպես ներգրավված են եղել նախկին երիտթուրք գործիչներ: Հատկապես առանցքային դեր է ունեցել Թուրքիայի ներքին գործերի նախարար Շուքրու Քայան, ով երիտթուրքերի կառավարման ժամանակ և առավել կոնկրետ՝ Հայոց ցեղասպանության տարիներին եղել է «Աշիրեթների և գաղթականների ընդհանուր վարչության» պետը: Նա պատասխանատու է եղել Հալեպի և Ադանայի նահանգների հայերի աքսորի համար ու Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայոց ցեղասպանությանը մեղսակից այլ հանցագործ օսմանյան պաշտոնյաների հետ աքսորվել է Մալթա, որտեղից որոշ ժամանակ անց փախել է և արդեն Թուրքիայի Հանրապետությունում

[2] Վարդանյան Գ., Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, 2012, էջ 122, մեջբերված The Turk at work, «The Times», 26 October, 1921, p. 11

ստանձնել բարձր պաշտոններ՝ դառնալով քաղաքապետ, պատգամավոր, նախարար[3]:

Դերսիմը և արդեն 1930-ականներին այնտեղ ծավալվող ռազմական ու ցեղասպան գործողությունները ուղղակի առնչություն ունեն Հայոց ցեղասպանության հետ: Այսպես, ըստ տարբեր տվյալների՝ արդեն 1894-1896 թթ. համիդյան ջարդերի ժամանակ մեծ թվով հայեր նաև հարակից նահանգներից ապաստան են գտել Դերսիմում, ալևի զազաների մոտ և որոշ ժամանակ անց ընդունել ալևիականություն: Սակայն ջարդերից ապաստան փնտրող հայության ավելի հոծ շերտ Դերսիմ է տեղափոխվել 1915-ի ցեղասպանության ժամանակ: Հատկապես Դերսիմի ընտրությունը, ըստ տարբեր հեղինակների, պայմանավորված էր մի քանի հանգամանքներով. նախ պատերազմի մեջ գտնվող օսմանյան բանակը մեծ վերահսկողություն չի ունեցել այդ տարածքների վրա, ինչն էլ հնարավորություն է տվել տեղացիներին պատսպարել հայերին: Բացի այդ, ալևիների կողմից հայերին ապաստան տալը բխել է ալևիականության մարդակենտրոն դրույթներից: Դերսիմցի ալևիների հետ մեր անձնական շփումների արդյունքում տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչև այսօր էլ նրանց շրջանում տարածված է մի դարձվածանման միտք՝ «Մեր տան հայը», որը կարելի է ընդունել հայերին իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայություն և հիշողություն:

Գալով 1915-ին Դերսիմում ապաստանած հայության թվաքանակին, ապա փաստենք, որ հրապարակում եղած տարբեր աղբյուրներում և ուսումնասիրություններում նշվում է 10-30 հազար թիվը: Օրինակ՝ զազա հետազոտող Մ. Քալմանը խոսում է 1915-ին Դերսիմում ապաստանած մոտ 30 000 հայերի մասին, որոնց մի մասը որոշ ժամանակ անց ենթադրաբար ռուսական բանակի հետ տեղափոխվել է Արևելյան Հայաստան, իսկ մի մասը մնացել Դերսիմում[4]: Խորհրդային ուսումնասիրողները նշում են Դերսիմում ապաստանած 20 000 հայերի մասին[5]: Նույն թվաքանակի մասին տվյալներ ենք հանդիպում նաև Կ. Սասունիի մոտ. *«Տերսիմը հայութեան փրկութեան օճախներէն մէկը եղած է, որուն շնորհիւ մօտ 20 000 հայ ազատուած է Երզնկայի եւ Էրզրումի գծով»*[6]: Սակայն Դերսիմում ապաստանած հայերի ստույգ թվաքանակը հայտնի չէ և որոշ աղբյուրներում էլ նշվում է 10 000[7] ու անգամ 8 000[8] թվերը:

---

[3] Հյուր Ա., Մալթայի աքսորյալները, Թուրքերը թուրքերի մասին (կազմող և խմբագիր՝ Ռուբեն Մելքոնյան), հ. 3, Երևան, 2011, էջ 82-83:

[4] Kalman M., Belge ve Tanıklarıyla Dersim Direnişleri, İstanbul, 1995, s. 112.

[5] Курдское движение в новое и новейшее время, Москва, 1987, стр. 76.

[6] Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները (ԺԵ. դարէն մինչեւ մեր օրերը), Պէյրութ, 1969, էջ 218:

[7] Hayreni H., 1915'in Denek Taşında Türk ve Kürt Siyaseti (2. Bölüm), http://hyetert.blogspot.com/2012/04/1915in-denek-tasnda-turk-ve-kurt_29.html

[8] «Ազատարար Տերսիմցիներ» Ասացուածքը Վե՞րջ Կը Գտնէ, http://www.aztagdaily. com/archives/56053

Դերսիմում ապաստանած հայերի հարցը թուրքական իշխանություններին մտահոգել է հենց Հայոց ցեղասպանության տարիներին, և օսմանյան տարբեր պաշտոնյաներ դիմել են դերսիմյան ցեղապետերին՝ սպանդից փրկված հայերին հանձնելու պահանջով: Արդեն 1915 թ. հունիսի 2-ին Թեշքիլաթը Մահսուսայի շրջանային պատասխանատու, գավառապետ Ջևդեթը հեռագիր է հղում Խարբերդի նահանգապետին, որտեղ նշում է. *«Դերսիմցիները հայերի հետ ընկերական հարաբերությունների մեջ են, հազարավոր հայերի են թաքցնում և ապաստան տալիս»*[9]: Ջևդեթը նահանգապետից նաև հարցնում է, թե ինչ միջոցներ է պետք ձեռք առնել այդ հարցի նկատմամբ: Իսկ Հոզաթի նահանգապետը 1916 թ. Դերսիմի մի շարք ցեղախմբերից երկու անգամ գրավոր պահանջել է «10 հազար հայերին», սակայն մերժում է ստացել[10]: Դերսիմի մասին 1918 թ. զեկույց է պատրաստել տխրահռչակ զորավար Քյազըմ Քարաբեքիրը, որտեղ նա անվստահելի է համարում այդ տարածքների մի շարք ցեղախմբերին և ցեղապետերին հենց այն հիմքով, որ նրանք 1915-ին ապաստան են տվել փախստական հայերին[11]: Ի դեպ, հայերին հանձնելու պահանջը լուրջ խնդիր է առաջացրել հենց ալևիների համար, քանի որ նրանք կանգնել են բարդ երկընտրանքի առաջ՝ կենտրոնական իշխանությունների կարգադրության և իրենց դավանանքի սկզբունքների միջև: Եվ շատ հաճախ կենտրոնական իշխանությունների հրամանը մերժվել է, իսկ երբ պահանջները սաստկացել են, ալևի ցեղապետերը ապաստանած հայերի մի մասին օգնել են փախչել Արևելյան Հայաստան կամ Ռուսաստան: Սակայն այս ամենից զատ, արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ալևիների մոտ ապաստանած հայերը ստիպված արտաքուստ փոխել են իրենց անունը, կրոնը և ներկայացել որպես ալևի զազաներ: Այս հանգամանքը նաև թույլ է տվել ցեղապետերին կենտրոնական իշխանություններին ներկայացնել, որ կասկածյալները ոչ թե հայ են, այլ ալևի զազաներ:

Թուրքական իշխանությունները Դերսիմում ապաստանած հայերի խնդիրը ուշադրության կենտրոնում են պահել նաև հանրապետության հիմնադրումից հետո, և քեմալական իշխանությունները պարբերաբար զազա ցեղախմբերին հիշեցրել ու նրանցից պահանջել են հանձնել փրկված հայերին[12]: Զազա հետազոտող Մ. Քալմանի հետ զրույցում 1985 թ. Քըրգան աշիրեթից Մ. Թ.-ն (անուն ազգանունը չի տալիս անվտանգության տեսանկյունից) անդրադառնում է 1938-ի կոտորածին նախորդած դեպքերին և նշում. *«Հինվորները*

[9] Dinç G. B., Dersim Ermenileri 2, http://www.dersimnews. com/ Dosya/ Dersim-Ermenileri-2-1198.htm

[10] Hayreni H., նշված հոդ.:

[11] Նույն տեղում:

[12] Kalman M., նշված աշխ., էջ 173:

նախ մեր զենքերը հավաքեցին: Իրականում զինվորական-ները Դերսիմից պահանջում էին հանձնել զենքերը, վճարել հարկերը և տալ ***հայերին***»[13] (ընդգծումը մերն է - Ռ.Մ., Մ.Ա.): Այս առումով ուշագրավ է 1936-38 թթ. դերսիմյան դիմադրությունը ղեկավարած Սեյիթ Ռըզայի հոր՝ Սեյիթ Իբրահիմի պահվածքը, ով՝ ի պատասխան թուրքական իշխանությունների պահանջին, հանձնել շուրջ 20 տարի առաջ՝ 1915-ին Դերսիմում ապաստանած հայերին, ասել է. *«Մենք վիրավոր արծիվներին որսորդներին չենք հանձնում»*[14]:

1937 թ. ճնշելով Դերսիմի դիմադրությունը և անցնելով ցեղասպանության իրագործմանը՝ թուրքական իշխանությունները արդեն բացահայտ էին հայտարարում, որ իրենց հիմնական թիրախներից են Հայոց ցեղասպանության ժամանակ փրկված և Դերսիմում բնակություն հաստատած հայերը: Սփյուռքահայ պատմաբան Զավեն Մըսըրլյանը այդ մասին նշում է. *«1938-ին երբ Թուրքիա Տերսիմի շրջանի ալեւիներուն տեղահանութեան ու մասնակի բնաջնջման ձեռնարկած էր, հոն Քըզըլպաշ գիւղերու մէջ ապրող 1915-ի ցեղասպանութենէն ճողոպրած հայ խլեակներուն վերջնական ոչնչացման ալ ձեռնարկեց»*[15]: Պատմաբան Հանս-Լուկաս Կիեսերը Դերսիմի ցեղասպանության խորքային պատճառներին անդրադառնալով՝ նշում է. *«Դերսիմում 1937-38 թթ. գործադրված ծայրահեղ բռնության մի պատճառն էլ այդ տարածքներում հայերի գոյությունն էր, այդ հարցում ես կասկած չունեմ»*[16]:

Հայերի բացահայտ թիրախավորվելը և թուրքական իշխանությունների կողմից իրենց ցեղասպան նպատակների բարձրաձայնումը նախ և առաջ արտահայտվեց քաղաքական վերնախավի երբեմն գաղտնի, իսկ երբեմն էլ հրապարակային հռետորաբանության մեջ: Դրանցից ամենացայտունը Դերսիմի ցեղասպանության և տեղահանության հիմնական կազմակերպիչներից գեներալ Ալփդողանի 1938 թ. Բինգյոլի Քիղի գավառում հրապարակային ելույթն էր, որը նա ունեցել էր արդեն կոտորածից հետո. *«Թունջելիում (Դերսիմ - Ռ.Մ., Մ.Ա.) բնակություն հաստատած ծպտյալ քրիստոնյա հայեր կային, սրանք անունները փոխել և թուրքի պես էին ապրում: Դերսիմի ապստամբության մեջ սրանց մատը խառն էր, սրանք ամեն տեսակի անարխիայի, խռովության և խառնակչության կազմակերպիչներն էին»*[17]: Ցեղասպան գեներալը այդ հայերի մասին խոսում էր անցյալ

---

[13] Նույն տեղում, էջ 232:

[14] Hanoğlu E., Dersim Ermenileri şimdi nerede?, http://blog.radikal.com.tr/Sayfa/dersim-ermenileri-simdi-nerede-14537

[15] Մսըրլեան Զ., Հայոց ցեղասպանութենէն առաջ եւ ետք, Անթիլիաս, 2011, էջ 189:

[16] Dinç G. B., նշված հոդ.:

[17] Aygün H., Dersim 1938 ve Zorunlu Iskân: Telgraflar, Dilekçeler, Mektuplar, Ankara, 2009, s. 68, տե՛ս նաև, Bahadır İ., Cumhuriyetin Kuruluş Sürecinde Atatürk ve Aleviler, İstanbul, 2002, s. 81.

ժամանակով, որտեղից էլ կարելի է ենթադրել, որ թուրքական բանակը արդեն իրագործել էր իր առջև դրված խնդիրը՝ կոտորել փրկված հայերին: Հետաքրքիր է, որ այս մտածողությունը տասնամյակներով փոխանցվել է թուրքական պաշտոնեական համակարգում, և արդեն 21-րդ դարի Թուրքիայում ևս կան պետական գործիչներ, գիտնականներ, որոնք շարունակ պնդում են այն միտքը, թե Դերսիմի ալևիների, զազաների շրջանում կան արտաքուստ կրոնափոխված հայերի սերունդներ, որոնք տարատեսակ հակապետական կազմավորումների առաջնորդներ են:

Դերսիմի դեպքերը դարձել են նաև վավերագրական ֆիլմի նյութ, և ռեժիսոր Օզգյուր Ֆընդըքի «Սև վագոն» ֆիլմը հենված է դերսիմցի զազաների ու հայերի հուշերի, ինչպես նաև ժամանակի թուրք պաշտոնյաների և զինվորականների ինքնախոստովանական ելույթների վրա: Ֆիլմում ականատես վերապրողները հստակ շեշտում են, որ Դերսիմի 1937-1938 թթ. ցեղասպանությունը հայերի համար 1915-ի շարունակությունն էր, և հայերը հստակ թիրախավորված էին: Ռեժիսոր Ֆընդըքը իր հարցազրույցներից մեկում նշել է. *«Գրեթե բոլոր այն հայերը, որոնց հետ ես զրուցել եմ, ասում էին հետևյալը. «1915 թվականից փրկվեցինք, սակայն 1938 թվականից չկարողացանք փրկվել»*[18]:

Դերսիմում ապաստանած հայերի կոտորվելու մասին է պատմում նաև թուրք հայտնի ձախակողմյան գործիչ Հասան Իզեթթին Դինամոն նշելով, որ այդ տարածքում ապաստանած և իսլամ ընդունած (ալևի) հայերը կոտորածի ենթարկվեցին նաև 1938-ին: Ըստ նրա, մոլեռանդ մուսուլման ջարդարարները կոտորածների ժամանակ ուշադրություն էին դարձնում, որ հայերին զազաներից առանձին սպանեն, որպեսզի *«հայկական արյունը չխառնվի մուսուլմանական արյան հետ»*[19]:

Դերսիմի ցեղասպանության ժամանակ զոհվածների ստույգ թվաքանակը ներկայումս էլ քննարկումների փուլում է, սակայն հրապարակում կան մի քանի տվյալներ, որոնցից որոշները առավել արժանահավատ են թվում: Այսպես, ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Դերսիմի կոտորածի ժամանակ սպանվել է ընդհանուր բնակչության 3/4-ը[20]: Այս թիվը մոտավորապես համապատասխանում է տարածված 70 000 զոհերի մասին տվյալների հետ: Սակայն բավական բարդ

[18] Ինչպես են թուրքերը բռնի կերպով թլպատել հայերին. Թուրքիայում կցուցադրվի Դերսիմի կոտորածների մասին պատմող ֆիլմ, http://www.tert.am/am/news/2011/05/03/dersim/276231 (03, 05, 2011)

[19] Kalman M., նշված աշխ., էջ 405:

[20] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 151, թ. 2:

խնդիր է վեր հանել կոտորված հայերի՝ այդ թվում և ալևիացած հայերի թվաքանակը: Օրինակ, ուսումնասիրող Հայկազուն Ալվրցյանը հենվելով որոշ աղբյուրների վրա՝ բերում է 15 հազար սպանված հայերի թիվը[21], որը, կարծում ենք, նույնպես կարոտ է առավել մանրամասն հետազոտության: Այս առումով ավելորդ չէ մեջբերել ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության 1946 թ. պատրաստած տեղեկանքը, որտեղ անդրադարձ կա Դերսիմ նահանգում ապրող հայերի ինչպես վիճակին, այնպես էլ թվաքանակին 1937-1938 թթ. ցեղասպանությունից հետո: Տեղեկանքում մասնավորապես նշված է. *«Դերսիմի հայերը հետզհետե ձուլվում են և հեռանում այդ վայրերից և ներկայումս նրանց թիվը կազմում է 6-7 հազար: Նրանք ապրում են իրարից հեռու գյուղերում, ծայրահեղ չքավորության մեջ, փոխելով իրենց անունները և ձուլվելով»*[22]: Փաստորեն՝ ըստ արխիվային այս փաստաթղթի, 1946 թ. Դերսիմում ապրել է շուրջ 7 հազար հայ, սակայն տարբերակում չի դրվում, թե դրանք 1915-ին այնտեղ ապաստանած (20 000) հայերն ու նրանց սերունդնե՞րն են, թե՞ ավելի վաղ այդ տարածքներում բնակվող և ալևիականություն ընդունած հայերը: Ուշագրավ է նաև կրկին խորհրդային արտաքին գործերի գերատեսչության պատրաստած

[21] Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Երևան, 2014, էջ 127:

[22] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 151, թ. 2:

մեկ այլ տեղեկանքը արդեն 1947 թ., որտեղ նշվում է, որ այդ պահի դրությամբ Դերսիմում բնակվել է 1250 հայ[23]: Կարելի է ենթադրել, որ այս թիվը, ամենայն հավանականությամբ, վերաբերել է քրիստոնյա հայերին, այսինքն՝ 1915-ին վերապրածներին:

Ինչպես և Հայոց ցեղասպանության տարիներին, այնպես էլ Դերսիմի ցեղասպանության ժամանակ տեղի են ունեցել բռնի իսլամացման, իսկ երբեմն էլ բռնի դավանափոխության՝ սունիացման դեպքեր և՛ հայերի, և՛ զազաների նկատմամբ: Այսինքն՝ 1915-ին փրկված հայերը 1937-1938-ին ենթարկվել են ցեղասպանական ևս մեկ գործողության՝ բռնի կրոնափոխության: Ընդ որում, մեծ մասամբ նույնն են եղել մեթոդները՝ նախ իսլամի պարտադրում, իսկ արդեն կրոնափոխությունից հետո այդ մարդկանց տեղաբաշխել են հոծ թուրքական բնակչություն ունեցող շրջաններում, որպեսզի լիակատար ձուլման ենթարկվեն: Բռնի իսլամացման համար թիրախավորված են եղել հիմնականում կանայք և երեխաները, սակայն երբեմն տղամարդիկ էլ արդեն աքսորի ընթացքում ենթարկվել են կրոնափոխման: Օրինակ՝ ըստ ռեժիսոր Օզգյուր Ֆընդըքի, 1938-ին դերսիմցի հայ տղամարդկանց այլ նահանգներ աքսորի ժամանակ ստուգել և բռնի թլպատել են, իսկ այնուհետև նրանց տվել իսլամական

[23] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 197, թ. 27:

անուն ու գրանցել որպես սունի մուսուլման[24]: Կանանց նաև բռնությամբ ամուսնացրել են մուսուլմանների հետ և ստիպել, որ կրոնափոխ լինեն. այդ մասին, հատկապես ներկայումս, նոր մանրամասներ և փաստեր են ի հայտ գալիս: Անգամ տարեց կանայք այժմ սկսում են խոստովանել, որ իրենք հայ են և փոքր հասակում Դերսիմում կորցնելով իրենց ընտանիքները՝ առևանգվել են թուրքական բանակի զինվորների կողմից, շահագործվել և բռնի ամուսնացվել մուսուլմանների հետ[25]:

Բռնի իսլամացման բազմաթիվ դեպքեր արձանագրվել են հատկապես երեխաների նկատմամբ: Ներկայում ընթացող մի շարք ուսումնասիրությունների ժամանակ ի հայտ են գալիս տարբեր մանրամասներ, որոնք բացահայտում են 1936-38 թթ. Դերսիմում տեղի ունեցածների ողջ սարսափելի բնույթը: Այսպես, դերսիմցի Ռեսե Հեմըլին պատմելով այդ թվականների մասին՝ նշում է. *«5-6 տարեկան երեխա էի: Մի օր թուրք հեծյալ զինվորականները մեր գյուղ եկան: Ինձ և իմ երկու ընկերներին բռնեցին, ու նրանցից մեկը իջեցնելով մեր շալվարները՝ ստուգեց, իսկ այնուհետ նայելով իրենց հրամանատարին՝ գլխով հաստատման նշան արեց և ասաց.*

[24] Ինչպես են թուրքերը բռնի կերպով թլպատել հայերին, http://www.tert.am/am/news/2011/05/03/dersim/276231

[25] Sarıdoğan N., Dersim'in Ermeni kayıp kızı kaybolan yıllarını istiyor, http://www.stargazete.com/politika/dersimin-ermeni-kayip-kizi-kaybolan-yillarini-istiyor/haber-571903

«Այո՛, սրանք թլպատված են»: Մեզ բաց թողեցին: Բախտս բերել էր, որ հայրս ինձ վաղ տարիքում էր թլպատել. եթե թլպատված չլինեի, հիմա հաստատ ողջ չէի լինի»[26]:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Դերսիմում 1936-38 թթ. տեղի ունեցածները, լինելով ցեղասպանական արարքներ, ունեին նաև հակահայկական հստակ ուղղվածություն, և դերսիմաբնակ հայերը (ինչպես 1915-ին ապաստանած, այնպես էլ դարեր շարունակ այնտեղ բնակվող) թուրքական իշխանությունների կարևոր թիրախներից էին: Թուրքիայում պահպանված հայության այս խմբի նկատմամբ, փաստորեն, իրագործվեց ծրագրավորված ու մանրակրկիտ մշակված ցեղասպանություն, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող բռնի իսլամացում և ձուլում:

Հայերի բռնի իսլամացումը Թուրքիայի Հանրապետությունում 1940-1960-ական թվականներին. շարունակման միտումները

Տարբեր աղբյուրներում, մամուլի հրապարակումներում տեղ գտած սակավաթիվ և կցկտուր փաստերն ու տվյալները ցույց են տալիս, որ 1940-1960-ական թվականներին թուրքական իշխանությունները շարունակել են մի կողմից ուշա-

[26] Dinç G. B., նշված հոդ.:

դրության կենտրոնում պահել բռնի իսլամացված հայերին և որոշակիորեն սահմանափակել նրանց իրավունքները, իսկ մյուս կողմից թեկուզ ավելի նվազ տեմպերով իրականացնել կրոնափոխության քաղաքականությունը՝ իրենց թիրախում ունենալով հայության բեկորներին: Այդ առումով բավական ուշագրավ փաստեր են պահպանվել 1940-1950-ական թվականների խորհրդային արխիվային փաստաթղթերում, որոնք վերաբերում են հիշյալ ժամանակաշրջանում Թուրքիայում գոյատևած հայության վիճակին, թվաքանակին, հնարավոր հայրենադարձմանը դեպի Խորհրդային Հայաստան, նրանց նկատմամբ կիրառվող հալածանքներին: Խորհրդային իշխանությունները իրենց դիվանագիտական կառույցների միջոցով հստակ տվյալներ և վերլուծություններ են ստացել Թուրքիայում բնակվող բռնի իսլամացված հայության թվաքանակի, տեղաբաշխվածության, ինչպես նաև Ստամբուլի հայ համայնքի ներքին խնդիրների վերաբերյալ: Այդ թեմաների շուրջ հետաքրքրությունը հատկապես ակտիվ է եղել 1945-1946 թթ., ինչը ապացուցում են նաև դիվանագիտական զեկուցագրերը և տեղեկանքները: Այս ամենը իհարկե մեծապես կապված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ի և նացիստական Գերմանիայի չպատերազմող դաշնակցի՝ Թուրքիայի հարաբերություններում արձանագրված լուրջ լարվածության, ինչպես նաև Մոսկվայի ներկայացրած արդար հողային պահանջատիրության հետ[27]: Սակայն հետագայում էլ խորհրդային դիվանագիտական կառույցները ուշադրության կենտրոնում են պահել Թուրքիայի հայության տարատեսակ խնդիրները:

Կոնկրետ 1940-ական թվականների կեսերին, կապված ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիայից Կարսի և Արդահանի նահագները ետ պահանջելու և այդ տարածքները հայերով վերաբնակեցնելու հարցի հետ, սկսել էր հատուկ կարևորվել Թուրքիայում գոյատևած հայության թվաքանակը և հնարավոր հայրենադարձման խնդիրը: Ընդ որում, խորհրդային իշխանությունները հետաքրքրվում էին Թուրքիայի տարածքում բնակվող հայության և՛ քրիստոնյա, և՛ բռնի իսլամացված խմբերով, ու արդեն 1945 թ. հուլիսի 25-ին Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսությունից Մոսկվա ուղարկված «հույժ գաղտնի» դասիչով զեկուցագրում ներկայացվում են տվյալներ Թուրքիայի հայերի և նրանց թվաքանակի վերաբերյալ: Զեկուցագրում նշվում է, որ դա արվում է «համաձայն հանձնարարականի»[28] այսինքն՝ Մոսկվայից եղել է հատուկ հանձ-

[27] Այս մասին մանրամասն տե՛ս Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг., (под редакцией Армана Киракосяна), Ереван, 2010, Մելքոնյան Ք., Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1947 թվականներին. սևծովյան նեղուցների խնդիրը և Հայկական հարցը, Երևան, 2009:

[28] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 1:

նարարական: Արխիվային այս փաստաթղթում ներկայացվում է, որ Թուրքիայում հայերի թիվը, ըստ թուրքական պաշտոնական տվյալների, 1935-43 թթ. տատանվում է 57 000-ից մինչև 64 000, սակայն, ըստ ԽՍՀՄ հյուպատոսարանի ձեռք բերած տվյալների, միայն Ստամբուլում այդ ժամանակ ապրել է 75 000 հայ, իսկ արևելյան շրջաններում շուրջ 25 000[29]: Այդ նույն զեկուցագրին կից տեղեկանքում նշվում է, որ Փոքր Ասիայում, այսինքն՝ Թուրքիայի արևելյան շրջաններում բռնի իսլամացված հայերի թիվը գերազանցում է 100 000-ը[30]. *«Այս 100 հազարը այն հայերն են, որ չնայած իսլամացմանը, դեռևս կարող են ընկալվել որպես հայեր: Իսկ եթե հաշվենք նաև նրանց, ովքեր մանուկ հասակում՝ 1915-ին են ենթարկվել իսլամացման և ներկայումս մոռացել են անգամ իրենց ծագման մասին, ապա հայերի թիվը ավելի մեծ կլինի: Սակայն այս վերջին խմբի մարդկանց հնարավոր չէ որպես հայ դիտարկել»*[31]:

ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերություններում բացահայտ և քողարկված լարվածություն ստեղծող հանգամանքներից էր նաև հետպատերազմյան տարիներին սփյուռքահայերի սկիզբ առած ներգաղթը դեպի Խորհրդային Միություն, որը չի շրջանցել թուրքահայությանը: Մեր կարծիքով Թուրքիայում գոյատևած հայությունը ձգտում էր արտագաղթել և տեղափոխվել Խորհրդային Հայաստան՝ առնվազն երկու նկատառումներից ելնելով. նախ՝ դա մի միջոց էր ազատվելու թուրքական բռնապետությունից ու շարունակական հալածանքներից, և երկրորդ՝ հայերին գրավում էր պատմական հայրենիքում հաստատվելու գաղափարը՝ մանավանդ Կարսի ու Արդահանի նահանգների ազատագրման շուրջ տարածվող լուրերի համատեքստում: Թուրքական իշխանությունները այդ ժամանակ գործի դրեցին բռնության և հալածանքի տարբեր միջոցներ դեպի ԽՍՀՄ հայերի արտագաղթը կասեցնելու կամ նվազագույնի հասցնելու համար, որը նույնպես առնչվում էր վերոնշյալ երկու հանգամանքների հետ: Թուրքիայում ԽՍՀՄ հյուպատոսարանի աղբյուրները փաստում են, որ իշխանությունները սկսել են տարատեսակ բռնություններ կիրառել ինչպես քրիստոնյա, այնպես էլ իսլամացված հայերի նկատմամբ: Այս վերջին խմբի հայերի մասին ԽՍՀՄ հյուպատոսարանի հույժ գաղտնի դասիչով զեկուցագրում նշվում է. *«Վստահ ենք, որ թուրքական կառավարությունը այն պատճառաբանությամբ, որ շատ հայեր (իսլամացված - Ռ.Մ., Մ.Ա.) չունեն անձնագրեր, կամ էլ ընդունել են իսլամ և համարվում են թուրքեր՝ կթաքցնեն մեծ թվով հայերի»*[32]: Ի դեպ, այն, որ 20-րդ դարի կեսերին Թուր-

[29] Նույն տեղում:
[30] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 3:
[31] Նույն տեղում:

[32] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 5:

քիայում բռնի իսլամացված հայության որոշակի հատվածին չէր տրվել անգամ անձնագիր, իրողություն է, որին վերոնշյալ զեկուցագրում տրվում է հետևյալ որակումը. *«Սա անհավանական է, բայց փաստ»*[33]: Զեկուցագրում հատուկ ուշադրություն էր դարձվում տարբեր նահանգներում բնակվող բռնի իսլամացված հայության գոյության փաստի վրա և արվում հստակ առաջարկ. *«Անհրաժեշտ է ուշադիր հետաքննել ամեն նահանգ՝ հայտնաբերելու համար այն հայերին, ովքեր ցրված են ամենուր»*[34]: Ի դեպ, այդ ժամանակ ևս, ինչպես արդեն նշել ենք, թուրքական իշխանությունները ոչ միայն ճնշում են 1915-ին բռնությամբ կրոնափոխված հայերին, այլև սկսում են կիրառել բռնի իսլամացման քաղաքականությունը գոյատևած փոքրաթիվ քրիստոնյա հայության նկատմամբ: Այդ ցեղասպանական բնույթի արարքի մասին նույնպես փաստերի ենք հանդիպում վերոնշյալ զեկուցագրում[35]:

Հայերի ներգաղթի հարցով հետաքրքրված էր և ակտիվ զբաղվում էր (նաև ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների հանձնարարությամբ և թույլտվությամբ) Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ VI-ը, ով նամակներով դիմել է եկեղեցու արտասահմանյան բոլոր թեմերի առաջնորդներին՝ կոչ անելով ցուցաբերել համակողմանի աջակցություն սփյուռքահայերի դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթի գործին: Նմանատիպ մի գրություն է ուղարկվում նաև Պոլսո Հայոց պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանին: Վերջինս 1946 թ. հոկտեմբերի 18-ի իր պատասխան գրության մեջ Կաթողիկոսին հայտնում է, որ ներգաղթի ձեռնարկը համարում է. *«ազգօգուտ եւ սրտին մոտիկ խնդիր»*[36]: Բացի այդ, Գևորգ արքեպիսկոպոսը տեղեկացնում է, որ Խորհրդային Հայաստան ներգաղթելու համար բազմաթիվ հայեր են գրանցվել ԽՍՀՄ հյուպատոսարանում ինչպես ստամբուլաբնակ, այնպես էլ. *«Անատոլուի զանազան տեղերուն մեջ գտնուող հայեր ալ»*[37]: Ուշագրավ է, որ արքեպիսկոպոս Արսլանյանը ընդգծում է հատկապես արևելյան շրջաններից հայերի ներգաղթ կազմակերպելու հարցի կարևորությունը. *«ՆԱԽԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ տալ այն բազմահազար հայերուն, որոնք Անատոլուի զանազան գաւառներուն մեջ, առավելապես գիւղերու եւ շէներու մէջ, ցրքուն ու դառն վիճակի մը մէջ կը գտնուին»*[38]:

1945-1946 թթ. ընթացքում Թուրքիայում ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցչությունները պարբերաբար զեկուցագրեր և տեղեկանքներ են ուղարկել Մոսկվա, որտեղ ներ-

[33] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 6:
[34] Նույն տեղում:
[35] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 5:

[36] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136, թ. 2:
[37] Նույն տեղում:
[38] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136, թ. 4:

կայացրել են թուրքական հասարակական-քաղաքական օրակարգում, մամուլում այս խնդրի շուրջ տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև փոխանցել արժեքավոր փաստեր և տեղեկություններ: Այդ զեկուցագրերը և տեղեկանքները մեծ մասամբ կրել են «գաղտնի» կամ «հույժ գաղտնի» դասիչները: Այսպես, Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոս Վ. Գրուբյադկովը 1946 թ. հունվարին իր զեկուցագրում անդրադառնում է Թուրքիայի հայերի շրջանում ներգաղթի առաջացրած ոգևորությանը և թուրքական իշխանությունների ու մամուլի ագրեսիվ պահվածքին: Ըստ հյուպատոսի, չնայած որ թուրքական մամուլը գրում է, որ ԽՍՀՄ-ի որոշումը ծիծաղելի է և ոչ մեկը չի ցանկանում գնալ «բոլշևիկյան դրախտ», սակայն հայերը զանգվածաբար դիմում են հյուպատոսարան դեպի ԽՍՀՄ ներգաղթելու արտոնություն ստանալու համար: *«Ընդունելության օրերին սկսած առավոտվա 6-7-ից հյուպատոսարանի մուտքի մոտ հավաքվում են մեծ թվով հայեր, որպեսզի հասցնեն հերթ պահել: Լինում են օրեր, երբ մի քանի հարյուր հոգանոց հերթեր են գոյանում»*[39]: Հյուպատոսը նշում է, որ դիմողները ոչ միայն Ստամբուլից էին, այլև *«Անատոլիայի հեռավոր գավառներից»*: Խոսելով թվային տվյալների մասին՝ հյուպատոս Գրուբյադկովը նշում է, որ միայն 1945 թ. դեկտեմբերին

[39] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 102, թ. 1:

ԽՍՀՄ ներգաղթելու ցանկություն հայտնած հայերի թիվը եղել է մոտ 15 000[40]: Իսկ անդրադառնալով ընդհանրապես բոնի իսլամացված հայության թվաքանակին՝ հյուպատոսը նշում է 200 000 թիվը[41]:

1950-ականներին խորհրդային դիվանագիտական կառույցների Թուրքիայից ուղարկած տեղեկանքներում և զեկուցագրերում կրկին ուշադրության կենտրոնում է պահվում հայերի թվաքանակի ու մարդահամարների ժամանակ տվյալների խեղաթյուրման հարցերը: 1958 թ. դեկտեմբերի 29-ին Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության պատրաստած տեղեկանքում, որը վերաբերում էր հայերին, հանդիպում է մի ուշագրավ տեղեկություն: Այսպես, խոսելով մարդահամարների ժամանակ հայերի և մյուս փոքրամասնությունների թվաքանակի միտումնավոր քիչ ներկայացնելու խնդրի մասին նշվում է, որ 1955 թ. անցկացված համապետական մարդահամարի տվյալներով Թուրքիայում հայերեն խոսողների թիվը 46 934 է: Այնուհետև այդ թիվը բաժանվում է ըստ դավանանքային պատկանելության՝ առաքելական, կաթոլիկ, ավետարանական, և նշվում, որ Թուրքիայում բնակվում է հայերեն խոսող, սակայն իսլամ դավանող 1 130 մարդ[42]: Սրանք, փաստորեն, այն մարդիկ են, ովքեր

[40] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 102, թ. 2:
[41] Նույն տեղում:
[42] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 261, թ. 1:

հարցման ժամանակ որպես մայրենի լեզու նշել են հայերենը, որպես կրոն՝ իսլամը:

Բացի արխիվային փաստաթղթերից[43]՝ այլ աղբյուրներ ևս փաստում են, որ հատկապես 1950-ականներին Թուրքիայում գոյատևած քրիստոնեադավան հայերի հանդեպ կրկին սրվում է բռնի իսլամացման քաղաքականությունը և հատկապես գավառներում: Այսպես, 1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից Սասունում բնակվող փոքրաթիվ քրիստոնյա հայերին իսլամ ընդունելու կոչ-պահանջ է ներկայացվել, որը, սակայն, հակազդեցություն է առաջացրել սասունցիների մի մասի շրջանում, որոնք մերժել են պարտադրված կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվել են, ընդ որում՝ դրանցում ընդգրկվել են նաև ուժային կառույցները: Այս ամենի հետևանքով քրիստոնյա հայերի մի մասը, գոնե արտաքուստ, տեղի է տվել և ընդունել իսլամ: Բռնի մեթոդներին զուգահեռ թուրքական պետությունը գործի է դրել նաև այլ միջոցներ, և հայկական գյուղեր հաճախ սկսել են այցելել մուսուլմանական հոգևորականներ, որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում և այլն, քանի որ այդ տարածքներում 1915-

[43] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 261, թ. 7:

ից հետո հայ քրիստոնյա հոգևորականներ չկային, և արգելված էր նաև Ստամբուլից քահանաների գործուղումը պատմական Հայաստանի շրջաններ:

Նույն քաղաքականությունը 1950-ականներին կիրառվել է նաև Դիարբեքիր նահանգում, և այդ մասին պատմում է ներկայումս Պոլսո Հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը ու կոնկրետ օրինակներ բերում հենց իր ընտանիքի հետ կապված: Այսպես, հարցազրույցներում Արամ Սրբազանը նշել է, որ իր քրոջ ընտանիքին ստիպել են իսլամ ընդունել. *«Այս դեպքերը տեղի են ունեցել 1950-ականներին»* և հավելում, թե այդ տարիներին շատերն են բռնությամբ իսլամացվել[44]:

Բացի այդ՝ շարունակվել են արդեն իսլամացված հայերի և նրանց սերունդների հանդեպ հալածանքները: Ինչպես փոխանցում են դիարբեքիրցի իսլամացված հայերի ժառանգները, 1950-ականների կեսերին տեղի քրդերը հալածել են իրենց ծնողներին, անգամ անարգել սպանել, և այդ ամենում տիրել է քրդերի ու այլ մուսուլմանների մոտ տարածված հետևյալ մտածելակերպը. *«Դու հայ ես: Թեկուզ մուսուլման էլ լինես, միևնույն է քո ոսկորները հարամ են»*[45]:

[44] Konuralp O., Türkiye Ermenilerinin gizli kalmış travması, Hürriyet, 22, 11, 2009.

[45] Sessizliğin Sesi II: Diyarbakırlı Ermeniler Konuşuyorlar (Derleyen: Ferda Balancar), İstanbul, 2012, s. 9.

Ուշագրավ է, որ ի թիվս այլ հալածանքների՝ բռնի կրոնափոխության պահանջները չեն դադարել նաև հաջորդ տասնամյակում: Այսպես, 1965 թ. մայիսի 21-ին Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսության կցորդ Բ. Չերեզովը «գաղտնի» դասիչով ներկայացնում է տեղեկանք 1965 թ. մայիսի 7-ին ԽՍՀՄ-ի Ստամբուլի հյուպատոսություն այցելած հայազգի Հայրեթթին Գյոչերի հետ զրույցից: Հայրեթթին Գյոչերը Սղերթի նահանգի Բիմեր գյուղից է եղել և հյուպատոսարան այցելել է ներկայացնելու Սղերթի և Մուշի նահանգների հայության ծանրագույն վիճակը: Ըստ նրա, տեղի քրդերը իշխանությունների թողտվությամբ ամեն կերպ ճնշել են հայերին և պահանջել, որպեսզի նրանք ընդունեն իսլամ, բացի այդ՝ խլել են նրանց գույքը, անասուններին[46]: Դատելով զրույցից՝ խոսքը վերաբերել է դեռևս քրիստոնյա հայերին կամ էլ նրանց, ովքեր իսլամ ընդունելով հանդերձ պահպանել են քրիստոնեական սովորույթները այսինքն՝ ծպտյալ հայերին: Հայրեթթին Գյոչերը լիազորված է եղել այդ նահանգների հայության վիճակը ներկայացնել ԽՍՀՄ հյուպատոսությանը հույս ունենալով, որ նրանք այդ խնդրի մասին կիրազեկեն Թուրքիա այցելող ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարին: Ի դեպ, այդ գրությունը 1965 թ. հունիսի 11-ին Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար

[46] ՀԱԱ, ֆ. 113, ց. 100, գ. 34, թ. 47:

Բ. Մարտիրոսյանը ուղարկել է ՀԽՍՀ մինիստրների խորհրդին, այսինքն՝ Ստամբուլի հյուպատոսարանը, այնուամենայնիվ, ինչ-որ ընթացք տվել է Հայրեթթին Գյոչերի դիմումին:

Այդ նույն թվականներին Թուրքիայում բնակվող հույների նկատմամբ կիրառվող հալածանքների և մասնավորապես 1964 թ. ստամբուլաբնակ մոտ 40 000 հույների արտաքսման ժամանակ սրվում են բռնությունները նաև հայերի հանդեպ, ինչը կրկին ուղեկցվում է կրոնափոխության հարկադրանքով: Որոշ թվով հույներ հալածանքներից խուսափելու համար «կամովին» ընդունում են իսլամ[47], և այդ նույն ժամանակ ու կրկին նույն հալածանքի մթնոլորտի հետևանքով Բաթմանում 88 բնակիչ ունեցող հայկական մի ամբողջ գյուղ փոխում է կրոնը՝ ընդունելով իսլամ[48]:

Իսլամացված հայերի նկատմամբ ցայտուն ուշադրությունը և բացահայտ հալածանքները շարունակվել են նաև հաջորդ տասնամյակներում: Մասնավորապես՝ 1971 թ. ռազմական միջամտությունից հետո կրկին թարմացվել են անվստահելի տարրի՝ իսլամացված հայերի ցուցակները, նրանցից շատերը հետապնդվել են: Անգամ տվյալներ կան, որ այդ շրջանում ոստիկանները խմբերով հավաքել են իսլամացված հայերին ու տարել անհայտ ուղղությամբ և նրան-

[47] Demir H., Akar R., İstanbul'un Son Sürgünleri, İstanbul, 2-inci Baskı, 1994, s. 101.

[48] Նույն տեղում: Տե՛ս նաև Hofmann T., Armenians in Turkey today, Uppsala, (second edition), 2003, p. 18.

ցից այլևս լուր չի ստացվել[49]: Այս մասին ազգագրագետ Հ. Խառատյանը գրում է. *«Մարդիկ յաճախ պարզապէս «անհետ կանում» էին...«Անհետացողների» ճակատագրով չէին համարձակւում հետաքրքրուել: Հասկանում էին, որ դա յատուկ ծառայութիւնների գործն է»*[50]: Այդ շրջանը ևս որոշիչ եղավ, որպեսզի հայերը թաքցնեն իրենց ծագումը, և ավելի խորանա ուծացման գործընթացը, ինչպես նաև նոր թափ ստանա գավառներից դեպի Ստամբուլ գաղթը: Իհարկե 1970-80-ականներին հայության նկատմամբ ճնշման սաստկացման հարցում ամենևին էլ երկրորդական չպետք է համարել ԱՍԱԼԱ-ի գործողությունները և այդ համատեքստում Թուրքիայում հակահայկական տրամադրությունների աճը:

Անհրաժեշտ է փաստել նաև, որ, ըստ էության, թուրքական պետական խտրական և ցեղասպան քաղաքականության պայմաններում օրինաչափ է, որ մեր օրերում ևս բռնի իսլամացված հայերի սերունդները գտնվում են Թուրքիայի իշխանությունների ուշադրության կենտրոնում: Նման թարմ ապացույցներից կարելի է համարել այն, որ հայտնի Վիկիլիքս կայքում տեղ էին գտել փաստաթղթեր, որոնցում Թուրքիայում ԱՄՆ դեսպանատունը պետքարտուղարությանը տե-

[49] Խառատեան Հ., Ի. Դարի միջնադար (իսլամացուած, իսլամացած, ալեւիացած, ծպտեալ հայերը Թուրքիայում) (Բ.), Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրութ, 2014, հատոր ԼԴ., էջ 517:

[50] Նույն տեղում, էջ 554-555:

ղեկացնում էր 2004 թ. դեկտեմբերի 22-ի մի հրահանգի մասին, որով թուրքական կենտրոնական իշխանությունները կարգադրում են արևելյան և հարավ-արևելյան նահանգներում ուսումնասիրել, պարզել և զեկուցել հայկական ծագում ունեցող քաղաքացիների իրական թվի մասին[51]: Ցեղասպանության զոհ բռնի իսլամացված հայերի թվաքանակի վերաբերյալ թուրքական իշխանությունների համակարգված աշխատանքի ապացույց կարելի է համարել նաև թուրք կեղծարար պատմաբան, Օսմանյան արխիվի նախկին տնօրեն ու Թուրքական պատմագիտական ընկերության նախկին նախագահ Յուսոֆ Հալաչօղլուի հայտարարությունը, համաձայն որի՝ նա ունի բռնի իսլամացված հայերի ցուցակները, որոնք պատրաստվել են բծախնդրությամբ, ավելին՝ *«պետությունը փուն առ փուն շրջելով արձանագրել է այս մարդկանց»*[52]: Խնդիրն ավելի հետաքրքիր ենթատեքստ է ձեռք բերում նաև այն պատճառով, որ Հալաչօղլուն խուսափում է նշել այդ ցուցակների և դրանցում առկա տվյալների հավաքման կոնկրետ աղբյուրը: Բնականաբար, հարց է ծագում. եթե այդ մարդկանց գրանցել է պետությունը, ապա դա պետք է արված լիներ պետական օղակների և դրանց հատկացված գործառույթների միջոցով:

[51] Նույն տեղում, էջ 471:

[52] Özgür B., Halaçoğlunun listesi 1935teki "gizli' nüfus sayımdan mı cıktı, Referans, 08, 09, 2007.

Վերոնշյալ փաստերը վկայում են, որ Թուրքիայի Հանրապետությունը հետևողականորեն շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման ցեղասպան քաղաքականությունը, որի շարժառիթը եղել է Թուրքիան հայկական տարրից իսպառ «մաքրելու» և հայության անգամ փոքրիկ բեկորներին ձուլելու մոլուցքը:

ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԱՅՍՕՐ. ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐ, ՄԻՏՈՒՄՆԵՐ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով թուրքական պետության քաղաքականությունը հայերի բռնի իսլամացման ուղղությամբ և վերաբերմունքը կրոնափոխ հայության նկատմամբ՝ տեսնում ենք, որ դրանում կա հստակ շարունակականության դրսևորում. և՛ Օսմանյան կայսրությունում, և՛ Թուրքիայի Հանրապետությունում շարունակվել է նույն քաղաքական գիծը: Ուստի, հարկ է թուրքական այդ երկու պետություններում հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը դիտարկել նույն տրամաբանական հարթության և շղթայի համապատկերում: Միևնույն ժամանակ, կրոնափոխ հայության թեմայի ակտիվացումը ստիպել է թուրքական իշխանություններին իրենց ժխտողական քաղաքականության մեջ ավելացնել նոր տարրեր: Իսլամացված հայության խնդրի նկատմամբ Թուրքիայի պաշտոնական և կիսապաշտոնական դիրքորոշումը, միևնույն ժամանակ, ապացուցում է, որ հենց իրենք՝ թուրքական իշխանությունները, այդ հարցը, թեկուզ անուղղակիորեն, դիտարկում են ցեղասպանության խնդրի համատեքստում: Ասվածի ապացույցներից են մի կողմից՝ թուրք կեղծարար

պատմաբանների հոդվածները, հրապարակային ելույթները, որոնք միտված են այլ դիտանկյունից ներկայացնել խնդիրը, իսկ մյուս կողմից՝ իշխանությունների դրդմամբ և ուղղորդմամբ որոշ շրջանակներ փորձում են քարոզչական տարբեր մեթոդներով հարցը կրկին տեղափոխել այլ հարթություն և սխալ եզրահանգումների հիմք ստեղծել: Մեր կարծիքով, հատկապես կարևոր է նկատել թուրքական ժխտողականության այս երկրորդ ուղղվածությունը: Մասնավորապես՝ այդ քաղաքականության ամենացայտուն և, միևնույն ժամանակ, վտանգավոր դրսևորումներից է այն, որ այսպես կոչված թուրք ընդդիմադիր մտավորականներ, գիտնականներ, նաև պոլսահայ համայնքի որոշ ներկայացուցիչներ թուրքական իշխանությունների ակնհայտ դրդմամբ և ուղղորդմամբ շրջանառության մեջ գցեցին իբրև թե կամովին իսլամ ընդունած հայերի գոյության մասին միֆը և սկսեցին շրջանառել *իսլամաց(վ)ած* տերմինը՝ դրանով շեշտելով, թե իբրև կրոնափոխությունը ոչ միշտ է եղել բռնի, և երբեմն արձանագրվել են նաև «կամովին» իսլամանալու դեպքեր: Ցավոք սրտի, այս խայծը կուլ տվեցին նաև հայկական որոշ ոչ մասնագիտական շրջանակներ:

Բռնի իսլամացված հայերի խնդրի նմանօրինակ քողարկված շահարկման և ոչ մասնագիտական մոտեցման օրի-

նակներից է Ստամբուլում 2013 թ. անցկացված գիտաժողովը, որի վերնագիրն արդեն մտահոգիչ է. «Իսլամաց(վ)ած հայեր»: Գիտաժողովի կազմակերպիչներից մեկը՝ Սաբանջը համալսարանի դասախոս Այշեգյուլ Ալթընայը, անդրադառնալով այդ հարցին՝ փոքր-ինչ դեմագոգիկ երանգներով նշում է. *«Թեկուզ եթե մի հոգի իր կամքով փոխած լինի կրոնը, ապա բոլորին չենք կարող ասել «բռնի իսլամացված»*[1]: Ալթընայը չի մոռանում նաև հիշեցնել հայ կանանց, ովքեր «սիրահարվում էին» մուսուլման տղամարդկանց հենց ցեղասպանության ու աքսորի ժամանակ և «կամովին» փոխում կրոնը: Այնուհետև նա փորձում է զուգահեռներ տանել «ազգայնամոլական թուրքական պատմագրության» և «ազգայնամոլական հայկական պատմագրության» միջև՝ նկատելով, թե դրանց մոտեցումները իսլամացված հայերի պարագայում իբրև թե նման են իրար[2]:

Թուրքիայում իսլամացված հայերի խնդրի քննարկումների ժամանակ թե՛ գիտական և թե՛ քաղաքական ասպարեզներում գրեթե անտեսվում է այն հանգամանքը, որ դա հստակ ցեղասպանական արարք է, պետականորեն իրականացված քաղաքականություն կոնկրետ էթնոսի նկատմամբ:

---

[1] İlgün S., Yüz yıllık suskunluk kırılıyor, http://www.evrensel.net/haber/70881/yuz-yillik-suskunluk-kiriliyor.html#.Um9_aPlSjX4

[2] Նույն տեղում:

Դրա փոխարեն շեշտը դրվում է կամ «կամովին» կրոնափոխությունների սակավաթիվ օրինակների վրա կամ նրանց շրջանում տեղի ունեցող միջմշակութային, միջկրոնական զարգացումների, կենցաղի նկարագրության և այլնի վրա: Սրանով, փաստորեն, ուշադրությունը շեղվում է մի կարևոր հանգամանքից, որ ***հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության բաղկացուցիչ մասն ու դրվագն է եղել***, որը չի սահմանափակվել միայն բուն ցեղասպանության տարիներին, այլև շարունակվել է նաև հանրապետական Թուրքիայում:

Թուրքական բացահայտ և քողարկված շահարկումներին ի պատասխան հայկական կողմը և՛ գիտական, և՛ քաղաքական, և՛ անգամ հոգևոր ոլորտներում հարցը հստակորեն դիտարկում է ցեղասպանության համատեքստում և այդ մասին հայտարարում նաև պաշտոնական մակարդակով: Այսպես, Հայաստանի հոգևոր ու աշխարհիկ իշխանության ղեկավարները սկսած 2008 թվականից իրենց ելույթներում անդրադարձել են բռնի կրոնափոխ հայերի խնդրին և, ընդ որում՝ դա ներկայացնելով որպես ցեղասպանական արարք և Հայոց ցեղասպանության մի բաղկացուցիչ մաս: Մասնավորապես 2011 թ. ապրիլի 24-ի ուղերձում ՀՀ նախագահը խոսել է ցեղասպանության ժամանակ տեղի ունեցած բռնի

իսլամացումների մասին՝ նշելով. *«Օսմանյան կայսրության կողմից պետականորեն իրականացվել է հայ ժողովրդի բնաջնջման և հայրենազրկման ծրագիր: Դրա իրականացման բոլոր փուլերում հայերի սպանդը, բռնագաղթը,* ***կրոնափոխությունն*** *(ընդգծումը մերն է - Ռ.Մ., Մ.Ա.) ու սփրկացումը Թուրքիայի ներքին կյանքում դիտվել են որպես սովորական, կենցաղային մանրուքներ»*[3]: 2010 ապրիլի 24-ի իր ուղերձում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը նշել է. *«****Ցեղասպանության զոհեր են սփիռողաբար իսլամ ընդունած հայերը*** *(*ընդգծումը մերն է - Ռ.Մ., Մ.Ա.*) և նրանց սերունդները, ովքեր վախենում են խոսել իրենց ինքնության մասին»*[4]:

Անդրադառնալով Թուրքիայում գոյատևած բռնի իսլամացված հայության տարբեր սերունդների շրջանում առկա ընկալումներին և դրսևորումներին՝ պետք է ասել, որ դրանք բավական տարբեր են: Օրինակ, կրոնափոխվածների առաջին սերունդն ուներ փրկվելու և գոյատևելու խնդիր, երկրորդ սերունդն արդեն սկսում է մշակել ինքնության պահպանման, քրդական ու թուրքական միջավայրերում ապրելու ադապտացիոն մեխանիզմներ, երրորդ սերունդն արդեն

---

[3] ww.nt.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2011&month=04&day=24&shownews=1040754&LangID=9#1040754

[4] http://www.tert.am/am/news/2010/04/24/april24/

փորձում է նոր իրավիճակում օգտվել թեկուզ փոքրիկ ազատությունից, իսկ նրա մի մասը ճանապարհ փնտրել դեպի ինքնության վերադարձ: Սակայն կան նաև բացասական զարգացումներ. եթե առաջին և երկրորդ սերունդների մոտ ինքնության հետ կապված հիշողությունն ավելի թարմ էր, ազգային սովորույթների իմացությունը ավելի բարձր, ապա արդեն երրորդ սերունդը զգալիորեն զուրկ է դրանցից, իր վրա է կրում իսլամական, թուրքական հասարակության, կենցաղավարության ավելի մեծ ազդեցություն: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ինչպես նկատում է ֆրանսուհի լրագրող-հետազոտող Լորանս Ռիթթերը, գրեթե բոլոր իսլամացված հայերի և նրանց ընտանիքների մոտ պահպանվել են 1915-ի և դրանից առաջ ընկած ժամանակահատվածի վերաբերյալ հիշողություններ[5]: Այսինքն՝ նրանց մոտ, ըստ էության, կա Հայոց ցեղասպանության կոլեկտիվ հիշողություն, որը սերնդեսերունդ փոխանցվում է, և դա, փաստորեն, ցեղասպանական արարքի անհերքելի ապացույցն է, որն անկախ ժամանակից, թուրքական ժխտողական քաղաքականությունից և քարոզչական հնարքներից շարունակում է թեկուզ ենթագիտակցական մակարդակում գերակա մնալ:

[5] Ritter L, Sıvaslıan M., նշված աշխ., 17:

Սակայն ուշագրավ է նաև այն փաստը, որ հենց մուսուլմանական հասարակության (թուրքեր, քրդեր, չերքեզներ) մեջ մինչ օրս էլ բռնի իսլամացված հայերի և նրանց սերունդների համար կիրառվում է «թրից փրկվածներ» եզրույթը[6]: Նման ձևակերպումն իր մեջ ներառում է ցեղասպանությունը գործածների և նրանց սերունդների խորքային ընկալման և հայերի նկատմամբ հստակ թշնամական դիրքորոշման բաղադրիչներ: Սակայն էլ ավելի կարևոր է այն, որ այս եզրույթով անգամ թուրքական-մուսուլմանական հասարակությունը պահպանում է ցեղասպանության և կոնկրետ դրա իրագործման հիշողությունը ու բռնի իսլամացված հայերին, թեկուզ անուղղակի, համարում Հայոց ցեղասպանության անմիջական հետևանք: Այսինքն՝ բռնի իսլամացված հայերին կոչելով «թրից փրկվածներ»՝ նախ փաստում են, որ նրանց փրկությունը, ըստ էության, կապված է եղել որոշակի հանգամանքներից, և նրանք պետք է կիսեին իրենց ազգակիցների ճակատագիրը, և երկրորդ, որ բռնի իսլամացված հայերն ու նրանց սերունդները տասնամյակներ հետո անգամ չեն համարվում հասարակության նորմալ անդամ: Թուրք հետազոտող Ջենգիզ Աքթարը նույնիսկ կարծիք է հայտնել, որ «թրից փրկված» ձևակերպումը «լայնացրել» է

[6] Նույն տեղում, էջ 9:

իր սահմանները, և այսօր կիրառվում է ոչ միայն բռնի իսլամացված, այլև բոլոր հայերի համար[7]:

Ուսումնասիրելով Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում հայերի նկատմամբ կիրառված բռնի իսլամացման քաղաքականությունը՝ գալիս ենք հետևյալ եզրակացությունների.

- Քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության հիմքերը ձևավորվում են դեռևս սելջուկյան տիրապետության ժամանակ, երբ իսլամացումն արդեն ստանում էր կազմակերպված բնույթ:
- Հայերի նկատմամբ բռնի կրոնափոխությունը՝ որպես պետական քաղաքականություն, որդեգրվում է օսմանյան պետության հիմնադրման արդեն սկզբնական շրջանում և հետագայում «կատարելագործվում» է:
- Բռնի կրոնափոխությունը գերակշիռ դեպքերում տեղի է ունեցել մահվան սպառնալիքի ներքո, իսկ «կամովին» իսլամացումը նույնական է պարտադրանքի:
- Բռնի կրոնափոխության և ուծացման քաղաքականությունն արդեն 19-րդ դարից անմիջականորեն շաղկապվում է գերակայող գաղափարախոսությունների՝ օսմանիզմի, իսլամիզմի, հետագայում նաև թուրքիզմի ու պանթուրքիզմի կենսագործման հետ:
- Օսմանյան կայսրության թուլացմանը զուգահեռ՝ սաստկանում է բռնի կրոնափոխության քաղաքականությունը, որն ամենայն դաժանությամբ կիրառվում է 19-րդ դարի վերջի համիդյան կոտորածների, 1909 թ. Կիլիկիայի կոտորածի և 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին:
- Հայերի բռնի կրոնափոխությունը կազմակերպել է օսմանյան պետական մեքենան՝ անկախ սուլթանի կամ կառավարության քաղաքական կողմնորոշումներից:
- Կրոնափոխության հիմնական թիրախներն են եղել երեխաները և կանայք: Հատկապես երեխաների նկատմամբ Օսմանյան կայսրությունում կիրառվել է, թերևս, առավել մշակված մանկահավաքի քաղաքականությունը:
- Բռնի իսլամացման ենթարկվելուց հետո երկար ժամանակ հայության այդ խմբերը պահպանել են ազգային և կրոնական սովորույթների տարրեր, իսկ հարմար առիթի դեպքում՝ վերադարձել քրիստոնեությանն ու իրենց ազգային ինքնությանը:

[7] Նույն տեղում:

- Հայերի բռնի իսլամացումը կիրառվել է ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության անկումը և Թուրքիայի Հանրապետությունը իր հերթին որդեգրել ու շարունակել է նույն ցեղասպան քաղաքականությունը:
- Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում հայերի հանդեպ կիրառված բռնի կրոնափոխության քաղաքականությունը հստակ ցեղասպանական գործողություն է, որն իր տեսական սահմանումն ունի ինչպես ՄԱԿ-ի ցեղասպանությունները կանխարգելող կոնվենցիայում, այնպես էլ միջազգային ցեղասպանագիտական ուսումնասիրություններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային փաստաթղթեր և նյութեր

1. ՀԱԱ, ֆ. 113, ց. 100, գ. 34:
2. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 72:
3. ՀԱԱ, ֆ 326, ց. 1, գ. 102:
4. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136:
5. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 151:
6. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 197:
7. ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 261:

Տպագիր սկզբնաղբյուրներ, օրագրեր, հուշագրություններ

Հայերեն

1. Աբելեան Գ., Ցկեանս նահատակութիւն, Այնճար, Սավա, 2005, 454 էջ:
2. Ամջա Հ., Տեղահանություն և ոչնչացում (օսմաներենից թարգմանությունը՝ Ա. Ավագյանի), Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2007, 48 էջ:

3. Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալեադ փաշա, Երևան, Արևիկ, 1990, 304 էջ:
4. Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, Էդիթ Պրինտ, 2011, 290 էջ:
5. Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի (թարգմանությունը՝ Վ. Մինալյանի), Երևան, Լաքի Փրինթ, 2006, 510 էջ:
6. Դևիս Լ., Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ. (թարգմանությունը՝ Գ. Ջանիկյանի), Երևան, Դալլ, 2001, 368 էջ:
7. Եսայան Զ., Ավերակներուն մեջ, Երևան, «Գրական հայրենիք» («Հայաստան»), 2006, 208 էջ:
8. Զավէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, Նոր Աստղ, 1947, 424 էջ:
9. Հալաջյան Գ. (Թափառական), Դեպի կախաղան, Երևան, «Վան Արյան», 2014, 176 էջ:

10. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972, 810 էջ:
11. Հայոց ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 256 էջ:
12. Մինախորեան Վ., 1915 թւականը. արհաւիրքի օրեր, Թեհրան, 2006, 513 էջ:
13. Մորգենթաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները (թարգմ.՝ Ենովք Արմեն), Երևան, Լույս, 1990, 356 էջ:
14. Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Գահիրէ, Արարատ. Ս. Դարբինեան, 1909, 64 էջ:
15. Յոհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2008, 148 էջ:

16. Պալաքյան Գ., Հայ զողգոթան: Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն..., Երևան, «Հայաստան», 1991, 391 էջ:
17. Ջոն Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (Արման Կիրակոսյանի խմբագրությամբ), Երևան, Տիգրան Մեծ, 2009, 680 էջ:
18. Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին (խմբագիր՝ Պ. Հովհաննիսյան), Երևան, «Հայագիտակ», 2011, 720 էջ:
19. Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2000, 500 էջ:
20. Օտեան Ե., Անիծեալ տարիներ (1914-1919). անձնական յիշատակներ, Երևան, «Նաիրի», 2004, 584 էջ:

Ռուսերեն

1. Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., (под редакцией Армана Киракосяна), Ереван, Тигран Мец, 2010, 332 стр..
2. Геноцид армян в Османской империи (сборник документов и материалов под редакцией М. Нерсисяна, 2-ое, дополненное издание), Ереван, издательство "Айастан", 1982, 704 стр..
3. Растерзанная Армения, Ереван, Музей-институт геноцида армян, 2005, 178 стр.
4. Чихачев П., Письма о Турции, Москва, Издательство восточной литературы, 1960, 86 стр..

Թուրքերեն

1. Adıvar H., Mor Salkımlı Ev, İstanbul, Özgü Yayınları, 2008, 3-üncü basım, 284 s..
2. Atay F., Zeytindağı, İstanbul, MEB yayınları, 1989, 179 s..
3. Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, İstanbul, Everest yayınları, 2009, 272 s..
4. El-Chusein F., Bir Müslümanın gözüyle Ermenilerin şahadeti, Potsdam, Tempelverlag, 1922, 56 s.
5. Holmes M., Urfa'da Ermeni Yetimhanesi (1919-1921), İstanbul, Yaba, 2005, 200 s.
6. Karabekir K., Çocuk Davamız, c. I, İstanbul, Emre Yayınları, 1995, 363 s..

Անգլերեն

1. Duckett F., The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor during April, 1909,

Yerevan, The Armenian Genocide Museum-Institute, 2009, 172 p..

Գրքեր

Հայերեն

1. Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Երևան, Էդիթ Պրինտ, 2014, 152 էջ:
2. Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2002, 766 էջ:
3. Անասյան Յ., Թուրքական ֆութուվվաթը և հայերը (Օսմանեան կայսրութեան ձուլողական քաղաքականութեան պատմութիւնից), Վիեննա, Մխիթարեան տպարան, 1985, 128 էջ:
4. Ատրպետ, Ճորոխի աւազանը, Վիեննա, Մխիթարեան միաբ., 1929, 224 էջ:
5. Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, 632 էջ:
6. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 718 էջ:

7. Բժշկեան Մ., Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, Վենետիկ, Ս. Ղազար, 1819, 156 էջ:
8. Գասապյան Մ., Հայերը Նիկոմեդիոյի գաւառին մեջ, Պարտիզակ, Ազատամարտ, 1913, 315 էջ:
9. Գրիկէր, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, Ոսկետառ, 1980, 476 էջ:
10. Երեմեն Դ., Թուրքերի ծագումը (ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1975, 357 էջ:
11. Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, «Հայաստան», 1993, 158 էջ:
12. Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIIIդդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 425 էջ:
13. Թոռլաքյան Բ., Համշենահայերի ազգագրությունը (Հայ ազգագրություն և բանահյուսություն), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1981, հ. 13, 154 էջ:
14. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, «Հայաստան», 1984, 336 էջ:
15. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, «Խաչիկ Պապիկեան» հրատարակչական հիմնադրամ, 2009, 295 էջ:

16. Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2007, 103 էջ:
17. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1967, 560 էջ:
18. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1980, 456 էջ:
19. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, «Հայաստան», 1982, հ. 1, 360 էջ:
20. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, «Հայաստան», 1983, հ. 2, 464 էջ:
21. Հասրաթյան Մ., Օրեշկովա Ս., Պետրոսյան Յու., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, ԵՊՀ հրատ., 1986, 403 էջ:
22. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, Զանգակ-97, 2002, 29 էջ:

23. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, 669 էջ:
24. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968, 340 էջ:
25. Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, «Նորավանք», 2009, 112 էջ:
26. Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2010, 184 էջ:
27. Մելքոնյան Ք., Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1947 թվականներին. սևծովյան նեղուցների խնդիրը և Հայկական հարցը, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009, 50 էջ:
28. Մկրտիչեան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիւրտերու զազանութիւնները, Գահիրե, Գ. Ճիհանեան, 1919, 127 էջ:
29. Մսըրլեան Զ., Հայոց ցեղասպանութենէն առաջ եւ ետք, Անթիլիաս, ԳՄԳՄ հրատ. թիվ 74, 2011, 280 էջ:
30. Յովակիմեան Յ., Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պեյրութ, Մշակ, 1967, 952 էջ:

31. Յովսեփեան Ղ., Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, Հերմես, 1904, 103 էջ:
32. Շաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. Դնշիրմե, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2006, 188 էջ:
33. Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ), Երևան, «Հայաստան», 1988, 480 էջ:
34. Պողոսյան Ս., Սև ծովից Վանա ծով. հինգ ամիս հինգ օր, Երևան, ԿՓԸ, 1992, 112 էջ:
35. Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008, հ. 1, 724 էջ:
36. Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, «Գրական հայրենիք» («Հայաստան»), 2009, հ. 2, 808 էջ:
37. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, «Լուսակն» հրատ., 2009, 248 էջ:
38. Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, «Հայաստան», 1986, 564 էջ:

39. Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, Հայաստան, 1991, 630 էջ:
40. Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 436 էջ:
41. Վարդանյան Գ., Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012, 196 էջ:
42. Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 428 էջ:
43. Տաշեան Հ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, Մխիթարեան տպարան,1921, 97 էջ:
44. Քիւրքճեան Ա., Իսլմաց(ու)ած հայեր. Թուրք, քիւրտ, արաբ, Թորոնթօ, 2014, 42 էջ:

Ռուսերեն

1. Гарбузова В., Сказание о Мелике Данышменде. Историко-филологическое исследование, Москва, “Наука”, 1959, 189 стр..

2. Гордлевский В., Избранные сочинения, Москва, Издательство восточной литературы, 1960, том 1., 553 стр..
3. Гордлевский В., Избранные сочинения, Москва, Издательство восточной литературы, 1962, том III, 578 стр..
4. Кинросс Л., Расцвет и упадок Османской Империи, Москва, "Крон-пресс", 1999, 695 стр..
5. Кондакчян Р., Турция: внутреняя политика и ислам, Ереван, Издательство АН Армянской ССР, 1983, 238 стр..
6. Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX – начале XX веков, Ереван, изд. ЕГУ, 1988, 306 стр..
7. Курдское движение в новое и новейшее время (отв. Ред. Гасратян М. А.), Москва, Наука, 1987, 300 стр..
8. Петросян Ю., Османская империя: могущество и гибель, Москва, Наука, 1990, 280 стр..
9. Сафрастян Р., Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), Ереван, изд. АН Арм. ССР, 1985, 147 стр.

Թուրքերեն

1. Akçam T., Ermenilerin Zorla Müslümanlaştırılması: Sessizlik, İnkâr ve Asimilasyon, İstanbul, İletişim Yayınları, 2014, 248 s..
2. Alt A., Tarihin ve bugünün aynasında Hemşin Ermenileri, İstanbul, Belge Yayınları, 2005, 147 s..
3. Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, Babil, 2005, 361 s..
4. Bahadır İ., Cumhuriyetin Kuruluş Sürecinde Atatürk ve Aleviler, İstanbul, Kalan Yayınları, 2002, 112 s..
5. Başyurt E., Ermeni evlatlıklar: saklı kalmış hayatlar, İstanbul, Karakutu Yayınları, 2006, 128 s..
6. Bulut A., Gizli Ermeniler, İstanbul, Bilgeoğuz, 2010, 383 s..
7. Demir H., Akar R., İstanbul'un Son Sürgünleri, İstanbul, İletişim Yayınları, 2-inci Baskı, 1994, 230 s..
8. Dink H., İki yakın halk, iki uzak komşu, İstanbul, Uluslararası Hrant Dink Vakfı Yayınları, 2008, 108 s..
9. Dündar F., Modern Türkiye'nin Şifresi: İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918), İstanbul, İletişim Yayınları, 2008, 536 s..
10. Haçikyan L., Hemşin Gizemi: Hamşen Ermenileri Tarihinden Sayfalar, İstanbul, Belge Yayınları, 1997, 112 s..

11. Kalman M., Belge ve Tanıklarıyla Dersim Direnişleri, İstanbul, Nûjen Yayınları, 1995, 497 s..
12. Kaplan S., 90. Yılında Ermeni Trajedisi: 1915'te ne oldu?, İstanbul, Hürriyet, 2005, 2-inci baskı, 172 s..
13. Miller D., Miller L., Tanıklar Dilinden Ermeni Soykırımı, İstanbul, Peri Yayınları, 2006, 233 s..
14. Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, Remzi Kitabevi, 2009, 251 s.
15. Ritter L, Sıvaslıan M., Kılıç Artıkları: Türkiyenin Gizli ve Müslümanlaşmış Ermenileri, İstanbul, Hrant Dink Vakfı Yayınları, 2013, 207 s..
16. Sessizliğin Sesi II: Diyarbakırlı Ermeniler Konuşuyorlar (Derleyen: Ferda Balancar), İstanbul, Uluslararası Hrant Dink Vakfı Yayınları, 2012, 201 s..
17. Yeşilyurt S., Geçmişten günümüze Rum ve Ermeni dönmeler, Ankara, Kültür SanatYayınları, 2007, 256 s.

Անգլերեն

1. Lewy G., The Armenian massacres in Ottoman Turkey: a disputed genocide, Salt Lake City, The University of Utan Press, 2005, 329 p..

2. Peroomian R., And Those Who Continued Living in Turkey after 1915: The Metamorphosis of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature, Yerevan, Armenian Genocide Museum-Institute, 2008, 277 p..
3. Sonyel S., Minorities and the Destruction of The Ottoman Empire, Ankara, Turkish historical society printing house, 1993, 537 p..
4. Hofmann T., Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic, Uppsala, FAAE, 2003, 138 p..

Հոդվածներ

Հայերեն

1. Ամատունի Գ., Դարերու ընթացքին թրքացած հայեր, քրտացած հայեր, Նայիրի, Բեյրութ, 15, 05, 1980, թիվ 1-12:
2. Առաքելեան Ս., Իսլամացած հայերու հարցը, Ազդակ (բացառիկ), Բեյրութ, 01,01, 2008, էջ 186-189:
3. Ավագյան Ա., Թուրքական բանակի բարձրաստիճան սպայության էթնիկական կազմի խնդրի շուրջ, Հայկական բանակ, Երևան, թիվ 1, 2007, էջ 38-44:

4. Արծրունի Գ., Մահմետական հայեր, Մշակ, Թիֆլիս, 05,02, 1887:
5. Զուլալյան Մ., «Դեշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1959, թիվ 2-3, էջ 247-256:
6. Թոռլաքյան Բ., Համշենահայեր, Գրական թերթ, Երևան, 24, 05, 1968, թիվ 21 (1432):
7. Թոռլաքյան Բ., Դրվագներ համշենահայերի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1971, թիվ 2 (14), էջ198-203:
8. Թոռլաքյան Բ., Էջեր համշենահայերի XVII-XVIII դարերի պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1972, թիվ 4 (59), էջ 133-136:
9. Խաչատրյան Ա., Հայերի մահմեդականացումը միջնադարյան Հայաստանում (8-15-րդ դդ.), Իրան-նամէ, Երևան, 1993, թիվ 1, էջ 26-27:
10. Խաչիկյան Լ., Էջեր համշինահայ պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1969, թիվ 2, էջ 115-144:
11. Խառատյան Ա., Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIII), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2001, թիվ 1, էջ 25-40:

12. Խառատեան Հ., Ի. Դարի միջնադար (իսլմացուած, իսլմացած, ալեւիացած, ծպտեալ հայերը Թուրքիայում) (Բ.), Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրութ, 2014, հատոր ԼԴ., էջ 465-561:
13. Կիւզէլեան Հ., Այցելութիւն մը էրմենի վարթօ աշիրէթին, Բանբեր հոգեւոր ամսաթերթ, Մարսել, 1969, թիվ 11-12, էջ 242-248:
14. Հայկունի Ս., Կորած ու մոռացուած հայեր, Սեւ գետացիք, Արարատ, Վաղարշապատ, 1895, թիվ Է (7), էջ 239-243:
15. Հյուր Ա., Մալթայի աքսորյալները, Թուրքերը թուրքերի մասին (կազմող և խմբագիր՝ Ռուբեն Մելքոնյան), հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 77-89:
16. Ղլեչյան Վ., Ստրկավաճառությունը Օսմանյան կայսրությունում XIX դարում, Արևելագիտության հարցեր, Երևան, 1987, պրակ 3-4, էջ 107-120:
17. Մանանդյան Հ., Աճառյան Հր., Հայոց նոր վկաները (1155-1843թթ.), Տեր Կարապետ քահանայ թորոսլիցի, Էջմիածին, 1903, էջ 702-709:
18. Մարության Հ., Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում, Տեղեկագիր «Նորա-

վանք» հիմնադրամի, Երևան, 2008, թիվ 22, էջ 110-121:

19. Մելքոնեան Ա., Համշէն. պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր); Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան - Պեյրութ, 2007, էջ 25-37:
20. Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում. ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ, 21-րդ դար, Երևան, 2008, թիվ 1, էջ 107-123:
21. Մելքոնյան Ռ., Հայ երեխաների բռնի իսլամացումը Հայոց ցեղասպանության տարիներին (ըստ թուրքական աղբյուրների), Մերձավոր Արևելք, թիվ 5, Երևան, 2008, էջ 112-116:
22. Մելքոնյան Ռ., Թուրք պատմաբանը իսլամացված հայերի մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, թիվ 3, էջ 96-104:
23. Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ), Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2015, թիվ 2 (199), էջ 61-71:
24. Մսրլեան Զ., Թուրքիոյ հայոց թիւը (1973-2008), Կամար, Պեյրութ, 2008, թիւ 6, էջ 56-62:

25. Յովհաննիսեան Ռ., Համշէնցիները, Պոնտոսը եւ Հայաստանը 1914-1921 թթ., Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան - Պեյրութ, 2007, էջ 38-57:
26. Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, հ. 4, էջ 207-228:
27. Սաֆարյան Ալ., «Օսմանյան մոդելի» քննադատությունը Զիա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում, Իրան-նամէ, Երևան, 2001, թիվ 37, էջ 1-6:
28. Սաֆարյան Ալ., Զիա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, Հայոց Մեծ եղեռն-90, հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 416-431:
29. Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացումների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2009, թիվ 6, էջ 298-304:

30. Սեյլան, Տաճկա-Հայաստանի ազգաբնակութիւնները, Մուրճ, Թիֆլիս, 1895, թիվ 7, էջ 948-961:
31. Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, Իրան-նամէ, Երևան, 1993, թիվ 4, էջ 12-13:
32. Վարդանյան Ս., Նախկին Խորհրդային Միութիւնում բնակուող մահմետական հայերը, Բազմավեպ, Վենետիկ, 1996, թիվ 1-4, էջ 189-200:
33. Վարդանյան Ս., Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, Իրան-նամէ, Երևան, 1998, թիվ 1-2-3, էջ 2-11:
34. Տեր-Ղևոնդյան Ա., Մահմեդական ամիրությունների բացասական դերը միջնադարյան Հայաստանի ճակատագրում, Արևելագիտության հարցեր, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, պրակ 3-4, էջ 130-148:
35. Ունգոր Ու., Կրոնափոխություն և փրկություն. զոյատևման ռազմավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, Երևան, 2008, թիվ 22, էջ 98-109:
36. Փափազյան Ա., Ոչ թուրք ազգերի իրավազուրկ վիճակը Օսմանյան կայսրությունում և թանզիմաթը, Արևելագիտության հարցերը, Երևան, 1983, պրակ 1-2, էջ 91-97:

Ռուսերեն

1. Маркарян С., Георгий XI и кандагарское восстание 1709 г., Восток, Москва, 2009, # 5, стр. 41-45.
2. Ортайлы И., Система миллетов в Османской империи: Особенности формирования и устройства.- Вестник Московского Университета, серия 13, Востоковедение, 3/1995, стр. 66-68.

Թուրքերեն

1. Bali R., 1930 yılında yapılan bir nüfus çalışması ve "dönme listeleri", Toplumsal Tarih, sayı 166, İstanbul, 2007, s. 66-67.
2. Çalışlar O., 1895 ve 1896 Ermeni Katliamları, Agos, 01, 05, 2009.
3. Çetinoğlu S., 1915'te Mesudiye'den yükselen vicdanın sesi, Taraf, İstanbul, 18, 11, 2010.
4. Dadrian V., Genç Türk ittihadcıları gizli konferansı ve I. Dünya savaşı Ermeni soykırımı kararı; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, Belge yayınları, 2005, s. 333-359.
5. Dadrian V., Soykırımın kurbanları çocuklar; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, Belge yayınları, 2005, s. 311-332.

6. Dinç G., Anneannesi, babaannesi, dedesi Ermeni olanlar geçmişle yüzleşiyor. Müslüman Ermeniler anlatıyor, Yeni Aktüel, #116, ekim, 2007, s. 50-54.
7. Dink H, Lokmagözyan D., Sabiha-Hatunun sırrı, Agos, 6, 02, 2004.
8. Dink H.: Ölenlerin değil, kalanların üzerinden konuşalım, Zaman, 26, 11, 2005.
9. Ersoy E., Hemşinli etnik kimliğine antropolojik bir bakış, Birikim, İstanbul, 1999, N. 71-72, s. 139-143.
10. Hür A., 1915, Masonluk ve din değiştirme, Agos, 24, 04, 2009.
11. Konuralp O., Türkiye Ermenilerinin Gizli Kalmış Travması, Hürriyet, 22, 11, 2009.
12. Tashjian V., "Her üç aileden birinde böyle bir olay yaşamış olmalı", Agos, 04, 06, 2010.
13. Türker Y., Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27, 08, 2007.
14. Özbay F., 1911-1922 yıllarında Anadolunun Kimsesiz Kız Çocukları; Savaş Çocukları: Öksüzler ve Yetimler, İstanbul, Umut Kağıtçılık, 2003, s. 105-118.
15. Özçakmak S., Karabekir'in çocukları, Milliyet, 16, 05, 2000.

16. Özgür B., Halaçoğlunun listesi 1935teki "gizli' nüfus sayımdan mı cıktı, Referans, 08, 09, 2007.

Անգլերեն

1. Benninghaus R., Turks and Hemshinli: Manipulating ethnic origins and identity, The Hemshin: history, society and identity in the Highlands of Norteast Turkey, London-New York, Routledge, 2007, p. 353-388.
2. Deringil S., "The Armenian Question Is Finally Closed": Mass Conversion of Armenians in Anatolia during Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies of Society and History, 51 (2), Cambidge, 2009, p. 344-370.
3. Edwards R., Hamšen: an Armenian enclave in the Byzanto-Georgian Pontos. A survey of literary and nonliterary sources, Le Museon: Revue D'etudes Orientales, Louvain-La-Neuve, 1988, tome 101-fasc. 3-4, p. 403-422.
4. Hasluck F.W., The Crypto-Christians of Trebizond, The Journal of Hellenic Studies, New-York, 2010, vol. 41, part 2, p. 199-202.

5. Safaryan A., Ziya Gokalp on National Turkish Education, Iran and the Caucasus, vol.8.2, Brill, Leiden-Boston, 2004, p. 55-66.
6. Simonian H., History and Identity among the Hemshin, ISIM newsletter, Leiden, 14, 06, 2004, p. 24-25.
7. Simonian H., Hemshin from Islamicization to the end of the nineteenth century, The Hemshin: history, society and identity in the Highlands of Norteast Turkey, London-New York, Routledge, 2007, p. 52-99.
8. Tachjian V., Gender, nationalism, exclusion: the reintegration process of female survivors of the Armenian genocide, Natons and Nationalism, n. 15 (1), New-York, 2009, pp. 60-80.
9. Toynbee A., The Ottoman Empire's Place in World History; The Ottoman State and Its Place in World History, ed. By Karpat K., Leiden, E.J. Brill, 1974, p. 15-27.

Էլեկտրոնային հրապարակումներ

1. «Ազատարար Տերսիմցիներ» Ասացուածքը Վե՞րջ Կը Գտնէ, http://www.aztagdaily.com/archives/56053

2. «Դառնալով մեկ ուրիշ... Ցեղասպանությունը և առևանգված հայ կանայք», http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_2.php
3. Ինչպես են թուրքերը բռնի կերպով թլպատել հայերին http://www.tert.am/am/news/2011/05/03/dersim/276231
4. Պարսամյան Ս., Միրզոյան Ա., Ազգերի լիգայի փաստաթղթերն ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը, http://www.genocide-museum.am/arm/gbrief_09.php
5. Dinç G. B., Dersim Ermenileri 2, http://www.dersimnews.com/Dosya/Dersim-Ermenileri-2-1198.htm
6. Hayreni H., 1915'in Denek Taşında Türk ve Kürt Siyaseti (2. Bölüm), http://hyetert.blogspot.com/2012/04/1915in-denek-tasnda-turk-ve-kurt_29.html
7. İlgün S., Yüz yıllık suskunluk kırılıyor, http://www.evrensel.net/haber/70881/yuz-yillik-suskunluk-kiriliyor.html#.Um9_aPlSjX4
8. Parseghian N., "New revelation on the Armenian genocide", www.aztagdaily.com/EnglishSupplement/FEA_02012006_0001.htm

9. Sarıdoğan N., Dersim'in Ermeni kayıp kızı kaybolan yıllarını istiyor, http://www.stargazete.com/politika/dersimin-ermeni-kayip-kizi-kaybolan-yillarini-istiyor/haber-571903

10. http://www.genocide-museum.am/arm/genocide.php

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ ԵՎ ԲՌՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 28

Հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության ձևավորումը և զարգացման հիմնական միտումները 11-17-րդ դարերում 28

Համշենահայերի բռնի իսլամացումը 44

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ 1909 Թ. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 57

Քաղաքական գործընթացները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և հայերի վիճակը 57

Հայերի բռնի իսլամացումը 1894-96 թթ. կոտորածների տարիներին 70

Հայերի բռնի իսլամացումը 1909 թ. Կիլիկիայի կոտորածի ժամանակ 82

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1915-1916 ԹԹ. 90

ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ 1915-1916 ԹԹ. 115

Հայ երեխաների բռնի իսլամացման քաղաքականությունը և կիրառման մեթոդները 115

Հայ կանանց և աղջիկների բռնի իսլամացումը 137

Բռնի իսլամացված հայ կանանց և երեխաների ազատագրման գործընթացը. ներգրավված կազմակերպությունները, անձինք ու մեթոդները....148

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՑԵՂԱՍՊԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 169

1936-1938 թթ. Դերսիմի ցեղասպանությունը. վերապրած հայերը կոտորածի և բռնի իսլամացման թիրախ 170

Հայերի բռնի իսլամացումը Թուրքիայի Հանրապետությունում 1940-1960-ական թվականներին. շարունակման միտումները 183

ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԱՅՍՕՐ. ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐ, ՄԻՏՈՒՄՆԵՐ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 199

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 209

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՄՀԵՐ ԱՐՇԱԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔ

Սրբագրիչ՝ Ա. Վարդանյան
Էջադրող՝ Ա. Վարդանյան

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 15 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300 օրինակ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am